ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԱՀԽԱՐՀ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

7–ՐԴ
ԴԱՍԱՐԱՆ

Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2023

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 373.5:93/94(075.3)
ԳՄԴ 63.3g72
Հ 422

Տպագրվել է ՀՀ ԿԳՄՄ նախարարության պատվերով

Խմբագիրներ՝ ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ

Հեղինակներ՝ ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ, *պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր* (Հին աշխարհի ներածություն, §§1–6)
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ, *պատմագիտության թեկնածու* (Միջին դարերի ներածություն, §§11, 13, 14, 16, 19–23, I և II բաժինների ամփոփումներ)
ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ, *պատմագիտության թեկնածու* (§§7–8)
ԳՈՌ ՄԱՐԳԱՐՅԱՆ, *պատմագիտության թեկնածու* (§§9, 10, 12, 15, 17, 18)

Մեթոդական մասի հեղինակ՝ ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ, *պատմաբան, մանկավարժ* (մեթոդական ապարատ, բառարան)

Հ 422 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 7: ՀԻՆ ԱՇԽԱՐՀ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ: 7–րդ դասարան: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար / Ա. Քոսյան, Ա. Նազարյան, Ռ. Ղազարյան, Գ. Մարգարյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 176 էջ:

ՀՏԴ 373.5:93/94(075.3)
ԳՄԴ 63.3g72

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը կարող եք գտնել շապիկին պատկերված QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.
www.zangak.am/9789939990361
Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը համապատասխան նյութերի անմիջական հղումներն են:

ISBN 978–9939–99–036–1

© Ա. Քոսյան, 2023
© Ա. Նազարյան, 2023
© Ռ. Ղազարյան, 2023
© Գ. Մարգարյան, 2023
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՆԴՂԱԿ 6

ԲԱԺԻՆ 1. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

§1 | ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍ 9
§2 | ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔ 22
§3 | ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 31
§4 | ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ 35
§5 | ՀԻՆ ՉԻՆԱՍՏԱՆ 40
§6 | ԱՔԵՄԵՆՅԱՆ ԻՐԱՆ 44
§7 | ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ 49
§8 | ՀԻՆ ՀՌՈՄ 62
ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 77

ԲԱԺԻՆ 2. ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

§9 | ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 81
§10 | ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ 88
§11 | ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 96
§12 | ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ 105
§13 | ԱՆԳԼԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 113
§14 | ՖՐԱՆՍԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 118
§15 | ԳԵՐՄԱՆԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 124
§16 | «ՄԻՆՉԿՈԼՈՒՄԲՈՍՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ» ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 130
§17 | ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ 138
§18 | ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 143
§19 | ՉԻՆԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 147
§20 | ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 152
§21 | ՃԱՊՈՆԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 157
§22 | ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 162
§23 | ԻՐԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 168
ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 173

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ սովորող, դասագրքի առաջին բաժնում ներկայացված է Հին աշխարհի պատմությունը: Այստեղ դուք կիմանաք, թե ինչպես Հին Արևելքում և Միջերկրական ծովի ավազանի ժողովուրդների նպատակասլաց գործունեության շնորհիվ սկիզբ առան և զարգացան երկրագնդի առաջին քաղաքակրթությունները: Նրանց շատ նվաճումներ ընկել են ժամանակակից աշխարհի պետականության և մշակութային արժեքների հիմքում:

Հին աշխարհի ընդհանուր նկարագիրը: Հին աշխարհի պատմությունը սկսվում է առաջին քաղաքարկթական կենտրոնների ձևավորումից և հասնում է մինչև Ք. հ. V դարը, երբ պատմության ասպարեզից դուրս եկավ Արևմտյան հռոմեական կայսրությունը: Հին քաղաքակրթությունները սկիզբ առան Աֆրիկայի հյուսիս–արևելքում, Առաջավոր Ասիայում, Հնդկաստանում, Չինաստանում, ինչպես նաև Միջերկրական ծովի ավազանում:

Հնագույն պատմության առաջին փուլում նստակյաց տոհմացեղային համայնքների զարգացումը հանգեցրեց առաջին պետությունների ձևավորմանը, որոնք մենք անվանում ենք քաղաք–պետություններ (եգիպտոսում՝ նոմ, Հունաստանում՝ պոլիս): Այդ պետություններում դեռևս պահպանվում էր հասարակության բոլոր անդամների հավասարության սկզբունքը: Հունաստանում քաղաք–պետությունները գոյատևեցին երկար դարեր, այնինչ Արևելքի երկրներում դրանց հետագա զարգացումը հանգեցրեց խոշոր պետությունների՝ տերությունների և միապետական կառավարման համակարգի ստեղծման: Ստեղծվեց ճյուղավորված վարչական ապարատ, բնակչության գույքային և սոցիալական շերտավորումը խորացավ և հանգեցրեց հասարակության ներսում փոքրաքանակ իշխող խավի ձևավորմանը:

Հին Արևելքի ժողովուրդները ստեղծեցին քաղաքակրթական խոշոր արժեքներ՝ գրային համակարգեր (սեպագիր, հիերոգլիֆային գիր, այբբենական գիր), կոթողային ճարտարապետություն, աստվածների կանոնակարգված պաշտամունք (դիցարան): Նրանք մեծ նվաճումների հասան բնական գիտությունների ասպարեզում (մաթեմատիկա, ֆիզիկա, աստղագիտություն, բժշկագիտություն և այլն): Այդ նվաճումները հետագայում փոխ առան հույները և ավելի զարգացրին:

Հին քաղաքակրթությունների պատմության հաջորդ փուլը անտիկ պատմությունն է՝ Հունաստանը և Հռոմը: Հունական պոլիսային աշխարհում ձևավորվեց այն քաղաքական համակարգը, որն այսօր հայտնի է որպես ժողովրդավարություն (դեմոկրատիա): Հույները և հռոմեացիները ժամանակակից քաղաքակիրթ աշխարհին տվեցին պետական կառավարման, բնական և հասարակական գիտությունների ամենատարբեր բնագավառների կանոնակարգված սահմանումները (փիլիսոփայություն, մաթեմատիկա, ֆիզիկա, բժշկագիտության առանձին ուղղություններ, պատմագիտություն, իրավագիտություն և այլն): Այդ արժեքները հետագայում հռոմեացիներից վերցրին Եվրոպայի ժողովուրդները և հասցրին մինչև մեր օրերը:

1. *Համաշխարհային պատմության ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում Հին աշխարհի պատմությունը:*
2. *Ի՞նչ փուլերի է բաժանվում Հին աշխարհի պատմությունը: Փորձի՛ր ներկայացնել այդ փուլերը բնութագրող հիմնական կողմերը:*
3. *Քաղաքակրթական ի՞նչ արժեքներ են ստեղծվել մարդկության պատմության այս շրջանում:*

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասագրքի երկրորդ բաժնում ներկայացված է միջին դարերի պատմությունը: Դուք կուսումնասիրեք հետաքրքիր և արժեքավոր շատ երևույթներ ու իրադարձություններ: Կծանոթանաք նշանավոր անհատների և նրանց գործունեությանը, որոնք խոր հետք են թողել մարդկության պատմության մեջ:

Միջնադարի ընդհանուր նկարագիրը: Միջնադարը հաջորդում է Հին աշխարհի պատմությանը: Այն ընդգրկում է **V դարի վերջերից մինչև XVII դարի սկիզբն ընկած ժամանակահատվածը:**

Միջնադարի հասարակությունը անվանում են նաև **ավատատիրական հասարակություն:** Տնտեսության մեջ գերիշխող էր դարձել հողի մասնավոր սեփականությունը, իսկ **մասնավոր հողատարածքը կոչվում էր ավատ:** Այստեղից էլ **ավատատեր** անվանումը:

Արևելքի և Ամերիկայի երկրների զգալի մասը միջնադար էր մուտք գործել զարգացման բարձր մակարդակով, սակայն միջնադարի ավարտին նրանք զգալիորեն զիջում էին Եվրոպայի առաջատար երկրներին:

Միջին դարերի պատմությունը ընդունված է բաժանել **երեք գլխավոր փուլերի՝ վաղ, զարգացած** և **ուշ միջնադար:**

Վաղ միջնադար: Սովորաբար Եվրոպայի պատմության միջնադարի սկիզբ է համարվում Արևմտյան հռոմեական կայսրության կործանումը **(476 թ.):** Եվրոպայի ժողովուրդների մոտ անցումը հին աշխարհից միջնադարին տեղի է ունեցել ոչ միաժամանակ:

Արևելքի երկրներում այդ անցումը տեղի է ունեցել V դարից առաջ կամ հետո: Հայաստանի պատմության միջնադարյան շրջանը սկսվում է IV դարի սկզբից (դրա մասին կիմանաք *Հայոց պատմությունից*):

Զարգացած միջնադար: Այս փուլում՝ X–XIV դարեր, զարգացան գյուղատնտեսությունը, արհեստները և առևտուրը: Արհեստների և առևտրի վերելքը նպաստեց քաղաքների աճին:

Ձևավորվեցին ավատատիրական հասարակության **երեք գլխավոր դասերը՝ ավատատերեր, գյուղացիներ** և **հոգևորականներ:** Քաղաքների աճի արդյունքում ձևավորվեց նաև չորրորդ՝ **քաղաքացիների դասը:**

Ուշ միջնադար: XIV դարի երկրորդ կեսը և XV դարը Եվրոպայի համար ճգնաժամային էին: Անկում ապրող միջնադարյան հասարակության ներսում, սակայն, աստիճանաբար **ծնունդ էին առնում նոր՝ արդյունաբերական հասարակության** սաղմերը: Եվրոպայում միջնադարի ավարտ է համարվում XVII դարի սկիզբը:

1. Համաշխարհային պատմության ո՞ր շրջանն է ընդգրկում միջնադարը:

2. Քանի՞ փուլի է բաժանվում միջին դարերի պատմությունը: Փորձե՛ք ներկայացնել այդ փուլերը բնութագրող հիմնական կողմերը:

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Ք ր

4000–3901 | 3900–3801 | 3800–3701 | 3700–3601 | 3600–3501 | 3500–3401 | 3400–3301 | 3300–3201 | 3200–3101 | 3100–3001 | 3000–2901 | 2900–2801 | 2800–2701 | 2700–2601 | 2600–2501 | 2500–2401 | 2400–2301 | 2300–2201 | 2200–2101 | 2100–2001 | 2000–1901 | 1900–1801 | 1800–1701 | 1700–1601 | 1600–1501 | 1500–1401 | 1400–1301 | 1300–1201 | 1200–1101 | 1100–1001 | 1000–901 | 900

XXXX | XXXIX | XXXVIII | XXXVII | XXXVI | XXXV | XXXIV | XXXIII | XXXII | XXXI | XXX | XXIX | XXVIII | XXVII | XXVI | XXV | XXIV | XXIII | XXII | XXI | XX | XIX | XVIII | XVII | XVI | XV | XIV | XIII | XII | XI | X | IX

Չորրորդ հազարամյակ | Երրորդ հազարամյակ | Երկրորդ հազարամյակ | Ա

Հին Եգիպտոս

Շումեր | Աքքադ | Բաբելոն

Ասորեստան

Միտաննի

Հեթական պետություն

Արապտպա | Արմանի, Սուբուր | Հայասա



Զիկկուրատ

Շումերական գրի զարգացումը



Քեոփսի բուրգը (մոտ. 2600)

(XXIII) Սարգոն Աքքադացի

Եգիպտական հիերոգլիֆային գիրը (մոտ. 3100)

Համմուրապիի օրենսգիրքը (1750)

Փարավոն Էխնաթոն (XIV)

Ռամզես II (XIII)

Հռոմի հիմնա (753)

Պարթ Աթենք (432)


իսպոսից առաջ
1թ.
Քրիստոսից հետո
800–701
700–601
600–501
500–401
400–301
300–201
200–101
100–1
1–100
101–200
201–300
301–400
401–500
501–600
601–700
701–800
801–900
901–1000
1001–1100
1101–1200
1201–1300
1301–1400
1401–1500
1501–1600
1601–1700
1701–1800
1801–1900
1901–2000
2001–2100
VIII VII VI V IV III II I
ԴԱՐԸ
I II III IV V VI VII VIII IX X XI XII XIII XIV XV XVI XVII XVIII XIX XX XXI
աջին հազարամյակ
Առաջին հազարամյակ
Երկրորդ հազարամյակ
Հունաստան
Հռոմ (Իտալիա)
1
2
3
Չինաստան
Հնդկաստան
4
5
6
7
Հայաստան
ադրումը
Ալեքսանդր Մակեդոնացի (336-323)
Հիսուս Քրիստոսի ծնունդը
Կոլիզեում (80)
Հռոմեական կայսրության ծաղկման շրջանը
Կոստանդիանոս Մեծ
(330)
Կոստանդնու-պոլսի հիմնադրումը
Արևմտյան Հռոմեական կայսրության կործանումը. 476 թ. Հին աշխարհի պատմության ավարտը
Ծանոթություն–թվերով տրված պետությունները.
1 Աքեմենյան Իրան
2 Պարթևական տերություն
3 Սասանյան Իրան
4 Վանի թագավորություն
5 Երվանդունիների թագավորություն
6 Արտաշեսյանների թագավորություն
7 Արշակունիների թագավորություն

ԲԱԺԻՆ 1

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

§1 | ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Պետություն — Որոշակի տարածքում ապրող մարդկային հանրության կյանքի կազմակերպման և կառավարման քաղաքական համակարգ: Պետության գոյության համար անհրաժեշտ են պետական ապարատ, բանակ, օրենքներ և դրանց կիրառումը հսկող մարմիններ:

Քաղաքակրթություն — Մարդկության զարգացման որոշակի մակարդակ: Քաղաքակրթության կարևոր բաղադրիչներ են պետականությունը, գիրը, նյութական, հոգևոր և սոցիալական արժեքների առկայությունը:

Հիերոգլիֆ — Գրի հնագույն տեսակ՝ գաղափարագիր: Առաջացել է Եգիպտոսում Ք. ա. IV հազարամյակի վերջին:

Բուրգ — Այդպես են կոչվում Եգիպտոսի փարավոնների համար կառուցված դամբարանները:

Փարավոն — Բառացի նշանակում է մեծ տան՝ պալատի տեր: Եգիպտացիներն այդպես էին կոչում արքային:

Մումիա — Հատուկ նյութերով զմռսելու՝ մշակելու միջոցով պահպանված դիակ:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Հին Եգիպտոս — Աշխարհի առաջին պետություններից է: Հին Եգիպտոսի տարածքում այսօր Եգիպտոսի Արաբական Հանրապետությունն է:

Առաջավոր Ասիա — Աշխարհագրական տարածք Ասիա աշխարհամասի արևմուտքում: Ընդգրկում է Սև, Միջերկրական, Կասպից ծովերի և Պարսից ծոցի միջև ընկած շրջանները, այդ թվում՝ Հայաստանը:

Ասորիք — Ներկայիս Սիրիայի տարածքը՝ ըստ հայկական աղբյուրների:

Նեղոս — Գետ Աֆրիկայում:

Մինա — Միացյալ Եգիպտոսի առաջին արքան:

Մեմֆիս — Հին Եգիպտոսի առաջին մայրաքաղաքը:

Թութմոս III — Հին Եգիպտոսի փարավոններից: Գահակալել է Ք.ա. 1467–1413թթ.:

Ռամզես II — Հին Եգիպտոսի փարավոններից: Գահակալել է Ք.ա. 1279–1213թթ.:

Հերոդոտոս — Հույն նշանավոր պատմագիր: Ապրել է Ք. ա. V դարում:

Հոր — Եգիպտական գլխավոր աստվածներից մեկը՝ փարավոնների հովանավոր աստվածը:

ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Պատճառահետևանքային կապեր

Պատմական երևույթներն ու իրադարձություններն ունեն իրենց պատճառներն ու հետևանքները: Դասանյութն ընթերցելիս ուշադրությո՛ւն դարձրու տվյալ պատմական երևույթի կամ իրադարձության պատճառներին ու հետևանքներին: Դրանք ավելի հասկանալի կդարձնեն այդ երևույթը կամ իրադարձությունը և դրա պատմական նշանակությունը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ի՞նչ է քաղաքակրթությունը:
2. Ինչո՞ւ է կարևոր հնագույն քաղաքակրթությունների պատմության ուսումնասիրությունը:

Հին Եգիպտոսը

Հին Եգիպտոսը քաղաքակրթության հնագույն կենտրոններից էր: Հազարամյակների ընթացքում հին եգիպտացիները կարողացան իրենց երկրի աշխարհագրական և կլիմայական անբարենպաստ պայմաններում ստեղծել կենտրոնացված ուժեղ պետություն և մնայուն քաղաքակրթական արժեքներ: Այդ արժեքները հետագայում փոխանցվեցին մյուս ժողովուրդներին և ներկայումս էլ շարունակում են ծառայել մարդկությանը գիտության, նյութական և հոգևոր մշակույթի և այլ բնագավառներում:

«Եգիպտոսը Նեղոսի պարգևն է»

Մինչև Ք. ա. V հազարամյակի կեսերը Աֆրիկայի հյուսիս–արևելքը ոչնչով աչքի չէր ընկնում: Իսկ Առաջավոր Ասիայում դեռ դրանից հինգ հազար տարի առաջ արդեն սկսվել էր **Նեոլիթյան հեղափոխությունը**: Եգիպտոսի տարածքում ապրող փոքրաքանակ մարդկային խմբերը իրենց գոյությունն ապահովում էին ձկնորսությամբ և անասնապահությամբ:

Ք. ա. VII–VI հազ. Հյուսիսային Աֆրիկայում՝ Սահարայի անապատում, հաստատվեց խիստ չորային կլիմա, որի պատճառով բնակչությունը սկսեց տեղափոխվել արևելք:

Եգիպտոս

Դեղինով նշված են մշակելի հողատարածքները: Եգիպտոսի արևելքում ջրի միակ աղբյուրը Նեղոսն է՝ աշխարհի ամենաերկար գետը (6700 կմ):

Վերջին տողերում բերված տեղեկույթից և քարտեզից օգտվելով՝ փորձի՛ր բացահայտել այն բնական պատճառները, որոնց հետևանքով Հյուսիսային Աֆրիկայի բնակչությունը սկսեց տեղափոխվել դեպի արևելք: Քո կարծիքով ի՞նչ հետևանքներ կարող էին ունենալ այդ տեղաշարժերը:

Նեղոսի ամենամյա վարարումները ողողում էին գետի երկու ափերի հողատարածքները: Նեղոսի վարարումները կայուն չէին: Ջրի մակարդակը երբեմն կարող էր բարձրանալ մինչև 8 մետր, երբեմն էլ կարող էր այնքան նվազել, որ իսկական աղետ դառնար բնակչության համար: Մարդիկ իրենց պահանջմունքները բավարարելու համար պետք է զբաղվեին երկրագործությամբ: Դրա համար անհրաժեշտ էր կառավարել Նեղոսի մակարդակի տատանումները, այլապես բնակավայրերը և մշակովի հողերը կա՛մ կմնային առանց ջրի, կա՛մ կանցնեին ջրի տակ: Հին եգիպտացիները կարողացան կառավարել, անգամ այդ տատանումները ծառայեցնել իրենց նպատակներին:

Պատմական քո գիտելիքներից և դասանյութի տվյալներից ելնելով՝ փորձի՛ր մեկնաբանել, թե որոնք էին Եգիպտոսում պետության ձևավորման հիմնական նախադրյալները:

Ջրանցքների, ամբարտակների կառուցումը, ոռոգման լայն ցանցի ստեղծումը հնարավոր էր իրականացնել միայն երկրի ողջ բնակչության համատեղ և կազմակերպված աշխատանքի շնորհիվ: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ուժեղ կառավարման համակարգ, որը կարող էր ապահովել պետությունը: Ք. ա. IV հազ. կեսերից Եգիպտոսում սկսեցին ձևավորվել առաջին պետությունները: Նույն հազարամյակի վերջերին դրանք միավորվեցին, և ստեղծվեց առաջին միասնական պետությունը: Այդ պետության առաջին արքան **Մինան** էր, իսկ մայրաքաղաքը՝ **Մեմֆիսը:**

Փորձի՛ր կանխատեսել, թե մարդիկ ինչպես կարող էին կառավարել Նեղոսի ջրի մակարդակի տատանումները և դրանք ծառայեցնել իրենց նպատակներին:

Եգիպտացի քրմերն ամեն տարի արձանագրում էին Նեղոսի մակարդակի բարձրացումները: Դա եղանակի մասին գիտական կանխատեսումներ անելու առաջին քայլերն էին: Այդպես նրանք կանխատեսում էին նաև սպասվող բերքի քանակը: Եգիպտացիները մեծ ձեռքբերումներ ունեին օրացույցի և աստղագիտության բնագավառներում: Նրանք հետևում էին երկնային մարմինների շարժմանը, տարին բաժանում էին երեք մասի: Եգիպտական տարին ուներ 3 երկրագործական եղանակ՝ *Նեղոսի վարարում*, *ցանքս և բերքահավաք*: Նոր տարվա սկիզբը հուլիսի կեսն էր, երբ Նեղոսի մակարդակը սկսում էր բարձրանալ: Դեկտեմբեր–հունվարին ցանքսի շրջանն էր, իսկ մայիսից սկսվում էր բերքահավաքը:

Հողի մակերեսի և Նեղոսի ջրի ծավալի չափման, երկրագործության և այլ ոլորտներում իրականացվող աշխատանքների կազմակերպմամբ ծնունդ առավ և զարգացավ մաթեմատիկական գիտությունը:

Փորձի՛ր կանխատեսել, թե ինչ հետևանքներ կունենային Նեղոսի ամենամյա տատանումները, եթե եգիպտացիները չկարողանային օգտագործել դրանք:

Եգիպտոսի վերելքը

Եգիպտոսի հզորացման հիմնական պատճառը միասնական ոռոգման համակարգի ստեղծումն էր: Նեղոսի ափամերձ բոլոր տարածքներում գործող ոռոգողական կառույցները՝ ջրանցքներն ու ամբարտակները, կապեցին մեկը մյուսի հետ: Դա թույլ տվեց օգտագործել ոռոգելի բոլոր հողերը և ստանալ մեծ քանակությամբ բերք: Այդ էր պատճառը, որ երկրի միավորումից որոշ ժամանակ անց Եգիպտոսն այնքան հզորացավ, որ սկսեց տարածքներ նվաճել հյուսիսում և հարավում: Արշավանքների նպատակը օգտակար հանածոներ, նյութական այլ բարիքներ (անտառանյութ, կենդանիներ) և ստրուկներ ձեռք բերելն էր:

Փորձի՛ր վերլուծել. ո՞ր քաղաքականությունն է ճիշտ և եկամտաբեր՝ նվաճված երկրներից ռազմավարի ձեռքբերո՞ւմը, թե՞ ամենամյա հարկի հավաքումը:

Ք. ա. XXVIII դարում Եգիպտոսը վերածվեց կենտրոնացված խոշոր պետության: Թագավորի իշխանությունը դարձավ անսահմանափակ. նա էր կայացնում ներքին ու արտաքին կյանքին վերաբերող բոլոր որոշումները: Թագավորին անվանում էին **փարավոն**, որի անձն աստվածացվում էր:

Եգիպտացիների առօրյա կյանքը՝ ծննդյան պահից մինչև մահ, ամբողջովին ներծծված էր կրոնական պատկերացումներով: Նրանք երկրպագում էին շուրջ հազար աստվածների: Փարավոնը համարվում էր գերագույն աստծո որդի **Հորի** երկրային մարմնավորումը: Կենդանության օրոք և մահից հետո նրան երկրպագում էին որպես աստված: Փարավոնների համար կառուցվում էին վիթխարի դամբարաններ և հետմահու տաճարներ՝ ցուցադրելու համար նրանց աստվածային բնույթը և բացառիկ հզորությունը:

Ք. ա. XV դարում եգիպտական թագավորությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Փարավոն **Թութմոս III–ը** գրավեց Ասորիքը և հասավ մինչև Հայկական Տավրոսի լեռները: Այդ ժամանակ Եգիպտոսի տարածքը հյուսիսից հարավ ձգվում էր շուրջ 3200 կմ:

Ամոն աստծո տաճարը Կառնակում:

Այն բաղկացած է պարսպով շրջապատված չորս խոշոր և պարսպից դուրս կառուցված բազմաթիվ փոքր տաճարներից՝ 20 000 մ² ընդհանուր մակերեսով: Տաճարի պունազարդ մեծ սրահն ունի մի քանի մակարդակ՝ մինչև 21 մ բարձրությամբ 134 հսկայական պուններով: Այստեղ կանգնեցված երկու կոթողներն ունեն 30 մ բարձրություն, յուրաքանչյուրը՝ շուրջ 1000 տոննա զանգվածով:

Հոր, արևի աստվածը հին եգիպտական դիցարանում: Համարվել է իբրև փարավոնների իշխանության հովանավոր:



Թութմոս III (բնօրինակ, պահվում է Եգիպտոսում՝ Լուքսորի թանգարանում)

Նախկինում եգիպտացիները արշավանքներից հետո իրենց հետ միայն ռազմավար և ստրուկներ էին տանում: Իսկ Թութմոս III–ը նվաճված երկրներում նշանակեց կառավարիչներ, որոնք հավաքում և եգիպտոս էին ուղարկում ամենամյա հարկը: Այդ քաղաքականությունը, որը շարունակվեց նաև հետագայում, թույլ տվեց հարստացնելու պետական գանձարանը:

Եգիպտոսում կարևոր դեր ուներ տնտեսության կառավարման և պետական ապարատի արդյունավետ գործունեության ապահովման համար մասնագետ կադրերի պատրաստումը: Տաճարներում գործում էին դպրոցներ, որտեղ սովորեցնում էին գրել–կարդալ, նաև ժամանակի հայտնի բոլոր գիտական գիտելիքները:

Գրագիրները կարողանում էին գրել, կարդալ, կազմել տեղանքի քարտեզներ, կատարել մաթեմատիկական հաշվարկներ հարկերի հավաքման, ծախսերի և եկամուտների վերաբերյալ, կազմել պաշտոնական գրություններ, հրովարտակներ, տարեգրություններ:

Եգիպտական գրի նմուշ

Եգիպտական հիերոգլիֆային գիրը ստեղծվել է Ք.ա. IV հազ. վերջերին: Այն բաղկացած էր շուրջ 700 նշաններից: Յուրաքանչյուր նշան արտահայտում էր որևէ բառ կամ բառակապակցություն:

Հատված եգիպտական պապիրուսի տեքստից.

«Գրչի աշխատանքը ամենալավն է: Գոյություն չունի որևէ աշխատանք առանց ղեկավարի, բացառությամբ գրիչը. նա ինքն է ղեկավարում: Գրիչը հարկեր չի վճարում, ռազմական ծառայություն կամ ձեռքի աշխատանք չի կատարում»:

Մաթեմատիկան և բժշկությունը

Մաթեմատիկան անհրաժեշտ էր հողի մակերեսի, Նեղոսի ջրի ծավալի և փոփոխությունների հաշվարկման, երկրագործության և այլ ոլորտներում իրականացվող աշխատանքների կազմակերպման համար: Մաթեմատիկայի զարգացմանը նպաստեց կոթողային ճարտարապետությունը: Այդպիսի շինությունների կառուցումը պահանջում էր բարդ հաշվարկներ:

Եգիպտացիներին հայտնի էին թվաբանությունը, հանրահաշիվը, երկրաչափությունը, եռանկյունաչափությունը: Մաթեմատիկոսները կազմում էին զանազան խնդիրներ պարունակող հանրահաշվական տեքստեր: Եգիպտոսում առաջինը օգտագործվեց

հաշվարկի տասնորդական համակարգը, կիրառվեց կոտորակը:

Եգիպտական բժշկագիտությունը հասել էր իր զարգացման բարձունքներին, որը պայմանավորված էր բնակչության վրա Նեղոսի ափերի ճահճուտների և շրջակա անապատի անբարենպաստ ազդեցության հետևանքների դեմ պայքարով: Բուժվում էին հաճախակի հանդիպող ամենատարբեր հիվանդություններ: Եգիպտացի բժիշկները կատարում էին ներքին օրգանների բարդ վիրահատություններ, բուժում էին բազմաթիվ վարակիչ հիվանդություններ: Պահպանվել են Ք.ա. III–I հազ. գրված բժշկագիտական ձեռնարկներ, որտեղ ներկայացված են բազմաթիվ հիվանդությունների բուժման դեղատոմսեր: Այդպիսի ձեռնարկներից մեկում նկարագրվում են շուրջ 260 հիվանդություններ և դրանց բուժման եղանակները: Քաղաքներում կային «Կյանքի տներ» (ներկայիս հիվանդանոցները):

Պահպանվել են վիրահատական գործիքներ, իսկ որոշ բարձրաքանդակներ և պապիրուսներ պատկերում են վիրահատական գործողություններ: Բժշկության մեջ օգտագործում էին բուսական ծագման տարբեր դեղամիջոցներ:

Եգիպտացիները քաջածանոթ էին մարդու մարմնի ներքին կառուցվածքին, ինչին նրանք հասել էին մարդու և կենդանիների մարմինների զմռսման (մումիացման) շնորհիվ: Բժշկագիտական գրվածքներում միայն անատոմիային վերաբերող տերմինների թիվն անցնում էր 200–ից:

Ներկայիս բժշկությունը ի՞նչ կարող է ժառանգած լինել հին եգիպտական բժշկությունից:

Եգիպտական մշակույթի գլխավոր առանձնահատկություններից է դրա ընդգծված պահպանողականությունը: Կառույցների, գործիքների և տարբեր իրերի ձևերը սովորաբար պահպանվում էին, ուղղակի ժամանակի ընթացքում դրանց առանձին դետալները շարունակաբար հղկվում և կատարելագործվում էին:



Ակնաբույժի աշխատանքը ներկայացնող որմնանկար դամբարանների պատերից մեկի վրա վրա. Ք. ա. XIII դար:



Մերիտ –Պտահ

Պատմության մեջ հայտնի առաջին կին բժիշկը (Ք.ա. XXVIII դար), հայտնի է որպես բժշկապետ:



Վիրաբուժության դասագիրք՝ գրված պապիրուսի վրա.

Էդվին Սմիթի պապիրուսը պահվում է Նյու Յորքի բժշկական ակադեմիայի գրադարանում



Ռամզես II (ընօրինակ, պահվում է Իտալիայի Թուրին քաղաքի եգիպտագիտական թանգարանում)



Հավերժական բարեկամության պայմանագրի խեթերեն տարբերակը:

Խեթա–եգիպտական բարեկամության պայմանագրի խեթերեն տարբերակի պատճենը ներկայումս փորագրված է Նյու Յորքում գտնվող Միավորված ազգերի կազմակերպության նստավայրի պատերից մեկին: Ընօրինակը Ստամբուլի Հնագիտական թանգարանում է:

Հավերժական բարեկամության պայմանագիրը

Քրիստոսից առաջ XV–XIII դարերում Եգիպտոսը և Փոքր Ասիայում գտնվող հզոր Խեթական տերությունը թշնամիներ էին: Նրանք պայքարում էին Ասորիքի համար: Սակայն կողմերից ոչ մեկը վճռական հաջողության չհասավ: **Քրիստոսից առաջ 1258 թվականին** Ռամզես II–ը և խեթական արքան կնքեցին **Հավերժական բարեկամության** պայմանագիր: Երկու պետությունների միջև հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ: Պայմանագիրն ամրապնդվեց Ռամզեսի և խեթերի արքայադստեր ամուսնությամբ:

Կողմերից ոչ մեկը չպետք է միջամտեր մյուսի ներքին գործերին: Բացի այդ՝ արտաքին սպառնալիքի դեպքում նրանք պարտավորվում էին օգնել մեկը մյուսին:

Պայմանագրի շնորհիվ Ռամզեսն ապահովեց իր տերության հյուսիսային սահմանները և սկսեց զբաղվել երկրի տնտեսության զարգացման գործով: Նա դելտայի հյուսիս–արևելքում փորել տվեց ջրանցքներ, որոնց շնորհիվ հազարավոր հեկտար հողատարածքներ դարձան մշակելի:

Բերված սկզբնաղբյուր–արձանագրության մեկնությունից օգտվելով՝ փորձի՛ր հիմնավորել «Այսուհետև երկու պետությունների միջև ծագող բոլոր վիճելի հարցերը պետք է լուծվեին միայն խաղաղ բանակցությունների միջոցով» պնդումը:

Եգիպտական պետության մայրամուտը

Քրիստոսից առաջ I հազարամյակի սկզբներին Եգիպտոսի թագավորությունը աստիճանաբար թուլացավ և պարբերաբար ենթարկվում էր իր հարևանների հարձակումներին: Դրա հետևանքով քայքայվեց երկրի տնտեսության հիմքը կազմող ոռոգման համակարգը, և վերացավ միասնական պետականությունը: Երկրի տարբեր շրջաններում կային փոքր ինքնուրույն պետություններ: Օգտվելով դրանից՝ Եգիպտոսը գրավեցին նախ

ասորեստանցիները, ապա Ք. ա. 525 թ.՝ պարսիկները: Իսկ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո Եգիպտոսում ստեղծվեց նոր թագավորություն: Ք. ա. 31 թ. Հռոմը նվաճեց Եգիպտոսը և այն դարձրեց հռոմեական պրովինցիա:

Հին Եգիպտոսի քաղաքակրթական արժեքների դերը

Հին Եգիպտոսում ստեղծված պետական կառավարման համակարգը, գիտության և մշակույթի շատ արժեքներ փոխառեցին հույները և հռոմեացիները:

Եգիպտական Ճարտարապետության գլուխգործոցը դրա կոթողայնությունն է: Նրանց կառուցած տաճարներն աչքի էին ընկնում վիթխարի չափերով: Եգիպտական կոթողային ճարտարապետության ազդեցությունը չափազանց մեծ է հունա-հռոմեական աշխարհի վրա:

Եգիպտոսում զարգացած բնական գիտությունները՝ մաթեմատիկան, աստղագիտությունը և այլն, ընկան հունական գիտության հիմքում, ապա խորացվելով՝ հետագայում փոխանցվեցին Եվրոպա:

Հերոդոտոսը գրում է.

«Բժկագիտությունը նրանց մոտ գարբերակված էր: Յուրաքանչյուր բժիշկ բուժում էր միայն մեկ հիվանդություն, ոչ թե մի քանի: Ամբողջ երկիրը լցված էր բժիշկներով: Ոմանք ակնաբույժ են, մյուսները՝ ատամնաբույժ, ոմանք՝ գլխացավի բժիշկ, մյուսները՝ որովայնի, ոմանք էլ՝ ներքին հիվանդությունների»:

Որմնանկար Նախտի դամբարանից

Մեծ է նաև եգիպտական բժշկության ազդեցությունը հետագայի բժշկագիտության վրա: Եգիպտացիներն առաջինն էին, որ ստեղծեցին մասնագիտացված բժշկական համակարգ: Յուրաքանչյուր բժիշկ մասնագիտանում էր որևէ հիվանդության ասպարեզում: Եգիպտացի բժիշկների սահմանած՝ մարդու անհատական հիգիենայի նորմերն այսօր էլ գոյատևում են քաղաքակիրթ աշխարհում:

Եվ այս ամենը, դարեդար փոխանցվելով, հասել է մինչև մեր օրերը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Ինչո՞ւ են պետությունները ձգտում ընդարձակելու իրենց տարածքները: Քո նշած պատճառներից ո՞րն է համընկնում եգիպտոսի նվաճողական քաղաքականությանը:*
2. *Մտածի՛ր, թե ինչը կարող է օգնել պետություններին ընդարձակվելու և զարգանալու:*
3. *Նշի՛ր Հին եգիպտոսում տեղի ունեցած երեք կարևոր պատմական իրադարձություն և լրացրո՛ւ աղյուսակը.*

Իրադարձության պատճառները	Պատմական իրադարձությունը	Իրադարձության հետևանքները

4. *Հույն պատմիչ Հերոդոտոսը եգիպտոսն անվանում էր «Նեղոսի պարգև»: Եգիպտացիներից շատերը ցանկանում էին ապրել Նեղոսի ափին: Մտածի՛ր և լրացրո՛ւ հետևյալ գծապատկերները և համեմատելով դրանք՝ հիմնավորի՛ր Հերոդոտոսի միտքը:*





5. *Ի՞նչ պատմական հետևանքներ ունեցավ Հյուսիսային Աֆրիկայի բնակչության տեղափոխվելը դեպի արևելք:*
6. *Տեքստի ո՞ր մասին է համապատասխանում «Մարդկանց մեծ կուտակումը պահանջում էր գոյության կայուն միջոցներ» միտքը:*
7. *Մեկնաբանի՛ր դասանյութում բերված այս համեմատությունը. «Մինչև Ք. ա. V հազ. վերջերը Աֆրիկայի հյուսիս–արևելքը ոչնչով աչքի չէր ընկնում: Իսկ Առաջավոր Ասիայում դեռ դրանից հինգ հազար տարի առաջ արդեն սկսվել էր Նեոլիթյան հեղափոխությունը»:*
8. *Մեկնաբանի՛ր «քաղաքակրթություն» բառի քո ընկալումը:*
9. *Փաստարկներով հիմնավորի՛ր, թե Հին եգիպտական քաղաքակրթությունից ինչ կարելի է փոխառել.*
   - *Ոչ նպաստավոր պայմաններից առավելագույն օգուտներ քաղելու փորձը:*
   - *Շրջակա միջավայրի առաջադրած մարտահրավերներին դիմագրավելը և դրանք կառավարելի դարձնելը:*
   - *Այլ տարբերակներ:*

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

Ժամանակ և տարածություն

1. *Դասարանով բաժանվե՛ք խմբերի և տարբեր աղբյուրներ ուսումնասիրելով՝ ներկայացրե՛ք հետևյալ թեմաներից որևէ մեկը.*
   - *Հին եգիպտոսի ճարտարապետությունը և դրա նշանակությունը ներկայիս եգիպտոսի Հանրապետության համար:*
   - *Նեղոսի մակարդակի տատանումները և եգիպտական գիտության զարգացումը:*
   - *Հին եգիպտոսի բժշկությունը և դրա նվաճումները:*
2. *Եգիպտացիները առևտուր էին անում Աֆրիկայի տարբեր ցեղերի, Միջերկրականի և Փոքր Ասիայի ժողովուրդների հետ: Ի՞նչ հանգամանքներ էին նպաստում առևտրի զարգացմանը Հին եգիպտոսում: Հետազոտի՛ր, վերլուծի՛ր և քո տեսակետով կիսվի՛ր ընկերոջդ հետ:*

Համակարգ և կառուցվածք

4. *Ստորև տրված է Հին Եգիպտոսի հասարակության սոցիալական կառուցվածքը: Ուսումնասիրի՛ր ստորև տրված գծապատկերը: Այժմ կազմի՛ր արդի հայ հասարակության գծապատկերը. մտածի՛ր՝ երկրաչափական ինչ պատկերի տեսքով այն կարող ես ներկայացնել: Հիմնավորի՛ր, թե ինչու:*



Եգիպտոսի հասարակության ապրիմանակարգը

Վերևից ներքև՝

1. *Փարավոն,*
2. *Պաշտոնյաներ, ազնվականներ, հոգևորականներ*
3. *Զինվորներ,*
4. *Գրագիրներ,*
5. *Վաճառականներ*
6. *Արհեստավորներ,*
7. *Երկրագործներ և ստրուկներ*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Օգտվելով տարբեր աղբյուրներից, նաև Հին եգիպտական քաղաքակրթության օրինակով նախապատրաստի՛ր փոքրիկ ելույթ՝ «Հավաքական ու համակարգված աշխատանքի պտուղները» թեմայով, և ներկայացրո՛ւ դասարանին:*

   Քո նպատակը պետք է լինի դասարանին համոզելը, որ մարդկանց հավաքական ու համակարգված աշխատանքի արդյունքում անգամ բնության քմահաճույքները կարելի է ծառայեցնել մարդու շահերին:

2. Օգտագործելով 5 հարցականների մոտեցումը՝ գրավոր խոսքով ամփոփի՛ր Հին Եգիպտոսի վերաբերյալ քո ստացած գիտելիքները:
   - Ի՞նչ պատմական իրադարձություններ են տեղի ունեցել Հին Եգիպտոսում:
   - Ե՞րբ են այդ իրադարձությունները տեղի ունեցել:
   - Ովքե՞ր են եղել այդ իրադարձությունների մասնակիցները:
   - Ո՞ր իրադարձությունն է ամենաշատը գրավել քո ուշադրությունը:
   - Ինչո՞ւ է հենց այդ իրադարձությունը գրավել քո ուշադրությունը:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. Մի քանի նախադասությամբ նկարագրի՛ր Հին եգիպտական քաղաքակրթության այն պատմական փորձը, որից քո կարծիքով կարելի է դասեր քաղել:
2. Թվարկի՛ր գիտությունների այն ճյուղերը, որոնք քո կարծիքով պետք է զարգացնել Հայաստանում:
3. Թվարկի՛ր այսօր ուժեղ պետություն ունենալու քո 5 պայմանը:

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ

Ես արդեն գիտեմ՝

1. ինչ է քաղաքակրթությունը,
2. որոնք են պետության ձևավորման պատմական նախադրյալները,
3. ինչու է պետությունը թուլանում և անկում ապրում:

Ես արդեն կարող եմ՝

4. թեմայի շրջանակներում նշել պատմական երևույթների պատճառներն ու հետևանքները,
5. ներկայացնել և մեկնաբանել եգիպտական քաղաքակրթության ներդրումը մարդկային հասարակության պատմության մեջ:

§2 | ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Միջագետք — Եփրատ և Տիգրիս գետերի միջև ընկած տարածքը (ներկայիս Իրաքի տարածքը):

Շումերներ — Միջագետքի հնագույն բնակիչները:

Իրավական պետություն — Պետություն, որտեղ կյանքի բոլոր ոլորտները կարգավորվում են օրենքով:

Օրենսգիրք — Օրենքների հավաքածու:

Պատկերային գիր — հնագույն գրի տեսակ, որտեղ յուրաքանչյուր պատկեր նշանակում էր մի որևէ բառ կամ հասկացություն:

Զիկկուրատ — Ուղղանկյունանիստաձև բազմաստիճան վեր խոյացող կառուցվածքով պաշտամունքային շինություն Հին Միջագետքում:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Քիշ, Ուր, Ուրուկ — Շումերների առաջին պետություններից:

Սարգոն Աքքադացի — Աքքադ պետության հիմնադիրը: Գահակալել է Ք. ա. 2330–2295 թվականներին:

Աքքադե — Աքքադի թագավորության մայրաքաղաքը:

Համմուրապի — Բաբելոնիայի հայտնի արքա: Գահակալել է Ք. ա. 1792–1750 թվականներին:

Վանի թագավորություն — Համահայկական առաջին թագավորությունը: Գոյություն է ունեցել Ք. ա. IX դ. կեսերից մինչև Ք. ա. VII դ. վերջը:

Ասորեստան — Միջագետքում Ք. ա. II հազարամյակի սկզբներից մինչև Ք. ա. 612 թ. գոյություն ունեցած պետություն:

Նաբուգոդոնոսոր II — Նոր Բաբելոնիա թագավորության արքա: Գահակալել է Ք. ա. 605–562 թվականներին:

Նինվե — Ասորեստանի մայրաքաղաքը:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: Ժամանակ և տարածություն

Եթե թեմայի ուսումնասիրության ընթացքում կազմես պատմական իրադարձությունների զարգացման ժամանակագրությունը, ապա այն քեզ կօգնի ավելի լավ պատկերացնելու պատմության ժամանակային և տարածական չափումները:

1. Դասանյութն ընթերցելիս դո՛ւրս գրիր քո կարծիքով կարևոր իրադարձություններն ու դրանց համապատասխան ժամանակաշրջանները և լրացրո՛ւ աղյուսակ 1–ը:

Աղյուսակ 1

Իրադարձություն	ժամանակաշրջան

Միջագետքի առաջին պետությունները

Միջագետքը համաշխարհային քաղաքակրթության կարևորագույն կենտրոններից էր: Այստեղ ստեղծված քաղաքակրթական արժեքները մինչև այսօր շարունակում են մնալ մարդկության մեծագույն ձեռքբերումներից:

Միջագետքի տարածքը հիմնականում անապատային է: Այստեղով են հոսում **Առաջավոր Ասիայի** երկու ամենախոշոր գետերը՝ **Եփրատն ու Տիգրիսը**: Դրանք սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհից և թափվում են Պարսից ծոցը:

Քարտեզի վրա փորձի՛ր պատկերացնել Միջագետքի դիրքը Առաջավոր Ասիայում:

Դեռևս հնագույն ժամանակներից մարդիկ բնակվում էին այդ գետերի ափերին, քանի որ միայն այդտեղ էր հնարավոր ապրուստի միջոցներ հայթայթել: Ինչպես եգիպտոսում, այստեղ ևս մարդիկ ստեղծեցին ջրանցքներ և ամբարտակներ՝ գետերի ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու համար: Հասարակական աշխատանքները կազմակերպելու և կառավարելու նպատակով մարդկային խմբերը միավորվում էին, որի արդյունքում Միջագետքում առաջացան պետություններ:

Միջագետքի հնագույն բնակիչները **շումերներն** էին: Նրանց բնակավայրերը երկրի հարավում էին՝ Եփրատ գետի ափերին: Արդեն Ք. ա. V–IV հազարամյակներում կազմավորվեցին առաջին պետությունները **Քիշը**, **Ուրը**, **Ուրուկը** և այլն: Շումերները կարողացան ստեղծել ընդարձակ ոռոգման համակարգ և զարգացած տնտեսություն: Սակայն ի տարբերություն Եգիպտոսի՝ Միջագետքում միասնական պետություն ստեղծվեց բավականին ուշ:

Մտաբերի՛ր Եգիպտոսում առաջին պետությունների առաջացման նախադրյալները և դրանք համեմատի՛ր Միջագետքում պետությունների առաջացման նախադրյալների հետ:

Աքքադ և Բաբելոն

Տնտեսության վերելքը և քաղաք–պետությունների առաջացումը նպաստեց գրի ստեղծմանը, որի միջոցով սկսեցին արձանագրել տնտեսական հաշվարկները, ջրի ծավալի և հողատարածքների չափագրումը, հարևանների դեմ մղված պատերազմները և այլն:

Ք. ա. III հազ. կեսերին արևմուտքից Միջագետք եկան նոր ցեղեր, որոնց առաջնորդ **Սարգոնը** միավորեց Միջագետքը: Նա հիմնեց **Աքքադի** թագավորությունը՝ **Աքքադե** մայրաքաղաքով: Սարգոնը ստեղծեց աշխարհում առաջին արհեստավարժ բանակը, որը կազմված էր 5400 զինվորից: Նա խոշոր նվաճումներ կատարեց հարևան երկրներում: Սարգոնը ստացավ «**Աշխարհի չորս կողմերի արքա**» տիտղոսը:

Աքքադի արքա Սարգոնի դիմաքանդակը (Իրաքի Ազգային թանգարան, Բաղդադ):

Ք. ա. XVIII դարում հզորացավ **Բաբելոն** քաղաք–պետությունը, որի իշխանությունը շուտով տարածվեց ողջ

Միջագետքի վրա: Նրա արքա **Համմուրապին** հասկանում էր, որ ռազմական ուժով ստեղծված պետությունը պետք է ամրապնդել նաև ներսից: Նրա հրամանով հավաքվեցին նախորդ դարաշրջաններում Միջագետքում ստեղծված օրենքները, և կազմվեց միասնական օրենսգիրք: Այն ուներ 282 հոդված և կարգավորում էր հասարակության կյանքի տարբեր ոլորտները: Դրանում կարևոր տեղ էր զբաղեցնում մասնավոր սեփականության անձեռնմխելիության սկզբունքը: Օրենսգիրքը փորագրվեց յոթ քարակոթողների վրա և բոլորին հասանելի դարձնելու նպատակով տեղադրվեց երկրի տարբեր շրջաններում:

Մեզ հասած միակ քարակոթողը, որի վրա փորագրված է Համմուրապիի օրենսգիրքը (բնօրինակ, Փարիզ, Լուվրի թանգարան):

Փորագրվել է 9 մ բարձրությամբ բազալտե սյան վրա: Երկար ժամանակ համարվել է կորած, հայտնաբերվել է XX դ. սկզբներին: Օրենսգիրքը եզրափակում են հետևյալ խոսքերը.
«Ես՝ Համմուրապիս, արդարադատ թագավոր եմ, որին Արևի աստվածը շնորհել է օրենքներ: Իմ խոսքերը հիանալի են, իմ գործերը՝ աննման»:

ԻՆչ է հուշում հետևյալ միտքը. «Նրա արքա Համմուրապին հասկանում էր, որ ռազմական ուժով ստեղծված պետությունը պետք է ամրապնդել նաև ներսից»:

Փաստորեն Համմուրապին առաջին փորձն արեց համաշխարհային պատմության մեջ ստեղծելու **իրավական պետություն**:

- Եթե մարդը գողանա տաճարի կամ պետության սեփականությունը, ապա նա պետք է սպանվի:
- Եթե որդին հարվածել է հորը, ապա նրա ձեռքը պետք է կտրվի:
- Եթե բժիշկը վիրահատում է ազատ մարդուն, և նա մահանում է, ապա նրա ձեռքը պետք է կտրել:
- Եթե դատավորը որոշում կայացնի և այն հաստատի կնիքով, բայց հետո փոխի իր որոշումը, ապա նրան պետք է հեռացնել պաշտոնից, և նա երբեք չի կարող դատավոր դառնալ:

Փորձի՛ր հիմնավորել Համմուրապիի օրենսգրքի նշանակությունը Բաբելոնի թագավորության համար: Կարո՞ղ ես այդ օրենսգրքից բերված հատվածում գտնել մեր ժամանակներում կիրառելի պատիժներ:

Ասորեստան

Հյուսիսային Միջաքետքում Ք. ա. XX դարում **Աշշուր** քաղաքի գլխավորությամբ ստեղծվեց պետություն, որը հետագայում հույները անվանեցին **Ասորեստան:**

Ք. ա. IX դարում Ասորեստանը վերածվեց Առաջավոր Ասիայի հզորագույն տերության: Այն ընդգրկում էր շատ ավելի մեծ տարածք, քան Միջագետքը: Նվաճված երկրները դաժանորեն հարստահարվում էին: Այդ վիթխարի տերության տնտեսությունը օգտակար հանածոների, առաջին հերթին մետաղների և անտառանյութի կարիք ուներ, որոնցից զուրկ էր երկիրը: Ասորեստանի արքաները օգտակար հանածոները ձեռք էին բերում կա՛մ հյուսիսի ժողովուրդների հետ առևտրական կապեր հաստատելով, կա՛մ արշավանքների միջոցով: Հաճախ այդ հարաբերությունները վերաճում էին տևական պատերազմների: Ք. ա. IX–VII դարերում Ասորեստանը բախվեց **Վանի համահայաստանյան** թագավորության հետ: Երկուսն էլ պայքարում էին Առաջավոր Ասիայում գերիշխանության համար:

Կարո՞ղ էր արդյոք Ասորեստանը պահպանել իր տերությունը՝ առանց դրսից բերվող օգտակար հանածոների: Երկու դեպքում էլ մտածի՛ր, թե ինչ կարող էր լինել նրա հետ:

Ք. ա. VII դարում Ասորեստանը հայտնվեց ծանր իրավիճակում՝ կապված նվաճված երկրներում բռնկված ապստամբությունների հետ: **Մարաստանը**, **Բաբելոնը և Հայաստանը** Ասորեստանի դեմ ստեղծեցին հզոր դաշինք: Ք. ա. 612 թ. դաշնակիցները գրավեցին Ասորեստանի մայրաքաղաք **Նինվեն**, որով էլ ավարտվեց այդ տերության պատմությունը:

Միջագետքի ժողովուրդների մշակույթը

Հին Միջագետքի հասարակությունները շուրջ երկուսուկես հազարամյա պատմության ընթացքում ստեղծեցին քաղաքակրթական արժեքներ, որոնք լայնորեն փոխառեցին բոլոր հարևան երկրները:

Ինչպես և եգիպտացիները, Միջագետքի բնակիչները կարողացան հարմարվել իրենց երկրի առանձնահատուկ աշխարհագրական և կլիմայական պայմաններին ու հաղթահարել ժամանակի մարտահրավերները: Նրանք օգտագործեցին Եփրատի և Տիգրիսի ջրային ռեսուրսները և մշակելի դարձրին անապատային տա-

ռածքները: Ոռոգման կառույցների մշտական կատարելագործումը նպաստում էր դրանց արդյունավետ աշխատանքին:

Փորձի՛ր համեմատել Միջագետքում և Եգիպտոսում բնության մարտահրավերները հաղթահարելու մարդկանց գործունեությունը: Նշի՛ր նմանությունները և տարբերությունները:

Մեծ է Միջագետքի ժողովուրդների ներդրումը **գրի** ստեղծման և զարգացման գործում: Դեռևս Ք. ա. IV հազ. վերջերին հայտնվեց **շումերական պատկերային գիրը**, որի հիման վրա ավելի ուշ ստեղծվեց **սեպագիրը**: Ի տարբերություն պատկերագրի՝ սեպագիր գրահամակարգը թույլ էր տալիս լիարժեք արտահայտել լեզվի հնչյունական կազմը:

Փաստորեն մարդկությունը շումերներին է պարտական **հնչյունական գրի** ստեղծման համար:

Սեպագիրը և աքքադերենը սկսեցին կիրառել ամբողջ Առաջավոր Ասիայում: Այն լայնորեն օգտագործվում էր Խեթական պետությունում, Միտաննիում, Եգիպտոսում, Վանի թագավորությունում և Աքեմենյան տերությունում: Ք. ա. I հազ. սկզբներին սեպագրի հիման վրա փյունիկեցիները ստեղծեցին այբբենական գիրը:

Շումերական սեպագրի նմուշ

Շումեր դպրոցականի կավե աղյուսակ՝ ուսուցչի նշումներով: (Էրմիտաժ, Սանկտ Պետերբուրգ)

Փորձի՛ր հիշել՝ ինչ գրային համակարգեր են քեզ ծանոթ:

Միջագետքում բարձր զարգացման հասան բնական գիտությունները: Մաթեմատիկոսներին հայտնի էին բազմապատկումը, հակադարձ մեծությունները, թվերի քառակուսիները և խորանարդները:

Շումերներն առաջիններից էին, որ խմբավորեցին աստղերը համաստեղություններում և կանոնավոր սկսեցին ուսումնասիրել աստղային երկինքը:

Միջագետքի ճարտարապետությունն աչքի էր ընկնում կանոնավոր հատակագծով տաճարային, պալատական համալիրների կառուցմամբ: Այդ ոճի գլուխգործոցը ուղղանկյունանիստաձև բազմաստիճան տաճարներն էին՝ **զիկկուրատները:**

Զիկկուրատ (վերակազմություն)

Համեմատի՛ր զիկկուրատը եգիպտական բուրգի հետ:

Նաբուգոդոնոսոր II արքան Նոր Բաբելոնիա պետության վերջին հզոր արքան էր: Նա Բաբելոնը դարձրեց Ասիայի ամենախոշոր ու գեղեցիկ քաղաքը: Նրա օրոք են կառուցվել ***Բաբելոնի աշտարակն*** *ու* ***Շամիրամի կախովի այգիները****: Դրանք Հին աշխարհի յոթ հրաշալիքներից են:*

Միջագետքում զարգացման գագաթնակետին հասավ սյունաշար դահլիճների կառուցումը, որը հետագայում փոխանցվեց պարսիկներին, Փոքր Ասիայի ժողովուրդներին և հույներին:

Գեղարվեստական գրականության ասպարեզում Միջագետքի բնակիչները ստեղծեցին յուրահատուկ արժեքներ: Դրանցից են համաշխարհային պատմության մեջ ամենավաղ աշխարհաստեղծման առասպելը, էպոսը, ասացվածքները, օրորոցային երգերը և այլն, որոնք ստեղծվել են դեռևս Ք. ա. III հազարամյակում:



Բաբելոնի աշտարակը (միջնադարյան վերակազմություն, նկարիչ՝ Պիտեր Բրոյգել)

91 մետր բարձրություն ունեցող այս հսկա տաճարն Ասիվանաշնչում հայտնի է որպես Բաբելոնի աշտարակ: Սա աստիճանաձև կառույց էր, որի վերևում Բաբելոնի գլխավոր աստծու՝ Մարդուկի սրբավայրն էր: Քառանկյուն այս տաճարի յուրաքանչյուր կողմի երկարությունը 400 մետր էր:

Կախովի այգիները (վերակազմություն):

Այս եզակի կառույցը, որը ստացել է «Կախովի այգիներ» անունը, Նաբուգոդոնոսորը ստեղծեց իր կնոջ՝ Մարաստանի արքայադստեր համար: Նա Մարաստանից բերել տվեց այդ երկրին հատուկ ծառեր և կենդանիներ, որպեսզի թագուհին իրեն զգա ինչպես հայրենիքում:

Պատմության մեջ գրված առաջին էպոսը նվիրված է Ուրուկի արքա **Գիլգամեշին**: Նա իր արժանահիշատակ գործերի համար հետագայում վերածվեց առասպելական կերպարի և նրա մասին հյուսվեց վիպերգական պատմություն: Մեծ է դրա ազդեցությունը հինարևելյան հասարակությունների վրա:

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Որտե՞ղ է գտնվում Միջագետքը: Ինչո՞ւ է այն այդպես կոչվում:

2. Ինչո՞ւ է Միջագետքը համարվում համաշխարհային քաղաքակրթության կարևորագույն կենտրոններից:

3. Ինչո՞վ են նշանավորվել Միջագետքի պատմության մեջ Շումերը, Աքքադը և Բաբելոնը:

4. Ովքե՞ր էին շումերները: Միջագետքի ո՞ր մասում էին ապրում նրանք:

5. Օգտվելով քարտեզից և դասանյութից՝ թվարկի՛ր շումերների քաղաք–պետություններ:

6. Ե՞րբ և որտե՞ղ էր ստեղծվել Բաբելոնի թագավորությունը: Ո՞ւմ օրոք այն հզորացավ:

7. Ե՞րբ և որտե՞ղ է ստեղծվել Ասորեստանը: Ո՞ր դարերում այն վերելք ապրեց:

8. Քո կարծիքով ո՞րն էր Ասորեստանի կործանման գլխավոր պատճառը:

9. Ե՞րբ և ո՞ւմ կողմից գրավվեց Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն:

10. Համմուրապին ինչո՞ւ ստեղծեց միասնական օրենսգիրք: Այն կարո՞ղ է մեր օրերում կիրառվել:

11. Քանի՞ հոդվածից էր բաղկացած Համմուրապիի օրենսգիրքը:

12. Կցանկանայի՞ր, որ Համմուրապիի օրենսգրքից բերված օրենքները գործեին Հայաստանում: Ինչո՞վ է պայմանավորված քո ընտրությունը:

13. Ո՞վ էր Գիլգամեշը: Քո կարծիքով ինչո՞վ է նա նշանավոր:

14. Թվարկի՛ր մի քանի պահանջարկ, որոնք դարձան Միջագետքում գրի ստեղծման պատճառներ:

15. Քո կարծիքով ինչո՞ւ են Բաբելոնի աշտարակը և Շամիրամի կախովի այգիները համալրում հին աշխարհի յոթ հրաշալիքների շարքը:

16. Քաղաքակրթական ի՞նչ արժեքներ են ստեղծվել Միջագետքում, որոնք մինչև այսօր շարունակում են գոյատևել:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. *Խմբով քննարկե՛ք ձեր լրացրած աղյուսակ 1–ը: Անհրաժեշտության դեպքում ամբողջացրե՛ք այն: Աղյուսակում բերված տվյալների հիման վրա ստեղծե՛ք պատկերազարդ ժամանակագրական ժապավեն:*
2. *Քո ստեղծած ժապավենից օգտվելով՝ կարո՞ղ եք ասել, թե երբ է ստեղծվել սեպագիրը Միջագետքում: Իսկ Շամիրամի կախովի այգինե՞րը:*

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. *Աքքադի արքա Սարգոնին տրվել է «Աշխարհի չորս կողմերի արքա» տիտղոսը: Գնահատի՛ր Սարգոնին որպես արքա՝*
   - *պատմական տվյալ ժամանակաշրջանի տեսանկյունից,*
   - *այսօրվա տեսանկյունից, բայց պատմական տվյալ ժամանակաշրջանում,*
   - *այսօրվա քաղաքակրթության տեսանկյունից:*
2. *Գնահատի՛ր Համմուրապիի կերպարը որպես արքա և՛ տվյալ ժամանակաշրջանի, և՛ այսօրվա տեսանկյունից:*
3. *Ի՞նչ ես կարծում, ո՞ր դեպքում կարելի է հպարտանալ՝ երբ քո երկրում գործում են ուժեղ ու կոշտ օրենքնե՞ր, թե՞ երբ ոտնահարվում են օրենքները:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Օգտվելով դասանյութում բերված տեղեկույթից և մի քանի այլ աղբյուրներից՝ պատրաստի՛ր պաստառ կամ սահիկաշար «Միջագետքի ժողովուրդների մշակույթը» թեմայով: Այն ներկայացրո՛ւ դասարանում: Կարող ես նաև աշխատանքդ դարձնել տեսանյութ և տեղադրել դպրոցական կայքում:*

§3 | ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Փոքր Ասիա — Թերակղզի Ասիայի արևմուտքում՝ Հայկական լեռնաշխարհի, Սև և Միջերկրական ծովերի միջև:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Մուրսիլիս I — Խեթերի նշանավոր արքաներից: Գահակալել է Ք. ա. 1540–1530 թվականներին:

Տելեպինուս — Խեթերի արքա, որը սահմանել է գահաժառանգման նոր կարգ: Գահակալել է Ք. ա. 1525–1550 թվականներին:

Խաթթուսաս — Խեթերի տերության մայրաքաղաքը:

1. Դասանյութն ընթերցելիս դո՛ւրս գրիր քո կարծիքով կարևոր իրադարձություններն ու դրանց համապատասխան ժամանակաշրջանները և լրացրո՛ւ աղյուսակ 1–ը:

Աղյուսակ 1

Իրադարձություն	ժամանակաշրջան

Խեթական պետության ստեղծումն ու վերելքը

Փոքր Ասիա թերակղզին Առաջավոր Ասիան Եվրոպայի հետ կապող բնական կամուրջ է: Այստեղով են բոլոր պատմական ժամանակներում Ասիայից Եվրոպա և հակառակ ուղղությամբ տեղաշարժվել տարբեր ժողովուրդներ: Դրանց մի մասը մնացել է տեղում, ինչով էլ բացատրվում է թերակղզու բնակչության բազմալեզու և բազմամշակույթ բնույթը:

Խեթերի մայրաքաղաքի գլխավոր դարպասը՝ առյուծի քանդակով (ներկայիս տեսքը)

Արդեն Ք. ա. III հազարամյակում Փոքր Ասիայի տարբեր շրջաններում սկսեցին ձևավորվել պետություններ: Նրանց միջև ընթացած պատերազմների արդյունքում Ք. ա. XVII դարում այստեղ ստեղծվեց **Խեթական պետությունը**: Խեթերի մայրաքաղաք **Խաթթուսասը** գտնվում էր թերակղզու կենտրոնական մասում: Այն ժամանակի ընթացքում իրեն ենթարկեց ողջ թերակղզին: Խեթական արքա **Մուրսիլիս I–ը** նույնիսկ գրավեց Բաբելոնը:

Փոքր Ասիան Առաջավոր Ասիայի մետաղագործության կարևորագույն կենտրոնն էր: **Ք. ա. II հազ. այստեղ առաջինը սկսեցին զենք պատրաստել երկաթից**: Երկաթե զենքերը մեծ պահանջարկ ունեին հին Առաջավոր Ասիայում: Հայտնի է եգիպտական փարավոնի նամակը խեթական արքային, որով նա խնդրում էր իրեն ուղարկել երկաթե դաշույն:

Խեթական պետականության ամրապնդման գործում մեծ նշանակություն ունեցավ Ք. ա. XV դարի սկզբին արքա **Տելեպինուսի** կողմից բանավոր օրենքների գրառումը: Նա սահմանեց նաև գահաժառանգման նոր կարգ: Այդուհետ արքա կարող էին դառնալ միայն արքայազնները՝ ըստ ավագության:

Գահաժառանգման նոր կարգը

«Այսուհետև Խաթթուսասում ոչ ոք չպիտի չարիք պատճառի արքայական տոհմի որդուն և նրան խոցի դաշույնով: Թող արքա դառնա միայն արքայի որդիներից առաջինը: Եթե արքայի որդիներից առաջինը չկա, ապա թող արքա դառնա նա, ով երկրորդն է: Իսկ եթե արքայի որդիներից ոչ մեկը չկա, ապա թող արքա դառնա նա, ով կնության կվերցնի (արքայի) առաջին դստերը»:

Որտե՞ղ է ստեղծվել Խեթական պետությունը:

Խեթական պետությունը ե՞րբ հասավ իր հզորության գագաթնակետին, ի՞նչ նվաճումներ իրականացրին խեթերը:

Խեթական տերությունը և հարևան երկրները

Ք. ա. XIV դարում Խեթական պետությունը վերածվեց Առաջավոր Ասիայի խոշորագույն տերության: Նրա իշխանությունը տարածվում էր արևմուտքում մինչև Էգեյան ծով, հարավում՝ Կենտրոնական Ասորիք և հասնում մինչև Եգիպտոսի սահմանները: Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները նույնպես խեթերի տիրապետության տակ էին:

Հարաբերությունները հարևան երկրների հետ

Խեթերը պատկանում էին ինդեվրոպական լեզվաընտանիքին, որի ներկայացուցիչն են նաև հայերը: Խեթերը մեր հեռավոր նախնիների անմիջական հարևաններն էին, և նրանց լեզվից հայերենին անցել են զգալի քանակությամբ հատուկ անուններ և հասարակ բառեր:

Հարևան երկրների նկատմամբ իրենց տիրապետությունը խեթերն իրականացնում էին ինչպես պարբերաբար կրկնվող արշավանքների, այնպես էլ նվաճված երկրների հետ կնքվող պայմանագրերի միջոցով: Իրենց գերիշխանությունը խեթական արքաներն ամրապնդում էին նաև դինաստիական ամուսնությունների միջոցով: Այսպես՝ Ք. ա. XIV դարում խեթական արքայի և Հայասայի արքայի միջև կնքված պայմանագիրը ամրապնդվեց խեթական արքայադստեր և Հայա-

սայի արքայի ամուսնությամբ: Իսկ Եգիպտոսի փարավոն Ռամզես II–ի հետ կնքած բարեկամության պայմանագիրը (հիշի՛ր §1–ը) կարևոր նշանակություն ունեցավ Խեթական տերության համար:

Խեթական պետությունը պատմության ասպարեզից դուրս եկավ Ք. ա. XII դարի սկզբին: Պատճառներն էին՝ կլիմայի չորացումը և դրան հաջորդած տնտեսական լուրջ խնդիրները, ինչպես նաև հարևան ժողովուրդների հարձակումները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Փորձի՛ր պարզաբանել փոքր Ասիա թերակղզու բնակչության բազմալեզու և բազմամշակույթ լինելու պատճառները:*
2. *Քո կարծիքով ինչու Տելեպինուս արքան մտցրեց գահաժառանգման նոր կարգ: Նշի՛ր դրա օգուտները:*
3. *Դասանյութի փաստերի հիման վրա ապացուցի՛ր, որ Խեթական տերությունը Ք. ա. XIV դարում հասել էր իր հզորության գագաթնակետին:*

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

1. *Աղյուսակ 1–ից և այլ աղբյուրներից դուրս գրած տվյալների հիման վրա նախապատրաստի՛ր և դասարանի՛ն ներկայացրու «Խեթական պետությունը» պատկերազարդ ժամանակագրական սանդղակը:*

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. *Մեկնաբանի՛ր «Այստեղ էին հանդիպում Արևելքը և Արևմուտքը» միտքը: Գնահատի՛ր այն նախ հանդիպողների դիտանկյունից, ապա նաև խեթերի դիտանկյունից:*
2. *Հայաստանի ներկայիս տարածքը մեր ժամանակների ո՞ր պետությունների համար կարող է շփման գոտի դառնալ, և դա ի՞նչ կտա Հայաստանին:*

§4 | ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Արիացիներ — Ռազմատենչ ինդեվրոպալեզու ցեղեր, որոնք ապրում էին Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում:

Բուդդայականություն — Աշխարհի հնագույն կրոններից է: Հիմնադիրն է Սիդհարթա Գաուտաման, որը հայտնի է «Բուդդա» անունով:

Վարնա — Հնդկաստանի բնակչության չորս առանձնացված դասերի անվանումը. կոչվել են նաև **կաստա:**

Նիրվանա — Սանսկրիտից թարգմանաբար նշանակում է մարել, հանգցնել կրակը:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Խառապպա — Հնդկաստանի տարածքում ստեղծված հնագույն քաղաքակրթություն:

Մաուրյան պետություն — Առաջին համահնդկական պետությունը: Ստեղծվել է Ք. ա. IV դարի վերջին:

Աշոկա — Մաուրյան պետության հզոր արքա: Գահակալել է Ք. ա. 273–232 թվականներին:

Միջավայրը

Հնդկաստանը համաշխարհային քաղաքակրթության հնագույն կենտրոններից է: Հնդկաստանի մեծ մասը արևադարձային կլիմայական գոտում է, որտեղ կան խոշոր ջրառատ գետեր և հողի մշակման համար բոլոր նպաստավոր պայմանները: Նստակյաց երկրագործության համար արհեստական ոռոգման կարիք չկար: Տարեկան հնարավոր էր երկու անգամ և նույնիսկ ավելի բերք հավաքել:

Հնդկաստանի բնակչությունը բազմազգ էր և բազմամշակույթ: Այդ էր պատճառը, որ բնակչության տարբեր հատվածներ գոյատևում էին առանց միավորվելու: Հնդկաստանում միասնական պետություն ստեղծվեց

շատ ուշ՝ Ալեքսանդր Մակեդոնացու՝ Ք. ա. IV դարի վերջին կատարած արշավանքներից հետո:

Հիշի՛ր միասնական պետության ձևավորման պատմական նախադրյալները: Փորձի՛ր բացատրել, թե ինչու Հնդկաստանում միասնական պետությունը ուշ կազմավորվեց:

Խառապպա

Խառապպայի շրջանի կնիք (պահվում է Պակիստանի Կարաչի քաղաքի ազգային թանգարանում)

Հնդկաստանի ամենավաղ քաղաքակրթությունը **Խառապպան** էր, որն իր զարգացման բարձրակետին հասավ Ք. ա. 2600–1900 թթ.: Այն ընդգրկում էր երկրի հյուսիսը և հյուսիս–արևմուտքը՝ Ինդոս գետի ավազանում: Այստեղ կային միասնական հատակագծով կառուցված քաղաքներ, որոնց բնակչությունը հասնում էր 20–30 հազ. մարդու: Խառապպացիներն արդեն առևտրական կապեր էին հաստատել Միջագետքի և Եգիպտոսի հետ: Նրանք ունեին պատկերային գիր: Խառապպայի քաղաքակրթությունը պատմության ասպարեզից դուրս եկավ շրջակա միջավայրի տևական չորացման հետևանքով:



Խառապպա

Հնդկաստանի բնությունը համեմատի՛ր Հին Եգիպտոսի և Միջագետքի բնական պայմանների հետ: Ի՞նչ առանձնահատկություններ ես տեսնում:

Վարնաներ

Ք. ա. II հազ. սկզբին Հայկական լեռնաշխարհում ապրող ռազմատենչ արիացիների ցեղերը ներթափանցեցին Իրանական բարձրավանդակ: Այնտեղից էլ Ք. ա. XVII դարում ներխուժեցին Հնդկաստան և տիրեցին երկրի հյուսիսարևմտյան մասին:

Նրանք նվաճեցին տեղի ժողովուրդներին և ստեղծեցին իրենց պետությունները: Նրանց արքաներին անվանում էին **ռաջա**: Արիացիները քանակապես զիջում էին տեղացիներին, սակայն ավելի կազմակերպված էին ու մարտունակ: Տեղի բնակչության նկատմամբ իրենց իշխանությունը պահպանելու համար արիացիներն ապրում էին մեկուսի: Ձևավորվեց խոր անջրպետ արիացիների և տեղացիների միջև: Արդյունքում Հնդկաստանի բնակչությունը բաժանվեց հասարակական դասերի՝ **վարնաների:**

Դրանցից յուրաքանչյուրն ուներ որոշակի զբաղմունք, իրավունքներ և պարտականություններ:

Քո կարծիքով ինչպիսի՞ն էր Հնդկաստանի վիճակը մինչև արիացիների արշավանքը:

Մաուրյան պետությունը

Ալեքսանդր Մակեդոնացու վերադարձից հետո հնդիկները ապստամբեցին և ստեղծեցին մի շարք պետություններ: Հնդկաստանում առաջին համահնդկական պետությունը՝ **Մաուրյան** թագավորությունը, ստեղծեց **Չանդրագուպտան**:

Ք. ա. III դարում՝ Աշոկա արքայի օրոք, Մաուրյան թագավորությունը **հասավ իր հզորության գագաթնակետին**: Առաջին անգամ Հնդկաստանի մեծ մասը միավորվեց մեկ պետության մեջ: Աշոկան ստեղծեց օրենքներ, որոնք կարգավորում էին երկրի տնտեսությունը և

Քրմերին *աստված ստեղծել էր իր շուրթերից, ուստի քուրմը կարող էր խոսել աստծո անունից:*

Ռազմիկները *ստեղծվել էին աստծո ձեռքերից: Գլխավոր ռազմիկը արքան էր:*

Արտադրողները՝ *երկրագործները, արհեստավորներն ու առևտրականները, ստեղծվել էին աստծո ազդրերից:*

Ստրուկները *ստեղծվել էին աստծո՝ ցեխից աղտոտված ոտքերից: Այս խմբի մեջ էին մտնում նաև հողազուրկ աղքատները:*

Առաջին երկու վարնաները կազմում էին արիացիները: Անցումը մի կաստայից մյուսին արգելվում էր:

Աշոկա արքայի հաղթասյունը (պահպանվում է Սատնար քաղաքի հնագիտական թանգարանում, համարվում է Հնդկաստանի անկախության խորհրդանիշը)

Ըստ Բուդդայի ուսմունքի՝ բոլոր մարդիկ նույնն են և հավասար: Տառապանքներից ազատագրվելու և փրկվելու ուղին անցնելուց հետո մարդը ձեռք է բերում անխռով հոգեվիճակ՝ նիրվանա: Նիրվանայի հասած մարդն իր մեջ մարում է ատելության, նախանձի և տգիտության կրակը, ստանում բացարձակ սիրո, հոգևոր երանության և ներշնչման վիճակ:

Բուդդայի արձանը: Ստեղծվել է I–II դարերում Գանդհարայում (Պակիստան) և ներկայումս պահվում է Տոկիոյի ազգային թանգարանում (Ճապոնիա):

կառավարումը: Նա հայտնի է որպես **շինարար արքա**: Ամենուրեք կառուցում էր պարսպապատ քաղաքներ, բարեկարգ ճանապարհներ, ջրանցքներ: Հասարակ մարդկանց համար նա բացեց անվճար հիվանդանոցներ:

Քո կարծիքով ինչո՞ւ էր Աշոկա արքան քաղաքները կառուցում պարսպապատ:

Հին Հնդկաստանի մշակույթը

Հին Հնդկաստանի մշակույթը բազմաշերտ էր և ընդգրկում էր բնական և հասարակական գիտությունների տարբեր ոլորտներ:

Հնդկական գիտության կարևոր ձեռքբերումներից էր **բժշկագիտությունը**: Հնդիկ բժիշկներին հայտնի էին ավելի քան 1000 հիվանդություններ և դրանց բուժման եղանակներ: Մինչ օրս էլ ինչպես Հնդկաստանում, այնպես էլ շատ երկրներում գիտական բժշկությանը զուգահեռ գործում է նաև ժողովրդական բժշկությունը: Ժողովրդական բժշկության մեջ մեծ կիրառություն ունեն հին հնդկական բուսական ու կենդանական ծագման դեղամիջոցները:

Հնդիկ **մաթեմատիկոսներին** հայտնի էր հաշվելու տասնորդական համակարգը, որը հետագայում արաբների միջոցով տարածվեց Արևելքի երկրներում և Եվրոպայում:

Դեռևս Ք. ա. I հազարամյակում Հնդկաստանում հատում էին արծաթե և պղնձե դրամներ:

Հնդկաստանում Ք. ա. I հազ. կեսերին ձևավորված համաշխարհային կրոններից **բուդդայականությունը** հետագայում լայն տարածում գտավ Արևելքի երկրներում:

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Բացատրի՛ր «վարնա» եզրույթը:*
2. *Ե՞րբ է գոյություն ունեցել Խառապպան:*
3. *Դասանյութի տվյալների հիման վրա հիմնավորի՛ր, որ Խառապպայում ստեղծվել էր զարգացած քաղաքակրթություն:*
4. *Չնայած սակավաթիվ լինելուն՝ արիացիներին ինչո՞ւ հաջողվեց նվաճել և իրենց իշխանությունը պահպանել Հնդկաստանի բնակչության նկատմամբ:*
5. *Ե՞րբ և ո՞ր արքայի օրոք Մաուրյան պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին:*
6. *Ո՞վ էր Բուդդան: Պարզաբանի՛ր նրա ստեղծած կրոնի բնութագրող հիմնական կողմերը:*
7. *Քո կարծիքով ի՞նչ հետևանքներ է ունեցել դասային բաժանումը հնդկական հասարակության զարգացման վրա:*
8. *Ո՞րն էր Աշոկա արքայի կողմից անվճար հիվանդանոցների բացման նպատակը:*

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

1. *Օգտվելով դասանյութից և այլ աղբյուրներից՝ կազմե՛ք պաստառ, որի միջոցով կկարողանաք վերհանել ու դասարանին ներկայացնել Հին Հնդկաստանի մշակույթի նվաճումները:*
2. *Փորձե՛ք գծապատկերի կամ նկարի տեսքով ներկայացնել վարնաները: Լավ կլինի, որ գծապատկերն արտահայտի նաև հին հնդիկների պատկերացումները վարնաների մասին:*

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Փորձի՛ր գնահատել հին հնդկական մշակույթի ազդեցությունը արդի աշխարհի վրա:

§5 | ՀԻՆ ՉԻՆԱՍՏԱՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Վան — Հին Չինաստանում արքայի անվանումը:

Աստվածապետական իշխանություն — Պետության կառավարման այն ձևն է, որի դեպքում աշխարհիկ և հոգևոր բարձրագույն իշխանությունը կենտրոնացած է մեկ անձի ձեռքում:

Պետական մենաշնորհ — Մեծ պահանջարկ վայելող ապրանքների արտադրության և իրացման գործում պետության բացառիկ իրավունք:

Դաոսականություն — Փիլիսոփայական ուղղություն, ըստ որի՝ ներդաշնակության աղբյուրը տիեզերքն է:

Մետաքսի ճանապարհ — Միջազգային առևտրական հայտնի ճանապարհ, որը ձգվում էր Չինաստանից դեպի Առաջավոր Ասիա և Եվրոպա:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

Հուանհե, Յանցզի — Չինաստանի երկու խոշոր գետերը:

Կոնֆուցիոս — Չինացի մեծ փիլիսոփա և քաղաքական գործիչ, Ք. ա. 552–479 թթ.: Նրա գաղափարները այսօր էլ կազմում են չինական արժեհամակարգի հիմքը:

Ցին պետություն — Չինական առաջին միասնական պետությունը:

Ցին Շի Հուանդի — Չինաստանում առաջին միասնական պետության հիմնադիրը: Գահակալել է Ք. ա. 246–210 թվականներին:

Ու Դի — Չինական նշանավոր կայսր: Գահակալել է Ք. ա. 140–87 թվականներին:

Ցին Շի Հուանդի կայսրը (պատճենվել է XVII դարի սկզբի չինական նկարից)

Միասնական պետության առաջացումը

Ներկայիս Չինաստանի տարածքում մինչև Ք. ա. III դարը գոյություն ունեին բազմաթիվ պետություններ, որոնք ձևավորվել էին **Հուանհե** և **Յանցզի** գետերի ավազաններում: Դրանք կառավարվում էին **վան** անվանվող արքաների կողմից: Վանների իշխանությունը **աստվածապետական** էր, այսինքն՝ նրանք միաժամանակ իրականացնում էին աշխարհիկ և հոգևոր իշխանությունը:

Ք. ա. III դարի երկրորդ կեսին Չինաստանը միավորվեց **Ցին** պետության շուրջը: Վերջինիս արքա **Ցին Շի Հուանդին** գրավեց մյուս բոլոր պետությունները, և Ք.ա. 221 թ. ստեղծեց համաչինական պետություն:

Հիշի՛ր, թե ինչպես էին անվանում արքաներին Հին Եգիպտոսում, Միջագետքում և Հնդկաստանում:

Պետության կառավարումը հեշտացնելու նպատակով երկիրը բաժանվեց մարզերի, սահմանվեցին կայուն հարկեր: Մտցվեցին երկարության ու զանգվածի չափման միասնական միավորներ: Հյուսիսում սկսվեց չինական **Մեծ պարսպի** շինարարությունը, որը թույլ տվեց պատնեշ ստեղծել քոչվոր ցեղերի հարձակումների դեմ:

Հատված Չինական մեծ պարսպից (ժամանակակից նկար)

Ք. ա. II–I դարերում Չինաստանը տնտեսական վերելք էր ապրում: Չինաստանի և Առաջավոր Ասիայի երկրների միջև հաստատվեցին ակտիվ առևտրատնտեսական հարաբերություններ: **Ու Դի** կայսեր օրոք ճանապարհ բացվեց դեպի արևմուտք, որը ձգվում էր շուրջ 7 հազար կիլոմետր և հասնում էր մինչև Սև և Միջերկրական ծովեր: Սա պատմության մեջ հայտնի է որպես **Մետաքսի ճանապարհ**: Դրա մի մասն անցնում էր Հայաստանով:

Մետաքսի ճանապարհով Չինաստանից արտահանվում էր այստեղ արտադրվող մետաքսը, որը մեծ եկամուտ էր ապահովում չինական առևտրականներին: Այդ ճանապարհը գործում էր ընդհուպ մինչև XVI դարը:

Ի՞նչ նշանակություն կարող էր ունենալ Մետաքսի ճանապարհը Չինաստանի համար:

Ու Դին ընդարձակեց ոռոգման համակարգը, **պետական մենաշնորհ** հայտարարեց աղի, երկաթի, գինու արտադրության բնագավառներում: Դրամ կարող էր հատել միայն կայսրը: Տնտեսության վերելքը նպաստեց բնակչության աճին: Այս շրջանում Չինաստանի բնակչությունը հասնում էր շուրջ 60 միլիոնի:

Քո կարծիքով ինչո՞ւ էր կայսրը մենաշնորհ սահմանել մի շարք բնագավառների վրա:

Մշակույթը

Հին չինական քաղաքակրթությունը բացառիկ հաջողությունների հասավ պետական կառավարման, գիտության, մշակույթի և ռազմական արվեստի բնագավառներում: Դրանց մի մասը գոյատևեց նաև հետագայում և տարածվեց Ասիայում և Եվրոպայում:

Չինական մշակույթի կարևոր ձեռքբերումներից է **գիրը**, որը ստեղծվեց դեռևս Ք. ա. XVI դարում: Այն շարունակում է գոյատևել նաև այսօր:

Ք. ա. II դարում հայտնագործվեց **թուղթը**, որի շնորհիվ հետագայում հայտնվեցին տպագիր գրքեր: Միջնադարում թուղթը ընդօրինակեցին արաբները, իսկ խաչակրաց արշավանքների ընթացքում՝ նաև եվրոպացիները:



Հին չինական հիերոգլիֆային գիր

Չինաստանում ստեղծվեցին փիլիսոփայական տարբեր ուղղություններ, որոնց շարքում մեծ էր դաոսականության և **Կոնֆուցիոսի** տեսության դերը: Ըստ Կոնֆուցիոսի՝ կայսրը և պետական պաշտոնյաները պետք է կառավարեն արդարության, ազնվության և սիրո սկզբունքներից ելնելով:

Կոնֆուցիոսի արձանը Պեկինում

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Չինաստանում մինչև ո՞ր դարը չկար միասնական պետություն: Ինչո՞վ էր դա պայմանավորված:*
2. *Ո՞վ է առաջինը միավորել Չինաստանը:*
3. *Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Ցին Շի Հուանդին երկիրը հզորացնելու համար:*
4. *Ո՞վ էր Ու Դին: Ի՞նչ գործերով է նա հայտնի:*
5. *Ինչո՞ւ էր կայսրը մենաշնորհ սահմանել մի շարք բնագավառների վրա:*
6. *Ներկայացրո՛ւ հին չինական մշակույթի նվաճումները:*
7. *Պարզաբանի՛ր հին չինական մշակույթի ազդեցությունը այլ երկրների և տարածաշրջանների վրա:*
8. *Գնահատի՛ր «Մետաքսի ճանապարհի» նշանակությունը Չինաստանի և դրա երկայնքով տեղակայված պետությունների համար:*
9. *Որևէ ապրանքատեսակի արտադրության մենաշնորհը ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ դրա որակի վրա: Քո կարծիքով այսօր Հայաստանում կա՞ պետական մենաշնորհ:*

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Խմբով քննարկե՛ք ու գնահատե՛ք Կոնֆուցիոսի հայտնի մտքերը.

- Կարևոր չէ, թե որքան դանդաղ ես առաջ ընթանում: Կարևորն այն է, որ կանգ չառնես:
- Գերագույն փառքի հասնում են ոչ թե երբեք չսայթաքելու, այլ ամեն սայթաքումից հետո ոտքի կանգնելու շնորհիվ:
- Առանց մտածելու սովորելը ապարդյուն աշխատանք է, իսկ առանց սովորելու մտածելը՝ վտանգավոր:
- Վեհանձն մարդը քիչ է խոսում և ամեն ինչ ապացուցում է իր արարքներով:
- Միայն ամենաիմաստուն ու ամենահիմար մարդիկ երբեք չեն փոխվում:
- Ով կարողանում է ինքն իրեն տիրապետել, հազվադեպ է սխալվում:
- Ով արդար բան է անում, անպայման բարեկամներ կգտնի:

§6 | ԱՔԵՄԵՆՅԱՆ ԻՐԱՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Էլամ — Իրանական բարձրավանդակում ստեղծված առաջին պետությունը:
Աքեմենյան Իրան — աշխարհակալ պետություն Առաջավոր Ասիայում Ք. ա. 522–327 թթ.:
Արքայական ճանապարհ — Հին աշխարհի հայտնի առևտրային ճանապարհ:
Դարեհիկ — Աքեմենյան Իրանի դրամ:

ԱՆՁ ԲԱՌԱՊԱՇԱՐ

Մարաստան — Ք. ա. VIII դարում մարերի ստեղծած պետությունը:
Շոշ — Էլամի և Աքեմենյան տերության մայրաքաղաքը:
Կյուրոս Մեծ — Պարսկական տերության հիմնադիրը: Գահակալել է Ք. ա. 558–529 թվականներին:
Դարեհ I — Աքեմենյան պետության հիմնադիրը: Գահակալել է Ք. ա. 522–486 թվականներին:

Առաջին պետությունները

Իրանական բարձրավանդակում ստեղծված առաջին պետությունը **Էլամն** էր: Նրա մայրաքաղաքն էր **Շոշը:** Էլամը Առաջավոր Ասիայի զարգացած պետություններից էր: Դեռևս Ք. ա. III հազ. սկզբին էլամցիները ստեղծել էին **պատկերային գիր**:

Որտե՞ղ էր գտնվում Էլամը. ցո՛ւյց տուր քարտեզի վրա:

Ք. ա. II հազարամյակի սկզբներին Հայկական լեռնաշխարհից Իրանական բարձրավանդակ ներթափանցեցին հնդեվրոպական **արիական ցեղերը:** Նրանք որոշակի ազդեցություն ունեցան տեղաբնիկ ցեղերի զարգացման վրա:

Իրանի հյուսիսում ապրող իրանալեզու **մարերի ցեղը** Ք. ա. VIII դարում ստեղծեց **Մարաստան** պետությունը: Շուտով մարերը գրավեցին Ասորեստանի մայ-

ռաքաղաք **Նինվեն**: Ասորեստանին պատմական աս-պարեզից հանելուց հետո Մարաստանը սկսեց ծավալ-վել տարբեր ուղղություններով: Նա գրավեց մեծ տա-րածքներ և հասավ մինչև Փոքր Ասիայի արևելք:

Արիական ցեղերը որտեղի՞ց են ներթափանցել Իրան:
Որտե՞ղ էին ապրում մարական ցեղերը:
Մարերը ե՞րբ ստեղծեցին միավորված պետություն:

Կյուրոս Մեծ

Պարսկական ցեղերը ապրում էին Էլամից արևելք՝ Մարաստանի տիրապետության տակ: Պարսիկների առաջնորդ **Կյուրոսը** ապստամբեց մարերի դեմ և **Ք. ա. 550 թ. գրավեց** նրանց երկիրը:

Կյուրոսն իր առջև նպատակ էր դրել նվաճելու ամ-բողջ Առաջավոր Ասիան: Նա գրավեց Բաբելոնը և Փոքր Ասիա թերակղզին: Իսկ նրա որդին նվաճեց նաև Եգիպտոսը:

Կյուրոս Մեծի պետությունը տարածվում էր ներ-կայիս Հնդկաստանից մինչև Էգեյան ծով: Նախկի-նում ոչ մի պետություն այդքան մեծ տարածք չէր զբաղեցրել:



Կյուրոս Մեծի սեպագիր արձանագրությունը՝ նրա հաղթանակների և բարեգոր-ծությունների մասին:

Հայտնաբերվել է Բաբելոնի պեղումների ժամանակ՝ 1879 թ.: Պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում:

Ե՞րբ պարսիկները թոթափեցին մարական լուծը:
Ի՞նչ նպատակ էր դրել իր առջև Կյուրոս Մեծը:
Թվարկի՛ր նրա նվաճած երկրները:

Աքեմենյան տերությունը

Կյուրոսի որդուց հետո՝ **Ք. ա. 522 թ.**, իշխանությունը զավթեց Աքեմենյան տոհմի ներկայացուցիչ **Դարեհ I–ը**: Նոր էր Դարեհը արքա դարձել, երբ նրա դեմ ապստամ-բեցին ենթակա երկրները: Ճնշելով ապստամբու-թյունները՝ նա խոշոր նվաճումներ իրականացրեց, այդ թվում գրավեց Փոքր Ասիան և Եգիպտոսը: Դարեհը հիմնադրեց **Աքեմենյան տերությունը:**

Քո կարծիքով ինչո՞ւ Դարեհի դեմ ապստամբեցին ենթակա երկրները:

Դարեհ I–ի բարձրաքանդակը Բեհիսթունի ժայռագիր արձանագրության վրա

Աքեմենյան տերությունում ապրում էին զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող տասնյակ ժողովուրդներ՝ բաբելոնցիներ, եգիպտացիներ, հայեր, հույներ և այլն: Դարեհն իր անծայրածիր տերությունը բաժանեց մարզերի, որտեղ կառավարում էին նրա ազգականները և մերձավորները: Նա իրականացրեց բազմաթիվ բարեփոխումներ, որոնց շնորհիվ նորաստեղծ պետությունը արագորեն վերածվեց տնտեսական մեծ ներուժ ունեցող տերության:

Մարզերը պարտավոր էին յուրաքանչյուր տարի պետական գանձարան մուծել հարկեր: Մտցվեց նոր դրամական միավոր՝ ոսկե և արծաթե **դարեհիկ**:

Ինչո՞ւ Դարեհ I–ը իր տերությունը բաժանեց մարզերի:

Դարեհ I–ի ժայռափոր դամբարանը (Իրան)

Կառուցվեցին բարեկարգ ճանապարհներ, որոնք միմյանց էին կապում տերության տարբեր շրջանները: Դրանցից ամենաերկարը շուրջ 2500 կմ ձգվող **«Արքայական ճանապարհն»** էր: Այն սկսվում էր մայրաքաղաք **Շուշից** և արևմուտքում հասնում էր մինչև Էգեյան ծովեզերք: Աքեմենյան արքաները մեծ նշանակություն էին տալիս երկրի տնտեսության զարգացմանը և միջազգային առևտրին:

Դարեհ I–ը սկսեց կառուցել նոր մայրաքաղաք **Պերսեպոլիսը,** որն ավարտվեց նրա հետնորդների օրոք: Իր ժամանակի համար այն քաղաքաշինության գլուխգործոց էր:

Պերսեպոլիսի ընդհանուր տեսարանը

ԷՎՔՍԻՆՅԱՆ ՊՈՆՏՈՍ
Սինոպ
Տրապիզոն
Սամսուն
Սեբաստիա
Արմավիր
Մարաստան
Մարգիանա
Բակտրիա (Բալխ)
Կասապատոս (Բարուկ)
Տաքսիլա
Վրկան
Ռագա
Էկբատան
Բաբիլոնիա
Շուշ
Պասարգադե
Պերսեպոլիս
Քրման
Տարվանա
Սարդիս
Սպարտա
Աթենք
Թեբեն
Մեմֆիս
Թեբե
Վեհեն
Տիրոս
Սիդոն
Դամասկոս
Երուսաղեմ
Գազա
Սարդինիա
Կրետե կղ.
Կիպրոս կղ.
Հարավային Իտալիա
Սիցիլիա
Ալեքսանդրիա
Ամոն
Ամանոս
Ամանոս լեռներ
Ամանոս լեռներ
Ամանոս լեռներ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Փորձի՛ր հիմնավորել, որ Մարաստանը նույնպես ուժեղ պետություն էր:

2. Ո՞ւմ օրոք է կառուցվել «Արքայական ճանապարհը», որքա՞ն էր դրա երկարությունը: Քարտեզի վրա ցո՛ւյց տուր այն: Ճանապարհն անցնո՞ւմ էր Հայաստանի տարածքով:

3. Թվարկի՛ր Դարեհ I–ի իրականացրած վերափոխումները: Պարզաբանի՛ր դրանց նշանակությունը:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Փորձի՛ր բնութագրել Աքեմենյան տերությունը:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Փորձի՛ր կարևորել Աքեմենյան պետության դերը համաշխարհային պատմության մեջ:

§7 | ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Դեմոս — Հին հունական պոլիսի լիիրավ քաղաքացիներ:
Պոլիս — Հին հունական ինքնիշխան քաղաք–պետություն:
Խմբիշխանություն — Կառավարման ձև, երբ իշխանությունն ավագանու ձեռքում է:
Ժողովրդավարություն — Կառավարման ձև, երբ օրենքների ստեղծմանը և կառավարմանը մասնակցում է ողջ ժողովուրդը:
Աշխարհաժողով — Պոլիսի ազատ քաղաքացիներից կազմված ժողովրդական ժողովը՝ գերագույն օրենսդիր մարմինը:
Օստրակիզմ — Աթենքում կիրառվող օրենք, որի նպատակն էր քվեարկության միջոցով երկրից տասը տարով վտարել ժողովրդավարության համար վտանգ ներկայացնող քաղաքացիներին:
Սպարտիատներ — Սպարտայի պոլիսի լիիրավ քաղաքացիները:
Հելոտ — Սպարտայի պոլիսի անազատ բնակչությունը
Ամֆիթատրոն — Թատերական ներկայացման համար կառուցված կիսաշրջանաձև շինություն:
Օլիմպիական խաղեր — Օլիմպիական աստվածներին նվիրված մարմնամարզական մրցումներ:
Հելլենականություն — Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով սկսված դարաշրջան:

ԱՏԼԱՍ ԲԱՌԱՊԱՇԱՐ

Բալկանյան թերակղզի — Թերակղզի Եվրոպայի հարավում:
Էգեյան ծով — Ծով Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի միջև:
Մակեդոնիա — Հին պետություն Բալկանյան թերակղզու հյուսիսում:

Միջավայրը

Հին հունական քաղաքակրթությունը ձևավորվել է **Բալկանյան թերակղզու** հարավում՝ ներկայիս Հունաստանի տարածքում՝ **Էգեյան ծովի** կղզիներում և **Փոքր Ասիա** թերակղզու արևմուտքում: Հունաստանը հիմնա–

կանում լեռնային երկիր է, որտեղ քիչ են երկրագործության համար պիտանի հողերը: Հացահատիկային կուլտուրաների մշակման համար նպաստավոր պայմանների սղությունը խոչընդոտում էր բնակչության կենսապահովման խնդիրը: Այդ պատճառով այստեղ ավելի զարգացած էին անասնապահությունը և այգեգործությունը: Պարենի խնդիրը, ինչպես նաև կլիմայական պայմանների տատանումները պատճառ դարձան, որպեսզի հույների մի մասը արտագաղթեր երկրից: Զարգացած նավագնացության շնորհիվ նրանք Միջերկրական և Սև ծովերի առափնյա շրջաններում հիմնադրեցին նոր բնակավայրեր՝ գաղութներ (օրինակ՝ ներկայիս **Մարսելը, Նեապոլը, Տրապիզոնը** և այլն):

Քարտեզի վրա ցո՛ւց տուր այն տարածքները, որտեղ բնակվել են հին հույները: Հունական ի՞նչ ցեղեր կարող ես նշել:

Հունական քաղաքակրթության սկիզբը

Հունական քաղաքակրթության սկիզբը **Կրետե–Միկենյան** դարաշրջանն է (Ք. ա. III–II հազ.): Այս դարաշրջանում աչքի էր ընկնում հունական ամենախոշոր կղզի Կրետեում ստեղծված պետությունը, որի մայրաքաղաքը **Կնոսոսն** էր:

Ըստ հունական ավանդության՝ Կրետեի արքա **Մինոսը** իրեն էր ենթարկել Էգեյան ծովի ավազանի երկրները և բոլորը նրան հարկատու էին: Նա միաժամանակ պետության աշխարհիկ և հոգևոր գերագույն ղեկավարն էր:

Հնագետները ուսումնասիրել են Կնոսոսի փլատակները: Այն հսկայական պալատական երկհարկ համալիր էր, տեղ–տեղ՝ եռահարկ: Ուներ հարյուրավոր սենյակներ: Դրանք ծառայում էին տարբեր նպատակների՝ արքայական ընդունարաններ, սրբազան արարողությունների սրահներ, կացարաններ, հսկայական պահեստներ: Արքայի իշխանությունը բացարձակ էր: Նա միաժամանակ երկրի գերագույն քուրմն էր:

Կնոսոսի պալատի ավերակները Կրետե կղզում

Կրետեի պետությունը անկում ապրեց Ք. ա. XV դարում մեծ ուժգնության հրաբխի ժայթքման հետևանքով, որից հետո այն նվաճվեց հունալեզու աքայացիների կողմից:

Ի՞նչ են անվանում իշխանության այն ձևը, երբ արքան պետության և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր գերագույն ղեկավարն է:

Ուշադիր լսի՛ր ձայնագրությունը և պատասխանի՛ր հետևյալ հարցերին.

Ի՞նչ է քեզ սովորեցնում Թեսևսի պատմությունը:

Հունաստանի Ք. ա. XII–IX դարերի պատմությունը ստացել է «Հոմերոսյան դարաշրջան» անվանումը: Քո կարծիքով ինչո՞ւ է այդպես կոչվել:

Պոլիսի ձևավորումը

Ք. ա. VIII–VI դարերում սկսում են ձևավորվել բազմաթիվ փոքր քաղաք–պետություններ, որոնք կոչվում էին **պոլիսներ**:

Առավել խոշոր պոլիսներն էին **Կորնթոսը, Աթենքը, Մեգարան, Սպարտան**: Ժողովրդի (**դեմոս**) մեծամասնությունը ազատ գյուղացիներն էին: Բնակչության վերնախավը կազմում էր տոհմային ավագանին, որն ուներ և՛ հող, և՛ հարստություն, և՛ հասարակական բարձր դիրք: Պետության կառավարումը ավագանու ձեռքում էր: Կառավարման այս ձևը կոչվում էր **խմբիշխանություն** (**օլիգարխիա**): Դեմոսի ստորին խավը պայքարում էր ավագանու դեմ իր իրավունքների համար: Շատ պոլիսներում դեմոսը հաղթեց, և ստեղծվեց կառավարման նոր համակարգ՝ **ժողովրդավարություն (դեմոկրատիա)**: Հին Հունաստանի պոլիսներից առավել խոշորը և հզորը Աթենքն ու Սպարտան էին:

Ի՞նչ է դեմոսը: Ովքե՞ր էին կազմում դեմոսի մեծ մասը:

Ի՞նչ են օլիգարխիան և դեմոկրատիան:

Աթենական պոլիսը

Ք. ա. 594 թ. Աթենքում կառավարիչ **Սոլոնի** բարեփոխումների շնորհիվ հաստատվեցին ժողովրդավարական կարգեր: Այսուհետև պոլիսի կառավարման գործին մասնակցում էին բոլոր չափահաս տղամարդիկ: Մարդկանց ծագումն այլևս վճռորոշ նշանակություն չուներ: Աթենքի գերագույն օրենսդիր մարմինը աշխարհաժողովն էր՝ **էկլեսիա**: Այն ընտրում էր կառավարման նոր բարձրագույն մարմին՝ **ստրատեգոսների խորհուրդ**:

Որտե՞ղ է Աթենք քաղաքը. գտե՛ք այն քարտեզի վրա:

Ո՞վ էր Սոլոնը: Ինչո՞ւ նա բարեփոխումներ ձեռնարկեց և ի՞նչ արդյունք ունեցան դրանք:

Աթենքում գործում էր նաև **օստրակիզմի իրավունքը**: Ամեն տարի Աշխարհաժողովի մասնակիցներին առաջադրվում էր հետևյալ հարցը. «Ո՞ւմ ես համարում Աթենքի համար վտանգավոր»: Նախապես բաժանված կավե սալիկների (**օստրակոն**) վրա յուրաքանչյուրը գրում էր նրա անունը, ում համարում էր այդպիսին: Ով ամենից շատ էր հիշատակվում, տասը տարով վտարվում էր քաղաքից: Այն ի սկզբանե նախատեսված էր, որպեսզի թույլ չտրվի որևէ մեկին բռնի ուժով տիրել իշխանությանը: Սակայն ժամանակի ընթացքում օստրակիզմը վերածվեց քաղաքական պայքարի միջոցի:

Աթենքի ակրոպոլիսը

Հին Սպարտայի պոլիսը

Սպարտայի պոլիսը օլիգարխիական բնույթ ուներ: Սպարտայի բնակչությունը բաղկացած էր երկու ոչ իրավահավասար դասերից՝ փոքրաքանակ **սպարտիատներից** և մեծաքանակ **հելոտներից**: Սպարտիատներն իրենց ունեցվածքով և իրավունքներով հավասար էին: Նրանք չէին զբաղվում երկրագործությամբ և արհեստներով, այլ զինվորներ էին և ժամանակի մեծ մասը նվիրում էին մարմնակրթությանը և ռազմական գործին: Սպարտիատները Հին Հունաստանի ամենաարհեստավարժ զինվորներն էին: Նրանք ապրում էին համեստ և չափավոր կյանքով, քչախոս էին: Նրանց քչախոսությունը և կարճ ու կտրուկ պատասխանները դարձել են թևավոր խոսք՝ **լակոնիկ խոսելաոճ**:

Որտե՞ղ էր Սպարտան: Ովքե՞ր էին հելոտները:

Ի՞նչ է նշանակում լակոնիկ խոսելաոճ:

Պատերազմ գնալիս սպարտացի զինվորն ուներ միայն մեկ ճանապարհ՝ հաղթել կամ զոհվել: Որդուն պատերազմ ուղարկող մայրը, նրան տալով վահանը, պատվիրում էր. «**Վահանով կամ վահանի վրա**»: Դա նշանակում էր, որ զինվորը պետք է կա՛մ հաղթի, կա՛մ զոհվի և Սպարտա բերվի վահանի վրա:

Յուրաքանչյուր սպարտացի ընտանիքի տրվում էր հողակտոր՝ այնտեղ ապրող հելոտներով, որոնք պարտավոր էին մշակել հողը և սպարտիատին վճարել հարկ բնամթերքով: Հելոտները զուրկ էին քաղաքացիական իրավունքներից:

Սպարտացի զինվոր

Սպարտայում համատեղ կառավարում էին երկու արքաներ, որոնց իշխանությունը ժառանգական էր: Կար նաև Ծերակույտ, որը կազմված էր 28 անդամից: Նրանք ընտրվում էին ցմահ՝ ամենանշանավոր տոհմերի ներկայացուցիչներից: Արքաների հետ նրանք կազմում էին պետական կառավարման գերագույն մարմինը:

Հասարակական ի՞նչ դասերի էր բաժանված Սպարտան: Ի՞նչ իրավունքներ ուներ դրանցից յուրաքանչյուրը:

Փորձի՛ր բացատրել, թե ինչու էր ռազմական գործը Սպարտայում մեծ դեր խաղում:

Հույն–պարսկական պատերազմները

Ք. ա. V դարում Աքեմենյան Իրանը փորձեց նվաճել Հունաստանը: **Ք. ա. 490 թ.** Աթենքը **Մարաթոնի ճակատամարտում** պարտության մատնեց պարսիկներին: Ք. ա. 480–479 թթ. աքեմենյան արքա **Քսերքսեսը** ձեռնարկեց մեծ արշավանք դեպի Հունաստան: Պատերազմի սկզբում **Թերմոպիլյան կիրճում** պարսկական վիթխարի բանակը հաղթեց Սպարտայի արքա **Լեոնիդասի**՝ 300 զինվորներից բաղկացած փոքրաթիվ ջոկատին. Լեոնիդասը և նրա բոլոր զինվորները հերոսաբար զոհվեցին անհավասար մարտում: Սակայն հետագայում հույները կարողացան հասնել հաջողության և վտարել պարսիկներին:

Ե՞րբ են տեղի ունեցել հույն–պարսկական պատերազմները: Ի՞նչ նշանավոր ճակատամարտեր են հայտնի այդ պատերազմներից:

Ո՞ր կողմը հաղթանակ տարավ հույն–պարսկական պատերազմներում:

Պերիկլես

Սերում էր ազնվական ընտանիքից, ստացել էր համակողմանի կրթություն, փայլուն հռետոր էր: Միտքն ու գործը միտված էին ժողովրդի բարեկեցության ապահովմանը: Իզուր չէ, որ նրա կառավարման տարիները համարվում են պոլիսային ժողովրդավարության ծաղկման ժամանակաշրջան:

Աթենական պետության ոսկեդարը. Պերիկլես

Հույն–պարսկական պատերազմներից հետո Աթենքը մեծ վերելք ապրեց շնորհիվ ականավոր պետական գործիչ **Պերիկլեսի** գործունեության:

Պերիկլեսը կարգավորեց Աթենքի հասարակական և քաղաքական կյանքը: Անկախ իրենց ունեցվածքից և դիրքից՝ Աթենքի քաղաքացիներն օրենքի առաջ հավասար էին:

Պետական պաշտոն վարելու համար սահմանվեց աշխատավարձ: Ամենաաղքատ քաղաքացիներն անգամ հնարավորություն ստացան մասնակցելու պետական գործերին:

Մեծացավ աշխարհաժողովի դերը: Այն ընդունում էր օրենքները և հետևում դրանց կատարմանը: Աշխարհաժողովը քննարկում էր պաշտոնյաների հաշվետվությունը, որոշում արտաքին քաղաքականության խնդիրները:

Պերիկլեսյան Աթենքը դարձավ արվեստների և գիտության կենտրոն: Այստեղ ապրում ու ստեղծագոր–

ծում էին շատ նշանավոր պատմագիրներ, իմաստասերներ, թատերագիրներ, ճարտարապետներ: Քաղաքում կառուցվեցին բազմաթիվ տաճարներ և պետական շինություններ: Աթենքը վերածվեց Հունաստանի մշակութային կենտրոնի:

Պերիկլեսի շրջանի Աթենքը համարվում է ժողովրդավարության և հունական մշակույթի զարգացման գագաթնակետը:

Պետական կառավարման համակարգում ի՞նչ փոփոխություններ կատարեց Պերիկլեսը: Գնահատի՛ր Պերիկլեսի գործունեությունը:

Պոլիսային քաղաքակրթության անկումը

Ք. ա. 431–404 թթ. հունական պոլիսները Աթենքի և Սպարտայի գլխավորությամբ պատերազմում էին միմյանց դեմ: Պատերազմին միջամտեց նաև Աքեմենյան տերությունը, որին ձեռնտու էր հունական պետությունների թուլացումը: Չնայած Սպարտան հաղթեց, սակայն պատերազմը քայքայեց պոլիսների տնտեսությունը և սրեց ներքին հակասությունները:

Այս ծանր պայմաններում առաջատար պոլիսներում **դեմոսը սկսեց վերասերվել ամբոխի:** Նրան օտար դարձան վեհ գաղափարները: Հայտնվեց քաղաքական գործիչների մի նոր սերունդ, որն առաջնորդվում էր ոչ թե հասարակության, այլ սեփական շահերով: Նրանց կոչում էին **ամբոխավարներ**: Պոլիսային համակարգի անկումից օգտվեց Բալկանյան թերակղզու հյուսիսում գտնվող Մակեդոնիան, որը նվաճեց Հունաստանը:

Ե՞րբ է տեղի ունեցել հունական պոլիսների միջև պատերազմը: Ո՞վ հաղթեց այդ պատերազմում:

Ե՞րբ և ինչո՞ւ անկում ապրեց ժողովրդավարությունը: Ի՞նչ է ամբոխավարությունը:

Ո՞րտեղ էր Մակեդոնիան: Գտե՛ք այն քարտեզի վրա:

Հին հունական մշակույթը

Հույները ստեղծեցին մշակութային անանց արժեքներ, որոնք կազմում են արդի եվրոպական մշակույթի հիմքը:



Հոմերոս



Կարմրանկար հունական սափոր

Սափորն օգտագործվում էր հեղուկ նյութերի պահպանման և տեղափոխման համար: Դրանց արտադրությամբ աչքի էր ընկնում հատկապես Կորնթոսը, իսկ հետագայում նաև Աթենքը: Վարպետ նկարիչները սափորների պատերը նկարազարդում էին՝ պատկերելով հին հույների (և հատկապես ավագանու) կյանքի տարբեր տեսարաններ՝ սրբազան ծիսակատարություններ, խնջույքներ, մարզական խաղեր և այլն:

Ք. ա. VIII դ. ստեղծվեց հունական այբուբենը, որի հիման վրա սկզբնավորվեց գրավոր մշակույթը: Պոլիսներում սկսեցին պետական ծախսերով բացել տարրական դպրոցներ: Երեխաներին սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել, երգել: Հունաստանում գրաճանաչության մակարդակը բարձր էր: Հետագայում բացվեցին նաև բարձրագույն դպրոցներ:

Հին հունական գրականությունը հնագույնն է Եվրոպայում: Հոմերոսի **«Իլիական»** և **«Ոդիսական»** պոեմները համարվում են համաշխարհային գրականության գլուխգործոցներ: Հետագա սերունդներն այդ պոեմներն անվանել են «հունական կյանքի հանրագիտարան»:

Հունական աստվածները և հերոսները դարձել են համաշխարհային գրականության մեջ ամենահիշատակվող կերպարները:

Հունաստանում հատկապես զարգացած էին ճարտարապետությունն ու քանդակագործությունը: Ճարտարապետական մեծարժեք շինություններ էին ստեղծվում բոլոր զարգացած պոլիսներում: Աթենքի հովանավոր աստվածուհուն՝ Աթենասին նվիրված տաճարը՝ **Պարթենոն,** համարվում է համաշխարհային արվեստի գլուխգործոցներից մեկը:

Մարմնակրթությունը հին հույների կյանքի անբաժանելի մասն էր: Նրանց կարծիքով մարդը պետք է ձգտեր կատարելության ինչպես մտավոր, այնպես էլ ֆիզիկական զարգացման գործում: Կառուցվում էին **գիմնասիոններ**, որտեղ մարդիկ զբաղվում էին տարբեր մարզաձևերով՝ **վազք, ըմբշամարտ, բռնցքամարտ, նետաձգություն, ձիավարություն** և այլն: Շուտով սկսեցին կազմակերպել համահունական մրցումներ: Դրանցից ամենատարածվածը օլիմպիական աստվածների պատվին կազմակերպվող խաղերն էին, որոնք անցկացվում էին չորս տարին մեկ անգամ: Առաջին **օլիմպիական խաղերը** կազմակերպվել են **Ք. ա. 776 թ.**:

Ե՞րբ են անցկացվել Առաջին օլիմպիական խաղերը: Այսօր անցկացվո՞ւմ են օլիմպիական խաղեր: Ի՞նչ գիտեք դրանց մասին:

Դիոնիսոս աստծուն նվիրված ծիսակատարություններից ծնվեց **թատրոնը:** Ներկայացումների համար

կառուցում էին կիսաշրջանի տեսքով շինություններ, որոնք կոչվում էին **ամֆիթատրոններ**: Թատրոնի ճարտարապետությունը ընդօրինակվեց ժամանակակից աշխարհում և տարածվեց՝ դառնալով ներկայիս արևմտյան թատրոնի հիմքը:

Հույները մեծ ներդրում են ունեցել նաև գիտության տարբեր ճյուղերի զարգացման ոլորտում:

Հույները համարվում են արևմտյան իմաստասիրական դպրոցի հիմնադիրները: Հունաստանի ամենանշանավոր իմաստասերներն էին **Սոկրատեսը, Պլատոնը** և **Արիստոտելը**:

Հույն բժիշկ **Հիպոկրատեսը** համարվում է բժշկության հայրը, իսկ **Հերոդոտոսը՝** պատմահայրը: Նրա ջանքերով պատմագիտությունը դարձավ առանձին գիտաճյուղ:

Հին Հունաստանում է ձևավորվել նաև **Դեմոկրիտեսի ատոմային ուսմունքը**: Այն բնության և ողջ տիեզերքի մասին առաջին կառուցվածքային բացատրությունն էր:

Հույն գիտնական **Պյութագորասի** աշխատություններն ընկած են **մաթեմատիկայի** զարգացման հիմքում: Նա նաև առաջինն էր, ով հիմնավորեց **երկրի գնդաձև լինելը**:

Հին հունական **ժողովրդավարությունը** մարդկության պատմության ամենամեծ նվաճումներից մեկն է համարվում:



Սկավառականետորդը

Էպիդավրոսի թատրոնը



Զևսի արձանը

Օլիմպիական աստվածները

Զևս — աստվածների հայրը

Հերա — ընտանիքի, մայրության դիցուհին էր, Զևսի կինը

Ապոլոն — Արեգակի, գուշակության, բժշկության աստվածը, հովանավորում էր գիտությունները, արվեստները և արհեստները

Աֆրոդիտե — գեղեցկության ու սիրո դիցուհին

Աթենաս — իմաստության, ճարտարության և արհեստների դիցուհին

Հերմես — Զևսի բանբերը

Արես — ռազմի աստվածը

Դիոնիսոս — պտղաբերության, գինու և զվարճանքի աստվածը:

Պոսեյդոն — ծովերի և օվկիանոսների տիրակալը, նավագնացների հովանավորը

Հադես — մեռյալների, ստորերկրյա աշխարհի աստվածը

Տետրում լրացրո՛ւ աղյուսակ՝ ըստ տրված օրինակի.

Հունական դիցարան	Ինչի աստվածն է	Հայկական դիցարանի համարժեք աստվածը
Ափրոդիտե	Սիրո և գեղեցկության	Աստղիկ

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ էին սովորեցնում Հին Հունաստանի դպրոցներում:

2. Հունական ո՞ր պոեմներն են համաշխարհային գրականության գլուխգործոցներ:

3. Ինչպե՞ս է առաջացել թատրոնը:

4. Ու՞մ պատվին էին անցկացվում Օլմպիական խաղերը:

5. Նշի՛ր մի քանի հայտնի հույն փիլիսոփաների անուններ:

6. Ի՞նչ ներդրում են ունեցել հույները գիտության զարգացման բնագավառում:

7. Ո՞վ է համարվում բժշկության հայրը:

8. Ո՞վ է հին հունական պատմահայրը:

9. Ո՞վ է ստեղծել ատոմային ուսմունքը:

10. Ու՞մ աշխատություններն են զարգացրել մաթեմատիկան:

Ալեքսանդրի Արևելյան արշավանքը

Ք. ա. IV դարի երկրորդ կեսին հունական պոլիս-ները նվաճվեցին Մակեդոնիայի կողմից: Իսկ **336 թ.** հոր սպանությունից հետո գահը ժառանգեց Ալեք-սանդրը: Նա ձեռնարկեց մեծ արշավանք դեպի Աքե-մենյան Իրան:

Ք. ա. 334 թ. սկսվեց Ալեքսանդրի հաղթարշավը: Նա շուտով նվաճեց Փոքր Ասիան, Ասորիքը, Փյունիկիան, Պաղեստինը և Եգիպտոսը: Գլխավոր ճակատամարտը մակեդոնական և պարսկական բանակների միջև տե-ղի ունեցավ **Ք. ա. 331 թ.** Հյուսիսային Միջագետքի **Գավ-գամելա վայրում**: Պարսկական զորքը ջախջախվեց: Ալեքսանդրը գրավեց պարսից տերության գլխավոր քաղաքները:

Այնուհետև նրա բանակը ներխուժեց Հնդկաստան, սակայն զինվորները հրաժարվեցին շարունակելու արշավանքը: Ալեքսանդրն իր զորքով վերադարձավ տերության մայրաքաղաք Բաբելոն: Նրա մահից հետո իր ստեղծած տերությունը տրոհվեց ինքնուրույն պե-տությունների:

Ալեքսանդր Մակեդոնացու սարկոֆագը

Սարկոֆագի վրա քանդակված են դրվագներ նրա հերոսական արշավանքներից

Հելլենականություն

Ալեքսանդր Մակեդոնացու տերությունում բնակու-թյուն հաստատեցին հույներ և մակեդոնացիներ: Նրանք իրենց հետ բերեցին հունարենը, կենցաղը և կրոնական հավատալիքները: Տեղի ժողովուրդներից հույները սովորեցին նրանց ավանդույթները և հավա-տալիքները: Տեղացի և եկվոր բնակչության միջև սերտ շփումներ հաստատվեցին: Հունարենը և հունական մշակույթը մեծ տարածում ստացան: **Հունարենը** դար-ձավ միջազգային հաղորդակցության լեզու: Հունական աստվածների պաշտամունքը տարածվեց Արևելքում:

Երկու քաղաքակրթությունների սերտաճումը հատ-կապես արագ էր ընթանում նորաստեղծ քաղաքնե-րում՝ **Ալեքսանդրիա, Անտիոք, Սելևկիա** և այլն: Ալեք-սանդրը խրախուսում էր հույների և արևելքի ժողո-վուրդների միավորումը: Նրա նպատակն էր համադրել այն լավագույնը, որ ստեղծել էին հույները և Արևելքի ժողովուրդները: Սկսվեց **հելլենականության** (հունա-

Պտղոմեոս I
Լուվրի թանգարան. Փարիզ

Սելևկոս Նիկատորի պատկերով դրամ
Մետրոպոլիտեն թանգարան. Նյու Յորք

կանության) ժամանակաշրջանը: Ընդլայնվեց և ամրապնդվեց նաև համաշխարհային առևտուրը: Հույները շատ բան ընդօրինակեցին արևելյան գիտությունից և մշակույթից:

Հունաստանի և Արևելքի արժեքների այս համադրությունը համաշխարհայնացման առաջին պատմական փորձն էր:

Հելլենիստական պետությունները

Մակեդոնացու տերության տրոհման արդյունքում Եգիպտոսում և նրա հարակից տարածքներում մակեդոնացի զորավար **Պտղոմեոսը** ստեղծեց պետություն: Դրա մայրաքաղաքն էր Ալեքսանդրի հիմնած **Ալեքսանդրիան**: Քաղաքը դարձավ համաշխարհային մշակույթի, գիտության և արվեստների կենտրոն: Այստեղ էին **Ալեքսանդրիայի գրադարանը** և Հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը համարվող շուրջ 120 մ բարձրություն ունեցող **Փարոսը**: Ստեղծվեց նշանավոր **Մուսեյոնը,** որտեղ հրավիրվեցին աշխատելու ժամանակի խոշոր գիտնականները:

Հելենիստական ամենախոշոր պետությունը Ալեքսանդրի զորավար **Սելևկոսի** պետությունն էր: Այն ընդգրկում էր Ալեքսանդրի նվաճած ասիական տարածքների մեծ մասը: Կենտրոնը **Անտիոք** քաղաքն էր: Անտիոքը նույնպես դարձել էր հելլենիստական մշակույթի և գիտության գլխավոր կենտրոններից մեկը:

Հունական քաղաքակրթությունը կարևորագույն դեր է խաղացել միջնադարյան և ժամանակակից քաղաքակրթության ձևավորման գործում:

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Ո՞ր դարաշրջանն է ընդգրկում հունական քաղաքակրթության սկիզբը, և ինչպե՞ս է այն կոչվում:*
2. *Ո՞վ է ստեղծել Կրետեի միասնական պետությունը: Ո՞րն էր մայրաքաղաքը:*
3. *Հունական ո՞ր ցեղերը նվաճեցին Կրետեն:*
4. *Թվարկի՛ր այն տարածքները, որտեղ հիմնվեցին հունական գաղութներ:*

5. Ի՞նչ է պոլիսը:
6. Ու՞մ օրոք Աթենքը հասավ իր ծաղկման և հզորության գագաթնակետին:
7. Ո՞րն էր Ալեքսանդրի արևելյան արշավանքի ամենակարևոր ճակատամարտը:
8. Ո՞րն էր Ալեքսանդր Մակեդոնացու ստեղծած տերության մայրաքաղաքը:
9. Ի՞նչ նոր քաղաքներ հիմնադրվեցին Ալեքսանդրի արշավանքի ժամանակ:
10. Ո՞վ և ե՞րբ է հիմնադրել հելլենիստական եգիպտոսը: Ո՞րն էր դրա մայրաքաղաքը:
11. Ո՞վ և ե՞րբ է հիմնադրել Սելևկյան տերությունը:
12. Քո կարծիքով ինչո՞ւ Ալեքսանդրի մահից հետո նրա ստեղծած աշխարհակալ տերությունը արագորեն տրոհվեց:
13. Թվարկի՛ր Ալեքսանդր Մակեդոնացու նվաճած երկրներն ու տարածքները:
14. Բացատրի՛ր «հելլենականություն» հասկացությունը:
15. Ալեքսանդրի տերության տարածքում ի՞նչ հելլենիստական պետություններ ստեղծվեցին:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Գծապատկերի միջոցով ցո՛ւց տուր Աթենքի և Սպարտայի կառավարման համակարգերը: Օգտվելով գծապատկերից՝ դասարանին ներկայացրո՛ւ համակարգերի նմանություններն ու տարբերությունները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դասարանով քննարկե՛ք աթենացի հայտնի զորավար Թեմիստոկլեսի հետևյալ արտահայտությունը. «Հայրենիքը պոլիսի ո՛չ պատերն են, ո՛չ տաճարները, ո՛չ էլ անգամ նախնիների գերեզմանները, այլ քաղաքացիները և նրանց օրենքները»:

Համաձա՞յն եք նրա տեսակետին. հիմնավորե՛ք ձեր պատասխանը: Տվե՛ք հայրենիքի ձեր բնութագրումը:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. Հին Հունաստանը չնայած մարդկային և նյութական սահմանափակ հնարավորություններ ուներ, սակայն մեծ է նրա ավանդը համաշխարհային պատմության մեջ:
   Փորձի՛ր հիմնավորել հետևյալ գնահատականը.
   «Հին Հունաստանից է սկսվում արդի Եվրոպան»:
2. Ալեքսանդր Մակեդոնացին համաշխարհային պատմության մեծագույն դեմքերից է: Գնահատի՛ր նրա գործունեությունը իր ժամանակաշրջանի և այսօրվա տեսանկյունից:
3. Ե՞րբ և ի՞նչ պատճառներով անկում ապրեց ժողովրդավարությունը Աթենքում: Ինչի՞ հանգեցրեց դա: Չէ՞ր կարող արդյոք ամբոխավարությունն ապահովել Աթենքի հետագա զարգացումը:

§8 | ՀԻՆ ՀՌՈՄ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Ծերակույտ — Տոհմերի ավագներից կազմված խորհուրդ:
Պատրիկ — Տոհմային ավագանու ներկայացուցիչ:
Պլեբեյ — Վաղ Հռոմում քաղաքացիական իրավունքներից զուրկ բնակչությունը:
Մագիստրատուրա — Գործադիր իշխանության մարմինների ամբողջությունը:
Լատիններ, սաբիններ, էտրուսկներ — Հին Իտալիայի ցեղեր:
Կոնսուլ — Պետական բարձրագույն գործադիր պաշտոնյա:
Ժողովրդական տրիբուն — Պլեբեյների կողմից ընտրվող անձ, որը կարող էր արգելափակել ցանկացած օրենքի նախագիծ:
Դիկտատոր — Սենատի կողմից արտակարգ իրավիճակներում ժամանակավորապես նշանակվող և անսահմանափակ իշխանությամբ օժտված անձ:
Իմպերատոր — Պատերազմում հաղթած զորավարին ժամանակավորապես տրվող պատվատիտղոս:
Դոմինատ — Դիոկղետիանոս կայսեր ստեղծած միանձնյա կառավարման համակարգը:
Պրովինցիա — Նահանգ:
Գլադիատորներ — Հանդիսականների առջև նրանց զվարճանքի համար միմյանց դեմ մարտնչող ստրուկներ: Բառացի նշանակում է «սուսերակիր»:
Հաղթակամար — Նշանավոր իրադարձության պատվին կառուցված կամարակապ դարպաս:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Պրինցիպատ — Հռոմի պատմության Վաղ կայսրության շրջանի անվանումը:
Ապենինյան թերակղզի — Թերակղզի Եվրոպայի հարավում:
Հռոմուլոս — Ըստ ավանդության՝ Հռոմի առաջին արքան:
Կարթագեն — Հնագույն քաղաք Հյուսիսային Աֆրիկայում:
Հաննիբալ — Կարթագենի նշանավոր զորավար:
Հուլիոս Կեսար — Հռոմի ամենաազդեցիկ քաղաքական գործիչներից (Ք. ա. 100–44 թթ.):
Օկտավիանոս — Հուլիոս Կեսարի քրոջ թոռը, գահակալել է Ք. ա. 27 – Ք. հ. 14 թթ.:
Դիոկղետիանոս — գահակալել է 284–305 թթ.:
Կոստանդիանոս Մեծ — գահակալել է 306–337 թթ.:
Կոլիզեում — Հռոմի ամենամեծ ամֆիթատրոնը:

Վաղ Հռոմը

Հռոմեական քաղաքակրթությունը ձևավորվել է **Ապենինյան թերակղզում**: Այստեղ կան ջրառատ նավարկելի գետեր, իսկ հողը բերրի է: Բարենպաստ կլիմայական և աշխարհագրական պայմանների շնորհիվ երկրագործությունը և անասնապահությունը վաղ ժամանակներից կարևոր տեղ ունեին բնակչության կյանքում:

Թերակղզու կենտրոնական մասում **լատինական** ցեղերը Ք. ա. I հազ. առաջին կեսին հիմնեցին բազմաթիվ բնակավայրեր: Դրանցից ամենախոշորը **Հռոմ** քաղաքն էր: Ըստ ավանդության՝ քաղաքը հիմնադրվել էր **Հռոմուլոսի** կողմից յոթ բլուրների վրա **Ք. ա. 753** թ.:

Սկզբում Հռոմում գոյություն ուներ արքայական իշխանություն: Սակայն Ք. ա. VI դարի վերջերին հռոմեացիները վտարեցին վերջին արքային, և սկսվեց Հին Հռոմի պատմության հանրապետության շրջանը:

Նկարագրի՛ր Ապենինյան թերակղզու աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները:

Որտե՞ղ և ե՞րբ է հիմնվել Հռոմ քաղաքը և ո՞ր ցեղի կողմից:

Ըստ ավանդության՝ ո՞վ և ե՞րբ է հիմնադրել այն:

Վաղ Հռոմի սոցիալական–քաղաքական կարգը

Արքայական դարաշրջանի Հռոմում (Ք. ա. VIII–VI դդ.) հիմնականում ապրում էին երեք ցեղեր՝ **լատիններ, սաբիններ, էտրուսկներ:** Նրանց տոհմերի ավագներից կազմվում էր **Ծերակույտը՝ Սենատ**: Այն քննարկում էր այն բոլոր հարցերը, որոնք հետո պետք է լուծվեին ժողովրդական ժողովում: Բոլոր գործադիր պաշտոնյաները հաշվետու էին ծերակույտի առջև:

Ի՞նչ ցեղեր էին ապրում Ապենինյան թերակղզում:

Ներկայացրո՛ւ ժողովրդական ժողովի դերը հռոմեացիների կյանքում:

Ի՞նչ էր սենատը:

Հռոմի խորհրդանիշը՝ կերակրող գայլը

Ըստ ավանդության՝ լատինական քաղաքներից մեկում արքայի դուստրը ռազմի Մարս աստծուց ունեցավ երկվորյակ՝ Հռոմուլոսին և Հռեմոսին: Արքայի եղբայրը, վախենալով, որ երեխաները կժառանգեն գահը, որոշեց ազատվել նրանցից. դրեց կողովը և նետեց Տիբրոս գետը: Սակայն ալիքները նրանց ափ հանեցին, էգ գայլն էլ կերակրեց: Մի հովիվ մեծացրեց ու դաստիարակեց նրանց: Եղբայրները վրեժ լուծեցին թշնամուց: Որոշեցին հիմնել իրենց քաղաքը: Այնտեղ, որտեղ ալիքները նրանց ափ էին հանել, սկսեցին քաղաք կառուցել: Բայց վեճ ծագեց, և Հռոմուլոսը սպանեց Հռեմոսին: Հռոմուլոսը ավարտին հասցրեց քաղաքի շինարարությունը և իր անունով կոչեց Հռոմ: Քաղաքի խորհրդանիշը դարձավ էգ գայլը: Տարբեր վայրերից մարդիկ եկան և բնակվեցին Հռոմում: Հրապարակում կատարվեց հանդիսավոր ծիսակատարություն. փորվեց մի փոս, և յուրաքանչյուրն այնտեղ լցրեց իր հայրենիքից բերած հողը:

Հռոմեական Ծերակույտը

Հռոմի բնակչությունը բաժանվում էր երկու խավի՝ **պատրիկների** (վերնախավ, ազնվատոհմիկներ) և **պլեբեյների** (բառացի՝ դրսից լցված): Պլեբեյներն ունեին մասնավոր սեփականություն, զբաղվում էին երկրագործությամբ, արհեստներով, առևտրով, սակայն չէին կարող մասնակցել պետության կառավարմանը: Երկարատև պայքարից հետո Ք. ա. III դարում պլեբեյները նույնպես դարձան Հռոմի լիիրավ քաղաքացիներ: Նրանց իրավունքները հավասարեցվեցին պատրիկների իրավունքներին:

Ովքե՞ր էին պատրիկները և պլեբեյները:
Ո՞ր իրավունքներից չէին օգտվում պլեբեյները:

Հռոմի հանրապետությունում գոյություն ուներ ընտրովի գործադիր իշխանության ճյուղավորված համակարգ՝ **մագիստրատուրա**: Գերագույն մագիստրատները երկու **կոնսուլներն** էին: Նրանք ընտրվում էին մեկ տարով և ղեկավարում էին նաև բանակը: Հռոմում կարևոր պաշտոնյա էր նաև **ժողովրդական տրիբունը**: Նրա անձն անձեռնմխելի էր, և նա **վետոյի** (լատիներեն՝ արգելում եմ) իրավունք ուներ: Կարող էր արգելք դնել յուրաքանչյուր որոշման կամ օրենքի նախագծի վրա:

Հռոմեացի սենատոր

Պետության համար արտակարգ ծանր իրավիճակներում Հռոմում 6 ամիս ժամկետով ընտրվում էր արտակարգ լիազորություններով օժտված պաշտոնյա՝

դիկտատոր: Նա կարող էր այդ ընթացքում կառավարել՝ առանց հաշվի առնելու պետական մարմինների կարծիքը: Մագիստրատուրաներում աշխատանքը չէր վարձատրվում, քանի որ դա համարվում էր ոչ թե աշխատանք, այլ մարդուն տրված պատվավոր գործ:

Այսպիսով՝ **Ք. ա. VI–III դդ.** Հռոմեական պետությունում ձևավորվեց հանրապետական՝ ժողովրդավարական կառավարման համակարգ, որը գոյատևեց մինչև Ք. ա. I դ. վերջերը:

Ի՞նչ էր մագիստրատուրան: Ո՞վ էր դիկտատորը:

Հռոմեական պետության վերելքը

Հռոմը մշտապես պատերազմներ էր մղում իր հարևանների դեմ: Այդ պատերազմների արդյունքում Ք. ա. III դարում ամբողջ թերակղզին ընկավ Հռոմի տիրապետության տակ:

Իտալիայի նվաճումից հետո Հռոմը բախվեց Միջերկրական ծովի արևմտյան մասի մեկ այլ հզոր պետության՝ **Կարթագենի** հետ: Պատճառը հարուստ Սիցիլիա կղզու նկատմամբ վերահսկողության հաստատումն էր: Չնայած կարթագենցի նշանավոր զորավար **Հաննիբալի** արշավանքին՝ երկարատև պատերազմներում հռոմեացիներին հաջողվեց հաղթել կարթագենցիներին: Նրանք նվաճեցին Կարթագեն քաղաքը և հիմնահատակ ավերեցին: Այսպիսով Հռոմեական պետությունը վերածվեց Միջերկրական ծովի արևմուտքի ամենահզոր պետության:

Հռոմեական լեգիոնի զինանշանի օրինակ

SPQR հապավումը լատիներեն նշանակում է «Սենատը և Հռոմի ժողովուրդը»:

Հաննիբալն իր զորքով անցնում է Ալպերը

Քո կարծիքով ո՞րն էր Հռոմի և Կարթագենի բախման գլխավոր պատճառը:

Ո՞վ էր կարթագենցիների նշանավոր առաջնորդը:

Լուծելով Կարթագենի խնդիրը՝ հետո Հռոմը սկսեց ծավալվել դեպի արևելք, որտեղ հզոր հելլենիստական պետությունները՝ **Մակեդոնիան, Եգիպտոսը, Սելևկյան** տերությունն էին: Հռոմեացիները մեկը մյուսի հետևից պարտության մատնեցին Մակեդոնիային և Սելևկյան պետությանը:

Շարունակելով իրենց առաջխաղացումը՝ հռոմեացիները պատերազմներ սկսեցին նաև **Պոնտոսի** և **Մեծ Հայքի** դեմ: Դրանց արդյունքում Ք. ա. I դարում հռոմեացիների վերահսկողության տակ անցան ամբողջ **Փոքր Ասիան, Ասորիքը** և **Փյունիկիան**:

Ի՞նչ երկրներ է նվաճել Հռոմը Ք. ա. III–I դարերում: Գտի՛ր այդ երկրները քարտեզի վրա: Այսօր ի՞նչ պետություններ կան այդ տարածքներում:

Հռոմեական կայսրության առաջացումն ու հզորացումը

Հուլիոս Կեսար

Հսկայական նվաճումներին, երկիր մուտք գործող խոշոր ռազմավարին զուգահեռ Հռոմում որոշ զորավարներ և քաղաքական գործիչներ մեծ իշխանություն կենտրոնացրին իրենց ձեռքում: Հենվելով իրենց բանակների վրա՝ երբեմն նրանք զավթում էին իշխանությունը:

Ք. ա. 60 թ. երեք նշանավոր զորավարներ՝ **Հուլիոս Կեսարը, Գնեոս Պոմպեոսը** և **Մարկոս Կրասոսը,** ստեղծեցին **առաջին եռապետությունը**: Փաստացի նրանք էին կառավարում Հռոմը: Սակայն նրանց միությունն անկայուն էր: Ք. ա. 53 թ. պարթևների դեմ ձեռնարկած պատերազմում Կրասոսի զոհվելուց հետո Պոմպեոսի և Կեսարի հարաբերությունները լարվեցին: Յուրաքանչյուրը ձգտում էր մենիշխանության:

Գնեոս Պոմպեոս

Ովքե՞ր էին փորձում Հռոմում հաստատել սեփական գերիշխանությունը:

Ե՞րբ է ստեղծվել առաջին եռապետությունը Հռոմում: Ովքե՞ր ձևավորեցին այն:

Նրանց միջև Ք. ա. 49 թ. սկսվեց քաղաքացիական պատերազմ: Պոմպեոսը սպանվեց և Կեսարը զավթեց իշխանությունը Հռոմում:

Սակայն Կեսարի հակառակորդները դավադրություն կազմակերպեցին և Ք. ա. 44 թ. Ծերակույտի դահլիճում սպանեցին նրան:

Կեսարը ե՞րբ զավթեց իշխանությունը Հռոմում:
Քո կարծիքով ինչո՞ւ Կեսարին սպանեցին:

Գայոս Օկտավիանոս (Օգոստոս)

Կեսարի սպանությունից հետո՝ **Ք. ա. 43 թ.**, ստեղծվեց **երկրորդ եռապետությունը,** որտեղ գլխավոր դերը պատկանում էր Կեսարի ազգական **Օկտավիանոսին**: Հռոմում ընթացած քաղաքացիական պատերազմում հաղթեց Օկտավիանոսը: Նա սկսեց միանձնյա կառավարել: Աստիճանաբար ձևավորվեց նրա անձնիշխանությունը: **Ք. ա. 27 թ.** նա ստացավ պատվավոր **Օգոստոս** («Բարձրացյալ») մականունը: Դա ընդգծում էր Օկտավիանոսի անձը՝ որպես պետության առաջին դեմքի: Շուտով նրան տրվեց **իմպերատոր** տիտղոսը, այսինքն՝ բարձրագույն զինվորական իշխանությունը: Փաստացի պետական պաշտոնների մեծ մասը պահպանվել էր, սակայն իշխանությունը ամբողջովին կենտրոնացել էր Օգոստոսի ձեռքում: Նրանով սկիզբ առավ Հռոմի պատմության մի նոր փուլ, որը ստացել է **Վաղկայսրություն** կամ **Պրինցիպատ** անվանումը:

Ք. հ. II դարում Հռոմեական կայսրությունը հասավ իր տարածքային ամենամեծ ընդգրկմանը: **Տրայանոս** կայսրը գրավեց **Դակիան** (ներկայիս Ռումինիան) և **Միջագետքը**: Դա կայսրության ծավալապաշտության ավարտն էր: Դրանից հետո կայսրությունը ստիպված էր մտածել իր սահմանների պաշտպանության մասին:

Ե՞րբ է ձևավորվել երկրորդ եռապետությունը:
Ո՞վ էր Օկտավիանոսը: Ի՞նչ է նշանակում Օգոստոս:
Ի՞նչ փոփոխություններ կատարեց Օգոստոսը կառավարման համակարգում:
Ինչպե՞ս է կոչվում Օգոստոսի հաստատած կառավարման համակարգը:

Կայսրության հռոմեականացումը

Հռոմեական կայսրությունը նորանվաճ տարածքներում ստեղծում էր նահանգներ՝ **պրովինցիա**: Այնտեղ հաստատվում էին Իտալիայից եկած առևտրականներ, հողատերեր և վաշխառուներ, որոնք կազմում էին բնակչության արտոնյալ խավը:

Հռոմեացիները գիտակցում էին, որ միայն ռազմական հարկադրանքով հնարավոր չէ կայուն գերիշխանություն ապահովել հպատակեցված երկրներում: Անհրաժեշտ էր տեղի բնակչությանը ներառել կայսրության քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային համակարգում: **Այդ նպատակով իրականացվում էր հռոմեականացման քաղաքականություն:**

Տեղական բնակչության մի մասին տրվում էր հռոմեական քաղաքացիություն: Հռոմեացիները նպաստավոր պայմաններ էին ստեղծում տնտեսության զարգացման համար, հիմնում էին բարեկարգ ճանապարհներ: Լայնորեն ներթափանցում էր հռոմեական մշակույթը՝ դպրոցների բացում, լատիներենի դասավանդում, քաղաքների հիմնում և այլն:



Ի՞նչ է նշանակում պրովինցիա:

Ի՞նչ քաղաքականություն էին վարում հռոմեացիները պրովինցիաներում:

Ներկայացրո՛ւ այդ քաղաքականության արդյունքները:

Ստրուկները

Հռոմեական պետությունում մեծ թիվ էին կազմում ստրուկները: Հսկայական նվաճումների հետևանքով գերի վերցված կամ նվաճված երկրների բնակչության զգալի մասին հռոմեացիները ստրկացնում էին: Հատկապես բարձր էին գնահատվում հույն ստրուկները, որոնք սովորաբար գրագետ էին: Մեծահարուստ հռոմեացիները նրանց ձեռք էին բերում որպես իրենց երեխաների ուսուցիչներ և դաստիարակներ:

Ֆիզիկապես ուժեղ ստրուկներից պատրաստում էին **գլադիատորներ**: Նրանք հատուկ կառուցված շենքերում՝ ամֆիթատրոններում, կռվում էին այլ գլադիատորների կամ կենդանիների դեմ: Այդ արյունալի ներկայացումները հռոմեացիների հիմնական զվարճանքներից էին:

Ովքե՞ր էին ստրուկները:

Քո կարծիքով ինչո՞ւ հատկապես հույն ստրուկներ էին գնում հարուստ հռոմեացիները:

Ովքե՞ր էին գլադիատորները:

Արևմտյան Հռոմեական կայսրության թուլացումը և անկումը

Հռոմի կայսր **Դիոկղետիանոսի** օրոք անցկացվեցին կառավարչական և ռազմական բարեփոխումներ: Դրանով հիմք դրվեց կառավարման նոր եղանակին՝ **դոմինատին**: Դրա էությունն այն էր, որ ստեղծվեց ռազմական միապետություն՝ մեկ անձի անսահմանափակ իշխանությամբ: Կայսեր իշխանությունը աստվածացվում էր: Բոլոր քաղաքացիները համարվում էին կայսեր, այլ ոչ պետության հպատակները:

330 թ. կայսրության մայրաքաղաքը տեղափոխվեց արևելք: **Կոստանդիանոս I** կայսրը **Բյուզանդիոն** բնակավայրի տեղում կառուցեց Նոր Հռոմը, որը նրա պատվին կոչվեց **Կոստանդնուպոլիս**:

Ո՞վ էր Դիոկղետիանոսը: Կառավարման մեջ ի՞նչ նորություն մտցրեց նա: Ի՞նչ տարբերություն կա պրինցիպատի և դոմինատի միջև:

Ո՞ւմ օրոք և ե՞րբ փոխվեց կայսրության մայրաքաղաքը: Քարտեզի վրա գտի՛ր այն: Ինչպե՞ս է այդ քաղաքը այսօր կոչվում:

Արտաքին և ներքին խնդիրների պատճառով **395 թ.** կայսրությունը բաժանվեց երկու մասի՝ **Արևելյան** և **Արևմտյան**: Արևելյան կայսրությունը, որը հայտնի է նաև որպես **Բյուզանդական կայսրություն**, շարունակեց իր գոյությունը ավելի քան հազար տարի:

Արևմտահռոմեական կայսրությունը գերմանական և այլ ցեղերի հարձակումների հետևանքով թուլացավ: Կայսրության տարածքում հաստատված գերմանական ցեղերը, ստեղծեցին իրենց պետությունները:

476 թ. բարբարոսների կողմից Հռոմի վերջին կայսրը գահընկեց արվեց: **Այսպես պատմության ասպարեզից դուրս եկավ Արևմտահռոմեական կայսրությունը**:

Ինչո՞ւ տրոհվեց Հռոմեական կայսրությունը: Քանի՞ մասի բաժանվեց այն:

Ե՞րբ է անկում ապրել Արևմտահռոմեական կայսրությունը:

Հռոմեական մշակույթը

Հռոմեացիների ստեղծած մշակույթի վրա մեծ էր հունականի ազդեցությունը: Հարուստ հռոմեացիները իրենց երեխաներին ուղարկում էին Հունաստան՝ դպրոցներում սովորելու: Շատ հույն փիլիսոփաներ և մշակույթի գործիչներ տեղափոխվում էին Հռոմ: Հունական օրինակով հռոմեական քաղաքներում կառուցվում էին թատրոններ:

Լատիներեն էին թարգմանվում հունական գիտական և գրական ստեղծագործություններ: Հունական մշակույթի ազդեցությունը առավել մեծացավ հատկապես այն բանից հետո, երբ Հունաստանից մեծ քանակությամբ արվեստի գործեր տեղափոխվեցին Հռոմ:

Հին Հռոմի Տասներկու տախտակները

Հին Հռոմը ուներ զարգացած իրավական համակարգ: Հռոմի ամենավաղ օրենքները գրված էին **Տասներկու տախտակների** վրա:

Ճարտարապետության ոլորտում հատկապես բնութագրական է **քաղաքաշինությունը:** Հռոմում ծաղկում ապրեց նաև **քանդակագործությունը:** Մեծ թվով քանդակներ ստեղծվում էին անհատական պատվերներով:

Ո՞ր մշակույթն է հատկապես ազդել հռոմեականի վրա:

Հռոմեական աստվածները

Յուպիտեր — Գլխավոր աստվածը

Յունոնա — Յուպիտերի կինը՝ մայրության և ընտանիքի հովանավորը

Միներվա — Գիտության, արվեստի և արհեստների հովանավոր դիցուհի

Մարս — Ռազմի աստվածը

Կվիրին — Մարսի որդին

Հռոմեական կայսրությունում երկրպագվում էին նաև արևելյան աստվածներ **Միթրան**, **Իսիդան**, **Օսիրիսը**:

Ներկայացրո՛ւ հռոմեական դիցարանը:

Վերգիլիոսն Օգոստոսի համար ընթերցում է իր «Էնեական» պոեմը, որտեղ շարադրված է Հռոմի պատմությունը՝ սկսած առասպելական նախահայր Էնեասից մինչև Օգոստոս:

Հռոմեական կայսրությունում է ծագել նաև **քրիստոնեությունը**: Կոստանդիանոս I կայսեր **313 թ. Միլանի հրովարտակով** քրիստոնյաները ստացան դավանանքի ազատություն: Հետագայում քրիստոնեությունը դարձավ պաշտոնական կրոն: Կայսրության խոշոր քաղաքներում՝ Ալեքսանդրիա, Հռոմ, Կոստանդնուպոլիս, Երուսաղեմ, Անտիոք, ստեղծվեցին եպիսկոպոսություններ, որոնց առաջնորդները ստացան պատրիարք տիտղոսը: Իսկ Հռոմի և Ալեքսանդրիայի պատրիարքները կոչվում էին նաև **պապեր**:

«Մանուկ Կիկերոնը ընթերցանության պահին»
Վինչենցո Ֆոպպա

Ե՞րբ է առաջացել քրիստոնեությունը:

Ո՞ր թվականին կայսրության տարածքում քրիստոնեությունը ճանաչվեց այլ կրոններին հավասար:

Վերհիշե՛ք, թե որ երկրում է քրիստոնեությունը աշխարհում առաջինը հռչակվել պետական կրոն:

Ո՞ր խոշոր քաղաքներում են ստեղծվել եպիսկոպոսություններ:

Հռոմեական քաղաքակրթության ազդեցությունը ժամանակակից աշխարհի վրա

Մարդկությունը մինչ օրս օգտվում է հռոմեացիների կողմից ստեղծված քաղաքական, գիտական և մշակութային արժեքներից:

Հին հռոմեացիների հայտնի հայտնագործություններից էր **բետոնը:** Այդ շինանյութը լայնորեն օգտագործվում էր Հռոմեական պետությունում և թույլ էր տալիս ամուր և վիթխարածավալ շինություններ կառուցել:

Հռոմեացիները գլադիատորական մարտերի համար կառուցում էին հսկայական շինություններ՝ **ամֆիթատրոններ:** Դրանք հունական թատրոնների կատարելագործված տարբերակներն էին և համարվում են ներկայիս ֆուտբոլային մարզադաշտերի նախատիպերը: Ամֆիթատրոններից խոշորագույնը **Հռոմի Կոլիզեումն** էր, որը տեղավորում էր մոտ 60 հազար հանդիսական:

Ի՞նչ է ամֆիթատրոնը: Ներկայիս ո՞ր շինությունն է հիշեցնում այն:

Կոլիզեում կոչվող հսկա ամֆիթատրոնը նախատեսված էր թատերական և գլադիատորական ներկայացումների համար: Այն այսօր էլ կանգուն է Հռոմի կենտրոնում: Իտալիա, Հռոմ, 72–80 թթ.

Պատերազմից հաղթանակով վերադարձած զորավարների պատվին կառուցում էին ժամանակավոր **հաղթակամարներ**: Դրանց տակով պետք է հանդիսավոր անցնեին զորավարը, նրա զինվորները և ռազմագերիները: Հետագայում հաղթակամարները դարձան մշտական և հռոմեական քաղաքների կարևոր ճարտարապետական կառույցներից էին: Նոր

Տրայանոսի հաղթապյունը Հռոմում Կառուցվել է 113 թ.

ժամանակներում դրանց օրինակով եվրոպական շատ քաղաքներում կառուցվեցին հաղթակամարներ:

Հին Հռոմում կատարելագործեցին **ջրմուղը** և **կոյուղին**: Հռոմեացիները կատարելության հասցրին ջրանցույցների շինարարությունը: Այն թույլ էր տալիս տասնյակ կիլոմետր հեռու վայրերից խմելու և ոռոգման ջուր բերել:

Որո՞նք են հռոմեական ճարտարապետության և շինարարական արվեստի նշանավոր ձեռքբերումները: Ի՞նչ է հաղթակամարը: Քո կարծիքով ինչո՞ւ են նոր ժամանակներում եվրոպական շատ քաղաքներում կառուցվել հաղթակամարներ:

Հռոմեական իրավական մտքի ձեռքբերումներից էր **իրավունքի՝** որպես առանձին գիտության սահմանումը, իրավաբանի հաստատության ստեղծումը: Արդի իրավագիտության բազմաթիվ տերմիններ, ինչպես նաև **դատարանում երդվելը** ժառանգվել են հռոմեական դարաշրջանից: Հռոմեական պետության օրենքները և օրենսդրական համակարգը մեծ ազդեցություն են թողել եվրոպական և համաշխարհային իրավական համակարգի վրա: Օրինակ՝ հռոմեացիների մոտ է առաջին անգամ օգտագործվել **վետոյի իրավունք** հասկացությունը: Այն այսօր օգտագործում են ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդում:

Հուլիոս Կեսարի օրոք **Ք. ա. 45 թ.** կատարվեց **տոմարի բարեփոխում:** Նախկին **լուսնային օրացույցը** փոխարինվեց **արևայինով:** Տարին, ըստ դրա, բաղկացած էր **365 և կես օրից:** Չորս տարին մեկ փետրվարին ավելացվում էր մեկ օր: **Հուլիոսյան օրացույցը** մնաց կիրառման մեջ ընդհուպ մինչև XX դարի սկզբները: Մինչ օրս շատ երկրներ օգտագործում են **հռոմեական ամսանունները** (օրինակ՝ հուլիս, օգոստոս, հունվար և այլն):

Հին Հռոմում կար **օրաթերթի** նախատիպը: Մագաղաթի վրա գրում էին քաղաքի նորությունների, օրենքների, կարևոր իրադարձությունների և մարդկանց մասին: Այդ մագաղաթները ամրացնում էին քաղաքի տեսանելի վայրերում, բաժանում հայտնի հռոմեացիներին:

Հռոմում քաղաքացիները կարող էին օգտվել **կառքերից**, որոնց վրա կային հատուկ սարքեր: Դրանք հաշվում էին անցած ճանապարհը, և համապատաս–

խան գումար էր գանձվում օգտվողից: Այն ներկայիս տաքսիների հռոմեական տարբերակն էր:

Հռոմեացիները հակում ունեին շենքերի պատերին գրառումներ կատարելու կամ նկարելու (**գրաֆիտի**): Այն, ինչ այսօր համարվում է արվեստի ճյուղ, լայնորեն տարածված էր Հռոմում: Քաղաքի տարբեր շինությունների պատերի գրառումները պատկերացում են տալիս հռոմեացիների առօրյա կյանքի մասին: Կային նաև գովազդային գրառումներ:

Հռոմեական կայսրությունում հռոմեականացման գործընթացի առավել կարևոր ուղղությունը **լատինեռենի** ներդրումն էր: Օրինակ՝ արդեն I դարում Գալլիայի քաղաքների բնակչության խոսակցական լեզուն գերազանցապես լատիներենն էր:

Լատինական այբուբենը հետագայում լայնորեն տարածվեց Եվրոպայում: Մինչ օրս լատիներենը կաթոլիկ եկեղեցու արարողակարգի լեզուն է: Միջնադարում այն նաև եվրոպական գիտության լեզուն էր: Այսօր էլ ընդունված է գիտական տերմինները ներկայացնել լատիներենով: Լատինական այբուբենը հիմք է դարձել աշխարհի շատ այբուբենների (օրինակ՝ անգլերենի, ֆրանսերենի, իտալերենի, գերմաներենի, իսպաներենի և այլն) համար: Մեծ տարածում ունեն նաև **հռոմեական թվերը**:

Հռոմեացիները օգտագործում էին նոր դեղամիջոցներ և վիրահատական գործիքներ: Առկա բուժման համար առանձնացված էին հատուկ կառույցներ՝ **հոսպիտալներ**: Հռոմեացիները մեծ ուշադրություն էին դարձնում բնակչության առողջապահության խնդիրներին:

Հռոմեացիները կատարելության հասցրին **ճանապարհաշինությունը** և ստեղծեցին **ճանապարհային երթևեկության կանոններ և նշաններ:**

Հռոմում տարածում էին գտել նաև **արագ սննդի կետերը,** որտեղ մարդիկ կարող էին սնվել տեղում:

Հարուստ հռոմեացիների տանը կար նաև **հատակի տաքացման համակարգ**: Այն օգտագործում էին նաև հռոմեական բաղնիքներում:

Դրվագ Տրայանոսի հաղթապյունից

Հաղթապյան վրա պատկերված են Հռոմի պատմության կարևորագույն իրադարձությունները:

Ինքնուրույն կազմի՛ր աղյուսակ և ներկայացրո՛ւ հռոմեացիների կողմից ստեղծված քաղաքական, գիտական, կենցաղային և մշակութային արժեքները:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ արդյունք ունեցավ պլեբեյների երկարատև պայքարը:

2. Գծապատկերի տեսքով ներկայացրո՛ւ Հռոմի հանրապետության կառավարման համակարգը:

3. Ներկայացրո՛ւ Կեսարի ու Օկտավիանոսի պատմական կերպարները և համեմատի՛ր նրանց գործունեությունը:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Վերհիշելով Հայոց պատմությունից քո սովորածը՝

1. նշի՛ր հայոց արքաների, որոնք պատերազմել են Հռոմի դեմ,

2. թվարկի՛ր այն հռոմեացի պատմիչներին, որոնք գրել են Հայաստանի մասին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Փորձի՛ր բնութագրել գլադիատորին: Ի՞նչ ֆիլմեր ես դիտել գլադիատորների մասին:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. Հռոմեացիների ստեղծած քաղաքական, գիտական և մշակութային արժեքներից որո՞նք են օգտագործվում նաև մեր օրերում:

2. Համեմատի՛ր Հին Հռոմի և Հունաստանի գիտության և արվեստի նվաճումները: Գնահատի՛ր դրանց նշանակությունը մարդկության համար:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Մարդկությունն ավելի քան 3 միլիոն տարվա պատմություն ունի: Հազարավոր տարիների ընթացքում զարգացել են մարդկանց աշխատելու, մտածելու և խոսելու հիմնարար հատկանիշները: Մարդիկ հաստատուն քայլերով առաջադիմել են կյանքի բոլոր ասպարեզներում:

Նոր քարի դարում մարդկանց կյանքում տեղի ունեցան մեծ փոփոխություններ: Յուրացնող տնտեսությունից անցում կատարվեց արտադրող տնտեսության: Երկրագործությունը, անասնապահությունը և արհեստագործությունը դարձան մարդկանց հիմնական զբաղմունքները: Նրանք թափառական և կիսաթափառական կյանքից անցան նստակեցության: Մարդիկ սկսեցին ուսումնասիրել շրջապատող աշխարհը՝ փորձելով ներազդել նրա վրա:

2. Նախնադարի անկման շրջանում մարդկությունն անցում կատարեց հասարակության կազմակերպման ավելի բարձր մակարդակի: Խախտվեց վերջինիս ավանդական միատարրությունը և մարդկանց հավասարությունը: Այս նոր հասարակությունը կառավարելու համար ստեղծվեց պետությունը:

3. Եգիպտական պետությունը և մշակույթը Նեղոսի ափերին ապրող եգիպտացի ժողովրդի հավաքական, նպատակաուղղված գործունեության արդյունքն են: Նոր թագավորության շրջանում Եգիպտոսն Առաջավոր Ասիայի ամենահզոր պետություններից մեկն էր:

4. Շումերը, Աքքադը և Բաբելոնը Հին Միջագետքի պատմության կերտողներն էին: Շումերներն առաջինը այստեղ ստեղծեցին պետություն: Աքքադացիներն առաջինը միավորեցին Միջագետքը և անցան տարածքային նվաճումների Փոքր Ասիայում և Ասորիքում: Համմուրապիի օրենսգիրքն առաջին փորձն էր՝ ստեղծելու իրավական պետություն: Առաջավոր Ասիայի պետությունների շարքում մի քանի դար առաջատարը Ասորեստանն էր:

5. Ք. ա. XVII դարում Փոքր Ասիա թերակղզում ստեղծված Խեթական պետությունը հետագայում վերածվեց Առաջավոր Ասիայի հզորագույն տերության: Խեթերը հատկապես սերտ փոխհարաբերություններ ունեին հայկական պետական կազմավորումների՝ հատկապես Հայասայի հետ:

6. Հնդկաստանը և Չինաստանը խոշոր և բազմազգ երկրներ էին: Այստեղ գոյություն ունեին բազմաթիվ պետություններ, որոնք մշտապես պայքարում էին միմյանց դեմ: Երկու երկրների զարգացման գլխավոր շարժիչ ուժը դարձավ քաղաքական միավորումը: Միավորման պահից սկսած՝ այստեղ նկատվեց մշակութային աննախընթաց վերելք, որն արտահայտվեց նյութական և հոգևոր արժեքների ստեղծմամբ:

7. Իրանի տարածքում ապրում էին տասնյակ ժողովուրդներ և ցեղեր: Աքեմենյան Իրանի կազմավորումը և Առաջավոր Ասիայի խոշորագույն տերություն դառնալը նոր փուլ սկզբնավորեց Հին Արևելքի պատմության մեջ:

Աքեմենյան Իրանը առաջին համաշխարհային պետությունն էր:

8. Դուք արդեն գիտեք, որ հավատը գերբնական ուժերի հանդեպ ծագել է մարդկության պատմության վաղ փուլում՝ նախնադարում: Պետության կազմավորումից հետո հասարակության կյանքում կրոնի դերն ու նշանակությունը ավելի ամրապնդվեց: Դա դրսևորվում էր նաև մարդկանց առօրյա կյանքի բոլոր բնագավառներում: Կրոնն իր դերով չէր զիջում աշխարհիկ իշխանությանը:

9. Գիրը մարդկության ստեղծած կարևորագույն հոգևոր արժեքներից է: Առաջավոր Ասիայի շատ երկրներում ստեղծվեցին գրային տարբեր համակարգեր: Եգիպտական գաղափարագիրը և միջագետքյան սեպագիրը ծառայեցին մարդկային հասարակությանը շուրջ երեք հազարամյակ:

10. Հին Արևելքի երկրների մշակութային բազմաթիվ նվաճումների շարքում կարևոր տեղ ունեն ճարտարապետությունը, քանդակագործությունը և գեղարվեստական գրականությունը: Շատ գործեր իրենց մտահղացմամբ և կատարողական արվեստով մնացել են անգերազանցելի:

11. Մեծ էր գիտելիքների դերն արևելյան երկրների ժողովուրդների կյանքում: Այս դարաշրջանում դրվեցին բնական գիտությունների հիմքերը:

12. Հունաստանը չնայած որ մարդկային և նյութական սահմանափակ հնարավորություններ ուներ, մեծ ավանդ է ներդրել համաշխարհային պատմության մեջ: Հին Հունաստանից է սկսվում արդի Եվրոպան:

13. Հունաստանում ձևավորվեց պետության մի ինքնատիպ տարատեսակ՝ պոլիսը (քաղաք–պետություն): Դրանում աստիճանաբար հզորացավ միջին ունեցվածքի հասարակական դասը: Նա տապալեց ավագանու տիրապետությունը և հաստատեց ժողովրդավարական կարգեր: Գաղութացման շնորհիվ հունական կենցաղն ու մշակույթը տարածվեցին Միջերկրական և Սև ծովերի ավազաններում:

14. Ք. ա. VIII–VI դարերում ձևավորված Սպարտա պետությունը մեծ դեր է խաղացել Հունաստանի պատմության մեջ: Դա պայմանավորված էր նրա յուրօրինակ հասարակական կառուցվածքով, ինչպես նաև սպարտացիների բարոյական և մարդկային արժեքներով:

15. Աթենքը Ատտիկա երկրամասի կենտրոնն էր, որը Միջին Հունաստանում էր: Աթենքում անզիջում պայքար ծավալվեց տոհմային ավագանու խմբիշխանության դեմ: Բարեփոխումների արդյունքում Ք. ա. VI դարում ձևավորվեց Աթենքի ժողովրդավարական պոլիսը:

16. Ք. ա. V դ. սկզբներին պատերազմներ սկսվեցին հույների և պարսիկների միջև: Աքեմենյան Իրանի դեմ մղված ազատագրական պայքարի ընթացքում Աթենքում մեծ զարգացում ապրեց ժողովրդավարությունը: Նրա գագաթնակետը դարձան Պերիկլեսի կառավարման տասնհինգ տարիները:

17. Դասական դարաշրջանում հին հույները ստեղծեցին մշակութային բարձրակարգ արժեքներ, որոնք կազմում են եվրոպական արդի մշակույթի հիմքը: Դրանք վերաբերում են ամենատարբեր բնագավառների՝ կրոն, իմաստասիրություն, թատրոն, ճարտարապետություն, դպրոց, գրականություն, կերպարվեստ և մարմնակրթություն:

18. Ալեքսանդր Մակեդոնացու գործունեությամբ համաշխարհային պատմության մեջ սկսվում է նոր դարաշրջան, որն ստացել է հելլենականություն (հելլենիզմ) անունը: Համադրվեցին արևելյան և հունական արժեքները արտադրության, հասարակական կյանքի կազմակերպման, գիտության, արվեստի և կրոնի ասպարեզներում: Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո ձևավորվեցին մի շարք հելլենիստական պետություններ:

19. Իտալիան իր բնական հնարավորություններով պայմաններ է ստեղծել Հին աշխարհի մեծագույն տերություններից մեկի ձևավորման համար: Միջին Իտալիայում ձևավորվեց մի քաղաք–պետություն, որն իր հիմնադրի անունով կոչվեց Հռոմ: Շուրջ երկուսուկես դար տևեց Հռոմի պատմության արքայական դարաշրջանը: Համաժողովրդական շարժման շնորհիվ Հռոմում հաստատվեց հանրապետություն:

20. Սկզբնական շրջանում Հռոմը փոքր պետություն էր: Սակայն Ք. ա. V դարից սկսած՝ աստիճանաբար հզորացավ և իր տիրապետությունը հաստատեց Իտալիայի ամբողջ տարածքում: Հանրապետական կարգը համախմբեց հռոմեացիներին, ձևավորեց միասնական ժողովուրդ և տվեց հպարտություն՝ լինելու Հռոմի ազատ քաղաքացի: Հռոմը, Ք. ա. III–II դարերում Իտալիայի սահմաններից դուրս պարտության մատնելով բազմաթիվ հակառակորդների, իր տիրապետությունը հաստատեց Միջերկրական ծովի ամբողջ ավազանում: Այսպես Հռոմը վերածվեց համաշխարհային տերության:

21. Հռոմեական հանրապետության ճգնաժամը Ք. ա. 50–30–ական թվականներին հասավ իր գագաթնակետին: Ծայրաստիճան սրվել էին հակասությունները ունեզուրկ հռոմեացիների և ավագանու, նահանգների ազգաբնակչության և Հռոմի, ստրուկների և ստրկատերերի միջև: Դա տեղիք տվեց քաղաքացիական պատերազմի և Կեսարի բռնապետության հաստատմանը: Սակայն Կեսարը դարձավ դավադրության զոհ: Այլ ճանապարհով ընթացավ Օկտավիանոսը: Նրա հաստատած կառավարման համակարգը և մյուս բարեփոխումները Հռոմեական տերությանը տվեցին ևս երեք հարյուր տարվա կյանք:

22. Հռոմեական տերությունն իր հզորության գագաթնակետին հասավ II դարում՝ տալով ակնառու արդյունքներ կյանքի բոլոր բնագավառներում: Այսպես կոչված «Ոսկեդարից» հետո, սակայն, տերությունը սկսեց քայքայվել: Հռոմեական կայսրությունը տրոհվեց արևելյան և արևմտյան հատվածների:

23. Հնուց ի վեր հռոմեացիները բազմաստված էին: Հավատում էին, որ աստվածներն իրենց բարեկեցության աղբյուրն են: Առաջին դարում ձևավորվեց քրիստոնեությունը, որը քարոզում էր մարդկանց հավասարությունը Հայր Աստծո առաջ: Չնայած դաժան հալածանքներին՝ նոր կրոնն աստիճանաբար տարածվեց և դարձավ Հռոմեական տերության պաշտոնական կրոնը:

24. Հունական և հելլենական մշակույթը համադրելով իրենց ազգային արժեքներին՝ հին հռոմեացիները ստեղծեցին յուրօրինակ մշակույթ: Ստեղծվեցին արժեքներ, որոնք մարդկության մշակութային ժառանգության անբաժան մասն են: Դրա շատ նվաճումներ արդիական են նաև մեր օրերում:

ԲԱԺԻՆ 2

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

§9 | ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Ժողովուրդների մեծ գաղթ — IV–VII դարերում Հռոմեական կայսրության տարածք ներխուժած ցեղերի տեղաշարժերի ընդհանուր անվանումը:

«Ժողովուրդների ճակատամարտ» — նշանավոր ճակատամարտ, որում հռոմեա–բարբարոսական միացյալ զորքը Կատալաունյան դաշտում պարտության մատնեց հոներին:

Վանդալիզմ — կանխամտածված կերպով մշակութային և նյութական արժեքների ոչնչացում:

Ֆրանկական թագավորություն — նախկին Հռոմեական կայսրության պրովինցիա Գալլիայում ֆրանկների ստեղծած պետություն:

Պապական մարզ — Հռոմի պապի աշխարհիկ պետությունը. ստեղծվել է 756 թ., գոյատևել է մինչև XIX դարի կեսերը:

Ա/Ֆ ԲԱՌԱՊԱՇԱՐ

Սկանդինավյան թերակղզի — Թերակղզի Եվրոպայի հյուսիսում:

Գոթեր, սաքսոններ, լանգոբարդներ, վանդալներ, ֆրանկներ — Հին գերմանական ցեղեր:

Հոներ — Չինաստանից հյուսիս ապրող թյուրքալեզու քոչվոր ցեղեր:

Աթթիլա — հոների առաջնորդ. ստեղծել է հսկայածավալ տերություն, որը նրա մահից հետո փլուզվել է:

Օդոակր — հռոմեական բանակի վարձկան բարբարոսների առաջնորդը:

Հռոմուլոս Ավգուստուլուս — Արևմտյան հռոմեական կայսրության վերջին կայսրը:

Քլոդվիգ — ֆրանկների նշանավոր առաջնորդ, գահակալել է 486–511 թթ.:

Մայորդոմ — ֆրանկների պետությունում արքայական կալվածքների կառավարիչը:

Պիպին Կարճահասակ — Կարոլինգների արքայատոհմի հիմնադիրը. հեղաշրջման միջոցով մայորդոմից դարձել է թագավոր:

Կարլոս Մեծ — Ֆրանկական թագավորության նշանավոր արքա, գահակալել է 768–814 թթ.:

Հին գերմանացիները

Գերմանական ցեղերը դեռևս Ք. ա. I դարում զբաղեցնում էին Կենտրոնական Եվրոպան և Սկանդինավյան թերակղզու հարավը: Նրանք բաժանվում էին մի քանի խոշոր ցեղախմբերի՝ **գոթեր, սաքսոններ, լանգոբարդներ** և այլն: Ցեղերի մի մասը դարձել էր նստակյաց և զբաղվում էր երկրագործությամբ: Սակայն ռազմական գործը դեռևս շարունակում էր կարևոր դեր խաղալ:

***Սկզբնաղբյուր** — Հռոմեական պատմիչ Կոռնելիուս Տակիտուսը (I–II դարեր) գերմանացիների մասին*

«Ավելի հեշտ է նրանց համոզել կռվել թշնամու դեմ, քան ստիպել դաշտերը հերկել և մի ամբողջ տարի սպասել բերքի: Խաղաղ ժամանակ նրանք շատ որս են անում, ժամանակն անցկացնում խնջույքների մեջ»:

Որտե՞ղ էին ապրում գերմանական ցեղերը: Թվարկի՛ր նրանցից մի քանիսին:

Ո՞րն էր նրանց գլխավոր զբաղմունքը: Օգտվելով սկզբնաղբյուրից՝ բնութագրի՛ր հին գերմանացիներին:

Ժողովուրդների մեծ գաղթը

IV–VII դարերը Եվրոպայում ժողովուրդների Մեծ գաղթի դարաշրջանն է: Կայսրության սահմանամերձ շրջաններում բնակվող ցեղերը աճող բնակչության կարիքները բավարարելու նպատակով հաճախ տեղաշարժվում և նոր տարածքներ էին յուրացնում: Տեղաշարժերի վրա ազդեց նաև կլիմայի սառեցումը, որի հետևանքով գյուղատնտեսության համար անբարենպաստ պայմաններ էին առաջացել:

Առաջինը տեղաշարժվեցին **գոթերը,** որոնք հաստատվեցին Դանուբ և Դնեպր գետերի միջև ընկած շրջանում: Շուտով նրանք բաժանվեցին երկու ցեղային միությունների՝ **վեստգոթեր** և **օստգոթեր**: IV դարում Եվրոպա ներխուժեցին **հոները:** Նրանք վտարեցին Սև ծովի հյուսիսային շրջաններում բնակվող օստգոթերին:

Հոների արշավանքներով սկսվեց Ժողովուրդների մեծ գաղթը

Օստգոթերը շարժվեցին արևմուտք: Վեստգոթերը խնդրեցին հռոմեական կայսրին զինվորական ծառայության դիմաց թույլ տալ բնակություն հաստատել կայսրության սահմաններում: Կայսրը համաձայնեց և խոստացավ պարենով ապահովել նրանց, սակայն դրժեց խոստումը: Դա ապստամբության պատճառ դարձավ, որն ավարտվեց հռոմեացիների պարտությամբ 378 թ. և կայսրի սպանությամբ:

Որտե՞ղ էին ապրում գոթերը: Ի՞նչ ցեղային միություններ էին բաժանված նրանք:

Ե՞րբ է սկսվել Ժողովուրդների մեծ գաղթը:

Փորձի՛ր ներկայացնել մեծ գաղթի պատճառները:

Արևմտյան հռոմեական կայսրության անկումը

Սկզբում Իտալիայի վրա արշավեցին վեստգոթերը, ապա՝ **վանդալները**: Հատկապես ծանր հարված ստացավ Հռոմ քաղաքը: Վանդալները **455 թ.,** գրավելով Հռոմը, սարսափելի թալանի ենթարկեցին այն: Նրանց արարքը հետագայում դարձավ պատկերավոր արտահայտություն՝ **վանդալիզմ**:

Վերհիշե՛ք, թե երբ է Հռոմեական կայսրությունը բաժանվել երկու մասի:

Ովքե՞ր էին սպառնում Հռոմ քաղաքին:

Ի՞նչ է նշանակում վանդալիզմ:

Հոները **Աթթիլայի** գլխավորությամբ մտան Գալլիա: Հռոմեա–գերմանական միացյալ զորքը **451 թ. Կատա–**



Բարբարոսների ներխուժումը Հռոմ, XV դարի մանրանկար

լաունյան դաշտում պարտության մատնեց հոներին: Այս ճակատամարտի շնորհիվ Արևմուտքն ազատվեց քոչվոր հոների սպառնալիքից: **Սակայն դա կայսրության վերջին ռազմական հաջողությունն էր:** Պետության գործերն արդեն տնօրինում էին կայսերական բանակի բարբարոս հրամանատարները:

451 թ. ի՞նչ հայտնի ճակատամարտ է տեղի ունեցել: Իսկ Հայաստանո՞ւմ:

Կայսրության անկումը դառնում էր անխուսափելի: **476 թ.** Հռոմեական բանակի գերմանացի հրամանատար **Օդոակրը** գահընկեց արեց վերջին կայսր **Հռոմուլոս Ավգուստուլուսին**, իսկ նրա թագն ուղարկեց Բյուզանդիայի կայսրին: Այս քայլով նա ցույց էր տալիս, որ Հռոմեական կայսրությունը այլևս գոյություն չունի:

Ո՞վ էր Օդոակրը: Ո՞ր թվականին նա տապալեց Արևմտյան հռոմեական կայսրության վերջին կայսրին:

Ֆրանկական թագավորությունը

Արևմտյան կայսրության անկումից հետո Եվրոպայի տարբեր շրջաններում ձևավորվեցին նոր թագավորություններ՝ Վեստգոթական, Վանդալների, Ֆրանկական: Դրանց շարքում իր տարածքով և նշանակությամբ աչքի էր ընկնում ֆրանկների պետությունը:

Օգտվելով 81–րդ էջի քարտեզից՝ թվարկի՛ր Արևմտյան հռոմեական կայսրության տարածքում ստեղծված բարբարոսական թագավորությունները:

Ֆրանկների արքա Քլոդվիգը

V դարում ֆրանկները Գալլիայի հյուսիս–արևելքում հիմնեցին պետություն: Նրանց առաջնորդ **Քլոդվիգը** շարունակեց Գալլիայի նվաճումը և ստեղծեց **Ֆրանկական թագավորությունը:** Նա քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն:

Ի՞նչ պետություն է Քլոդվիգը ստեղծել և որտե՞ղ:

Քլոդվիգից հետո նրա արքայատոհմը սկսեց թուլանալ: Թագավորները պահպանում էին արքայական տիտղոսը, բայց իրական իշխանություն չունեին: Այդ պատճառով նրանց անվանում էին «**ծույլ թագավորներ**»: Երկիրը կառավարում էին արքայական կալվածքների կառավարիչները՝ **մայորդոմները:**

751 թ. մայորդոմ **Պիպին Կարճահասակը** հռչակվեց ֆրանկների թագավոր: Հեղաշրջումը կատարվեց Հռոմի պապի թույլտվությամբ: Վարձահատույց լինելու համար Պիպինը արշավեց Իտալիա՝ լանգոբարդների դեմ: Նրանցից խլած հողերը նա նվիրեց պապին, որոնց վրա կազմավորվեց Հռոմի պապի աշխարհիկ պետությունը՝ **Պապական մարզը:**

Պիպին Կարճահասակ

Պիպինի գահակալումով ֆրանկական պետությունում հաստատվեց **Կարոլինգների արքայատոհմը:** Այդ տոհմանունն առաջացել է Պիպինի հաջորդ Կարլոս Մեծի անունից:

Ինչո՞ւ էին Քլոդվիգի հաջորդներին անվանում «ծույլ թագավորներ»:
Ի՞նչ հանգամանքներում և ե՞րբ է ստեղծվել պապական պետությունը:
Ո՞վ է համարվում Կարոլինգների արքայատոհմի հիմնադիրը:

Կարլոս Մեծ
Ալբրեխտ Դյուրեր, 1512 թ.

Կարլոս Մեծի տերությունը

Ֆրանկների արքա **Կարլոսը** ձեռնարկեց լայնածավալ նվաճողական քաղաքականություն: Նա գրավեց Հյուսիսային Իտալիան, Սաքսոնիան, Բավարիան: Հռոմի պապը որպես պատասխան իրեն աջակցելու համար Կարլոսին **800 թ.** թագադրեց կայսերական թագով: Դրանով Կարլոսը ստացավ Բյուզանդիայի կայսրին հավասար կարգավիճակ:

Վաղ միջնադարի Եվրոպայում **Կարլոս անունը դարձավ արքայական իշխանության խորհրդանիշը**: Եվրոպայի առանձին երկրների կառավարողները սկսեցին իրենց անվանել **«կարոլ» (թագավոր)**:

Կարլոսը փորձում էր համադրել անտիկ քաղաքակրթությունը նոր իրողությունների հետ և ստեղծել խոշոր տերություն և միասնական քրիստոնեական մշակույթ:

Կարլոս Մեծի կայսրությունը

Վանքերում բացվում էին դպրոցներ: Մայրաքաղաք **Աախենում** հիմնվեց ակադեմիա, որտեղ աշխատելու հրավիրվեցին հայտնի գիտնականներ: Նոր մշակութային իրողությունների ձևավորման այս ժամանակաշրջանը անվանում են **«Կարոլինգյան վերածնունդ»**: ***Այն մեծ դեր խաղաց Արևմտյան Եվրոպայի մշակույթի ձևավորման և զարգացման գործում:***

Ե՞րբ է գահակալել Կարլոս Մեծը:

Քարտեզի վրա ցո՛ւյց տուր նրա նվաճած տարածքները:

Ի՞նչ նշանակություն է ունեցել «Կարոլինգյան վերածննդի» մշակույթը:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

Բնութագրե՛ք Կարլոս Մեծին: Փորձե՛ք ինքնուրույն պատկերել նրան: Հայոց արքաներից ո՞ւմ եք նմանեցնում Կարլոս Մեծին: Հիմնավորե՛ք ձեր ընտրությունը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Օգտվելով դասանյութից՝ փորձի՛ր պարզաբանել, թե ինչ նպատակներ էր հետապնդում Կարլոս Մեծը:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. *Քո կարծիքով մեր օրերում գոյություն ունի՞ «վանդալիզմ» երևույթը: Բե՛ր մի քանի օրինակ:*
2. *Ի՞նչ նշանակություն է ունեցել «ժողովուրդների ճակատամարտը» Եվրոպայի համար:*
3. *Ի՞նչ դեր է խաղացել ժողովուրդների մեծ գաղթը համաշխարհային պատմության մեջ:*

§10 | ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Բյուզանդիա — Հռոմեական կայսրության իրավահաջորդ Արևելյան Հռոմեական կայսրությունը: Գոյություն է ունեցել 395–1453 թթ., անվանումը ստացել է Բյուզանդիոն քաղաքի անունից:

Քաղաքացիական իրավունքի հավաքածու — Հուստինիանոս I–ի հրամանով հռոմեական կայսրերի հրապարակած օրենքների հիման վրա 534 թ. կազմված օրենսգիրք:

Լատինական կայսրություն — խաչակիրների կողմից ստեղծված պետություն Բյուզանդիայի տարածքում: Գոյություն է ունեցել 1204–1261 թթ.:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Հուստինիանոս I — բյուզանդական կայսր, գահակալել է 527–565 թթ., նրան անվանել են «Վերջին հռոմեացի կայսր»:

Սուրբ Սոֆիայի տաճար — կայսրության գլխավոր քրիստոնեական տաճարն էր. կառուցումն ավարտվել է 537 թ., համաշխարհային մշակույթի գլուխգործոցներից է:

Վասիլ I — Հայկական կամ Մակեդոնական հարստության հիմնադիրը, գահակալել է 867–886 թթ.: Արքայատոհմն իշխել է 867–1056 թթ.:

Կոստանդին VII Ծիրանածին — Հայկական արքայատոհմի նշանավոր կայսր:

Մանազկերտի ճակատամարտ — Բյուզանդիայի ապագայի վրա վճռորոշ հետևանքներ թողած ճակատամարտ. տեղի է ունեցել 1071 թ. Հայաստանի տարածքում՝ Մանազկերտ քաղաքի մոտ:

Պեչենեգներ — թյուրքական քոչվոր ցեղեր, ապրում էին Վոլգա և Դոն գետերի շրջանում:

Էնրիկո Դանդոլո — Վենետիկի հանրապետության կառավարիչ 1192–1204 թթ., Լատինական կայսրության հիմնադիրներից:

Բյուզանդական կայսրության կազմավորումը

Բյուզանդիան միջնադարի հզոր պետություններից էր: Տերության մայրաքաղաքն էր Կոստանդնուպոլիսը: Իր գոյության ընթացքում այն պաշտոնապես կոչվում էր **Արևելյան հռոմեական կայսրություն**:

Վերհիշի՛ր, թե երբ է Հռոմեական կայսրությունը բաժանվել երկու մասի: Որտեղի՞ց է առաջացել Բյուզանդիա անունը:

Կոստանդնուպոլիսը վերածվեց քրիստոնեական կայսրության կենտրոնի: Մայրաքաղաքում կային բազմաթիվ եկեղեցիներ: Կայսրության տարբեր մասերից այստեղ էին հավաքում քրիստոնեական սրբազան մասունքներ: Հազարավոր ուխտավորներ գալիս էին Կոստանդնուպոլիս դրանք տեսնելու:

Ի՞նչ նշանակություն ուներ Կոստանդնուպոլիս քաղաքը քրիստոնյաների համար:

Բյուզանդիան իրեն համարում էր Հռոմեական կայսրության ժառանգորդը: Հռոմի անկումից հետո կայսրության տարածքում ստեղծված բարբարոսական պետությունների թագավորները ճանաչում էին բյուզանդական կայսեր գերագահությունը: Նրանք կառավարում էին վերջինիս անունից, բայց իրականում անկախ պետություններ էին:

Բյուզանդիայի տիրույթներն ընկած էին Եվրոպա, Ասիա և Աֆրիկա աշխարհամասերում: Բնակչությունը խայտաբղետ էր՝ հույներ, հայեր, ասորիներ, եգիպտացիներ, արաբներ և այլն:

Բյուզանդական **կայսրի իշխանությունը** ժառանգական չէր: Նրան ընտրում էին Ծերակույտը և զորքը: Կայսրը կարող էր լինել ցանկացած ազգության և հասարակական խմբի ներկայացուցիչ: Նա ուներ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր իշխանություն: Կայսրին էր պատկանում **օրենսդիր, դատական և ռազմական բարձրագույն իշխանությունը:**

Ի տարբերություն Հռոմեական տերության՝ Բյուզանդիայում տիրապետող էին հունական մշակույթը,

քրիստոնեության ուղղափառ ուղղությունը և հունարենը՝ որպես պաշտոնական լեզու:

Փորձի՛ր մեկնաբանել, թե ինչու է Բյուզանդիան համարվում տերություն: Ովքե՞ր էին ընտրում բյուզանդական կայսրին:

Վերջին հռոմեացի կայսրը. Հուստինիանոս I

Հուստինիանոս I կայսրը Խ՛ամանկար, Ս. Վիտալե եկեղեցի, Հռավեննա, Իտալիա

Արևելահռոմեական կայսրությունը հզորության նոր դարաշրջան թևակոխեց Հուստինիանոս I կայսեր գահակալության տարիներին:

Հուստինիանոսը կրթված և աշխատասեր կայսր էր, հիանալի քաղաքագետ, ճկուն դիվանագետ և տաղանդավոր զորավար:

Մտավոր կարողություններով, իշխանատենչությամբ և դաժանությամբ Հուստինիանոսին չէր զիջում նրա կինը՝ կայսրուհի **Թեոդորան**: Երիտասարդ տարիներին նա եղել էր շրջիկ պարուհի: Հրապուրվելով Թեոդորայի աննկարագրելի գեղեցկությամբ և սուր խելքով՝ Հուստինիանոսն ամուսնացել էր նրա հետ: Թեոդորան նույնպես մասնակցում էր կայսրության կառավարմանը:

Թեոդորա կայսրուհին Խ՛ամանկար, Ս. Վիտալե եկեղեցի, Հռավեննա, Իտալիա

Հուստինիանոսը ձգտում էր իրավական պետություն ստեղծելու: Նա հրամայեց հավաքել և կարգավորել հռոմեական կայսրերի հրապարակած օրենքները: Այդպես կազմվեց «**Քաղաքացիական իրավունքի հավաքածուն**», որը կարևոր դեր խաղաց բյուզանդական պետության կայացման գործում:

Վերահաստատելով կարգուկանոնը՝ Հուստինիանոսն անցավ նվաճողական քաղաքականության: Տաղանդավոր զորավարներ **Բելիսարիոսի** և հայազգի **Նարսեսի** հրամանատարությամբ բյուզանդական զորքերը գրավեցին հսկայական տարածքներ: Կայսրության մեջ ընդգրկվեցին Իտալիան և Իսպանիայի մի մասը, Հյուսիսային Աֆրիկան, Փոքր Ասիան, Պաղեստինը և Սիրիան:

Ո՞վ էր Հուստինիանոսը: Ի՞նչ նպատակներ էր հետապնդում նա: Ե՞րբ է կազմվել «Քաղաքացիական իրավունքի հավաքածուն»:

«Սողոմո՛ն, ես հաղթեցի քեզ». *այսպիսի բացականչությամբ Հուստինիանոսն արտահայտեց իր ապրումները Կոստանդնուպոլսում Սուրբ Սոֆիայի տաճարի բացման հանդեսին: Այս վիթխարի կառույցը համաշխարհային ճարտարապետության անգերազանցելի կոթողներից է: X դարում գմբեթը ավերվեց երկրաշարժից: Այն վերականգնեց հայ մեծանուն ճարտարապետ Տրդատը:*

Հուստինիանոսի օրոք կուտակված վիթխարի միջոցները հիմնականում ծախսվում էին տաճարների, եկեղեցիների, պալատների և ամրոցների կառուցման վրա: Այդ կառույցները, մասնավորապես՝ **Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի տաճարը,** խորհրդանշում էին կայսրության վեհությունն ու փառքը:

Հուստինիանոսը գրեթե վերականգնել էր Հռոմեական կայսրության սահմանները:

Հայ նշանավոր ո՞ր ճարտարապետն է վերականգնել Ս. Սոֆիայի տաճարի գմբեթը:

Բյուզանդիան Մակեդոնական հարստության օրոք

Հուստինիանոսից հետո Բյուզանդիան դժվարին ժամանակներ էր ապրում: Արաբները բյուզանդացիներից նվաճեցին Ասորիքը, Պաղեստինը և Փոքր Ասիայի արևելքը: Սլավոնները հաստատվեցին Բալկանյան թերակղզու հյուսիսում: Սակայն Բյուզանդիան կրկին հզորացավ **Հայկական (Մակեդոնական) արքայատոհմի** կառավարման շրջանում:

Նոր արքայատոհմի հիմնադիր **Վասիլը (Բարսեղ)** ազգությամբ հայ էր: Նա իրեն համարում էր հայ Արշակունիների ժառանգը: Ծնվել էր Մակեդոնիայում՝ չքավոր գյուղացու ընտանիքում: Մանուկ հասակում գերվել էր բուլղարների կողմից և երկար ժամանակ ապրել գերության մեջ: Վերադառնալով Բյուզանդիա՝ նա



Բյուզանդական կայսրությունը VI–XI դարերում

ծառայության է անցնում կայսերական արքունիքում: Շուտով Վասիլը դառնում է համակառավարիչ Միքայել III կայսեր հետ: Այնուհետև տապալելով նրան՝ դառնում է կայսր:

Վասիլ I–ը մտցրեց գահաժառանգման նոր կարգ: Այժմ միայն իշխող արքայատոհմի ներկայացուցիչները կարող էին կայսր դառնալ: Վասիլ I–ի հանձնարարությամբ լրացվեց Հուստինիանոսի կազմած օրենսգիրքը:

Ի՞նչ տարածքներ նվաճեցին արաբները Բյուզանդիայից:

Ո՞վ էր Հայկական (Մակեդոնական) արքայատոհմի հիմնադիրը: Ինչպե՞ս նա հասավ կայսերական աստիճանի:

Հայկական արքայատոհմի կառավարման տարիներին կայսրությունը նվաճեց Բուլղարական թագավորությունը, Ասորիքը, Հյուսիսային Միջագետքի և Հայաստանի զգալի մասը: Տերության հզորացումը պայմաններ ստեղծեց բյուզանդական մշակույթի վերելքի համար: Հայկական արքայատոհմի կառավարման ժամանակաշրջանն անվանում են **Վերածննդի դարաշրջան:**

Մշակույթի և գիտության հովանավոր էր **Կոստանդին VII Ծիրանածին** կայսրը: Նա գրել է մի շարք գիտական աշխատություններ: Նրա երկերում կարևոր տեղեկություններ կան Բյուզանդիայի պատմության, ինչպես նաև հայերի մասին:

1045 թ. Կոստանդնուպոլսում բացվեց համալսարան, որն ուներ իրավաբանության և փիլիսոփայության բաժիններ:

Ինչո՞վ է հայտնի Կոստանդին VII Ծիրանածին կայսրը:

Ե՞րբ է բացվել Կոստանդնուպոլսի համալսարանը:

Կոստանդին VII Ծիրանածին

Կայսրությունը՝ գրոհների թիրախ

XI դ. երկրորդ կեսին Բյուզանդիան կրկին հայտնվեց դժվարին վիճակում: **Մանազկերտ** քաղաքի մոտ

բյուզանդական զորքը ծանր պարտություն կրեց **թյուրք–սելջուկներից**, իսկ կայսրը գերի ընկավ: Այնուհետև սելջուկները գրավեցին Փոքր Ասիայի մի մասը: Բյուզանդիայի համար մեծ սպառնալիք էին նաև **պեչենեգները,** որոնք ասպատակում էին Բալկանյան թերակղզին: Սելջուկները կայսրության մայրաքաղաքին մոտենում էին ասիական, իսկ պեչենեգները՝ եվրոպական կողմից:

Մանազկերտի ճակատամարտը, XV դարի ֆրանսիական մանրանկար

Ովքե՞ր էին թյուրք–սելջուկները և պեչենեգները:
Ե՞րբ է տեղի ունեցել Մանազկերտի ճակատամարտը:
Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն:

Լատինական կայսրությունը

Կայսրությանը ծանր հարված հասցրեց խաչակրաց IV արշավանքը (1202–1204 թթ.): Արշավանքի նպատակն էր Եգիպտոսի գրավումն ու Երուսաղեմի ազատագրումը: Արևելք տեղափոխվելու համար խաչակիրները հավաքվել էին Վենետիկում: Նրանք բանակցություններ սկսեցին **Վենետիկի** կառավարիչ **Էնրիկո Դանդոլոյի** հետ: Խաչակիրները ծրագրել էին Արևելք հասնել Վենետիկի նավերով: Օգտվելով Բյուզանդիայում ծագած գահակալական կռիվներից՝ Դանդոլոն, որպես տեղափոխման փոխհատուցում, խաչակիրներին առա–

Կոստանդնուպոլսի գրավումը խաչակիրների կողմից 1204 թ.
Հեղինակ՝ Պալմա լե Ժյուն, XV–XVI դդ.

ջարկեց գրավել Կոստանդնուպոլիսը: Խաչակիրները համաձայնեցին: Փոխվեց արշավանքի նպատակը:

Խաչակիրները **1204 թ.** գրավեցին և թալանեցին հեքիաթային հարստություն ունեցող քաղաքը: Նրանք այլևս առաջ չշարժվեցին: Բյուզանդիայից նվաճված տարածքների վրա հիմնադրեցին **Լատինական կայսրությունը**: Բյուզանդիայի փոքրասիական տարածքում հույները ստեղծեցին **Նիկեայի** և **Տրապիզոնի կայսրությունները**:

1261 թ. բյուզանդական Դուկասների տոհմի ներկայացուցիչ Միքայելը հետ գրավեց Կոստանդնուպոլիսը և վերականգնեց կայսրությունը: Սակայն խաչակիրների հարվածներից տուժած Բյուզանդիան այնքան էր թուլացել, որ այլևս չկարողացավ հասնել իր նախկին հզորությանը:

Ե՞րբ է սկսվել խաչակրաց չորրորդ արշավանքը:
Ե՞րբ ստեղծվեց Լատինական կայսրությունը:

Բյուզանդիայի անկումը

XIV–XV դարերում սկսվում է Բյուզանդիայի արագ անկումը: Դրան նպաստեցին ապստամբությունները, սերբերի և բուլղարների արշավանքները: Իրավիճակը ծանրացավ Օսմանյան նորաստեղծ պետության նվաճումների պատճառով: **1453 թ. մայիսի 29–ին** թուրքական բանակը գրավեց Կոստանդնուպոլիսը:

Կոստանդնուպոլսի գրավումը թուրքերի կողմից 1453 թ.

Քրիստոնեական աշխարհը ծանր հարված ստացավ, կորցրեց իր մեծահռչակ քաղաքակրթական կենտրոնը:

Կոստանդնուպոլսի զավթումով փակվեց Արևելահռոմեական կայսրության պատմության վերջին էջը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Հիշի՛ր, թե ինչպես էին անվանում այն պետությունը, որի արքան միաժամանակ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր առաջնորդ էր:

2 Որո՞նք էին կայսերական իշխանության առանձնահատկությունները Բյուզանդիայում:

3. Ի՞նչ տարածքներ նվաճեց Բյուզանդիան Հուստինիանոս I–ի օրոք:

4. Ինչո՞ւ խաչակիրները Երուսաղեմն ազատագրելու փոխարեն գրավեցին Կոստանդնուպոլիսը:

5. Քո կարծիքով ի՞նչ հետևանքներ ունեցավ խաչակրաց IV արշավանքը:

6. Կա՞ արդյոք կապ խաչակրաց արշավանքների և Բյուզանդական կայսրության անկման միջև:

ՊԱՏՄԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Փաստերով հիմնավորի՛ր, որ Հայկական արքայատոհմի օրոք Բյուզանդիան կրկին հզորացել էր:

2. Ի տարբերություն Արևմտահռոմեական կայսրության՝ Բյուզանդիան գոյություն ունեցավ ևս հազար տարի. ինչո՞ւ դա նրան հաջողվեց:

3. Փորձի՛ր ներկայացնել Բյուզանդական կայսրության անկման պատճառները:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. Քո կարծիքով ինչո՞ւ են Հուստինիանոսին անվանել «վերջին հռոմեացի կայսր»:

2. Ներկայացնել Հուստինիանոս I–ի պատմական կերպարը: Պատմական ո՞ր կերպարների հետ կարող ես համեմատել նրան: Իսկ Թեոդորա կայսրուհո՞ւն:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. Հուստինիանոսն իր օրենսգիրքը կազմեց նախկինում ստեղծված օրենքներից, այլ ոչ թե գրել տվեց նոր օրենքներ: Գնահատի՛ր նրա այդ մոտեցումը:

2. Գնահատի՛ր Բյուզանդիայի դերը համաշխարհային պատմության մեջ:

§11 | ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Հին Ռուսիա (Կիևյան Ռուսիա) — արևելյան սլավոնների պետությունը:
«Ռուսսկայա պրավդա» — ռուսական առաջին գրավոր օրենսգիրքը:
Մեծ իշխան — Հին Ռուսիայում պետության ղեկավարը:
Ռուսաստան — XV–XVI դարերում ստեղծված ռուսական պետությունը:
Ցար — Ռուսաստանում 1547–1721 թթ. պետության ղեկավարի տիտղոսը:
Երկրային ժողով — դասային ներկայացուցչական ժողովը Ռուսաստանում:
Դինաստիական ամուսնություն — արքայատոհմերի միջև ամուսնություն, որի նպատակը պետությունների փոխհարաբերությունների ստեղծումն է:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Արևելյան սլավոններ — Արևելյան Եվրոպայում ապրող սլավոնական ցեղեր:
Պոլյաններ — արևելյան սլավոնների ցեղերից:
Օլեգ — Նովգորոդի իշխան, Կիևյան Ռուսիայի հիմնադիրը:
Վլադիմիր — Մեծ իշխան. գահակալել է 980–1015 թթ.:
Յարոսլավ Իմաստուն — Մեծ իշխան. գահակալել է 1019 –1054 թթ.:
Իվան Ահեղ — Ռուսաստանի առաջին ցարը. գահակալել է 1533–1584 թթ.:
Ռոմանովների արքայատոհմ — իշխել է Ռուսաստանում 1613–1917 թթ.:
Կիև — Հին Ռուսիայի մայրաքաղաք. այժմ՝ Ուկրաինայի մայրաքաղաքը:
Մոսկվա — ռուսական նշանավոր քաղաք, որի շուրջ միավորվեցին ռուսական հողերը, և առաջացավ Ռուսաստան պետությունը:

ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: Մտապատկերում

Պատմական իրադարձությունները հիշելու լավագույն միջոցը դրանց ժամանակագրական գրառումն է:

1. Նյութն ընթերցելիս լրացրո՛ւ աղյուսակը:

Աղյուսակ 1

Իրադարձություն	Վայր	Թվական	Կարևոր մարդիկ	Շրջադարձային կետերը	Այլ նշանակալի մանրամասներ

Ինչպե՞ս է կազմավորվել Հին Ռուսիա պետությունը

Եվրոպայի արևելյան շրջաններում հին ժամանակներից բնակվում էին սլավոնական բազմաթիվ ցեղեր: Արևելյան սլավոնները վաղ միջնադարում անցում կատարեցին նախնադարից ավատատիրական կարգերին:

VI–VIII դարերում արևելյան սլավոնների մոտ ձևավորվեցին ցեղային խոշոր միություններ: Յուրաքանչյուր ցեղային միություն ուներ իր ռազմական առաջնորդը՝ **իշխանը:**

Պոլյանների ցեղի ստեղծած միությունը ամենազարգացածն էր: Նրանք ապրում էին **Կիևում** և հարակից շրջաններում: Միության զբաղեցրած տարածքն անվանում էին **Ռուս**:

IX դարում արևելյան սլավոնների ցեղային միությունները միավորվեցին և ստեղծվեց երկու պետություն՝ մեկը **Նովգորոդ**, մյուսը՝ **Կիև** կենտրոնով:

Նովգորոդի իշխան **Օլեգը** 882 թ. գրավեց Կիևը և սլավոնական հողերը միավորեց մեկ պետության մեջ: Այսպես առաջացավ **Հին Ռուսիա** պետությունը:

Նովգորոդի իշխան Օլեգը

Ո՞րն էր Օլեգի՝ Կիևը գրավելու պատճառը:

Արդարացնո՞ւմ ես Օլեգի նվաճողական գործողությունը:

Օլեգը **Կիևը** դարձրեց իր պետության մայրաքաղաքը: Ահա թե ինչու «Հին Ռուսիա» պետությունն անվանում են նաև **Կիևյան Ռուսիա**: Պետությունը ղեկավարում էր **Մեծ իշխանը:** Նրան էին ենթարկվում ռուսական մյուս իշխանները:

Հին Ռուսիան աստիճանաբար հզորացավ: Դրան նպաստեցին կիևյան իշխանների նվաճողական արշավանքները: Նրանց հարձակումների հիմնական թիրախն էր դարձել Բյուզանդիան:

Հին ռուսական պետության կազմավորումն ավարտվեց Մեծ իշխան **Վլադիմիրի** օրոք:

Վլադիմիր I

Ովքե՞ր էին կառավարում Կիևյան պետությունը:

Իսկ ի՞նչը նպաստեց ռուսական պետության հզորացմանը:

Քրիստոնեության ընդունումը

Մինչև X դարի վերջը ռուսները հեթանոսներ էին:

Մեծ իշխան Վլադիմիրը հասկանում էր, որ երկրի ու ժողովրդի համախմբման և հզոր պետություն ունենալու համար անհրաժեշտ է ստեղծել հոգևոր միասնություն՝ ընդունել միասնական հավատք: Եվ ահա **988 թ.** քրիստոնեությունը հռչակվեց Հին Ռուսիայի պետական կրոն:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հաստատվելուց քանի՞ տարի հետո է այն հաստատվել Հին Ռուսիայում:

Քրիստոնեության հռչակումը շրջադարձային եղավ ռուսական մշակույթի զարգացման համար: Փայտե ճարտարապետությանը փոխարինեց քարաշեն ճարտարապետությունը: 989 թ. Կիևում կառուցվեց առաջին քարե եկեղեցին: Զարգացավ գրչությունը, հիմնվեցին դպրոցներ:

Թարգմանվեց և տարածվեց Աստվածաշունչը: Գրվեցին առաջին գրքերը. դրանք ըստ տարիների հերթականության ներկայացնում են պատմական դեպքերն ու դեմքերին և կոչվում են **տարեգրություն**:

Փորձի՛ր մտաբերել, թե որն է հայերեն թարգմանված առաջին գիրքը, և որ թվականներին է այն թարգմանվել: Դրանից մոտավորապես որքա՞ն ժամանակ հետո է այն թարգմանվել ռուսերեն:

Բյուզանդիայի կայսր Վասիլ II-ը Վլադիմիրից ռազմական օգնություն է խնդրում՝ իր դեմ ապստամբած զորավարին ճնշելու համար: Կայսրը դրա դիմաց խոստացավ իր քրոջը՝ Աննային ամուսնացնել Վլադիմիրի հետ: Աննան պայման դրեց, որ ռուս իշխանը պետք է մկրտվի: Վլադիմիրը համաձայնեց, և Ռուսիան դարձավ քրիստոնեական երկիր:

Սուրբ Սոֆիայի տաճարը Կիևում, 1037 թ.

Յարոսլավ Իմաստունի արձանը, ձեռքին՝ «Ռուսկայա պրավդա» առաջին գրավոր օրենսգիրքը

Ռուսաստանը, որպես քրիստոնեական պետություն, դարձավ Եվրոպայի մի մասը: Ամրապնդվեցին երկրի կապերը եվրոպական պետությունների հետ: Դրանում կարևոր դեր խաղացին ***դինաստիական ամուսնությունները:***

Յարոսլավ Իմաստունը

Վլադիմիրից հետո Մեծ իշխանի տիտղոսի համար նրա որդիների միջև սկսվեց սուր պայքար: Ի վերջո հաղթեց **Յարոսլավը:**

Գրչության զարգացումը Յարոսլավին հնարավորություն տվեց քաղաքներում ու նշանավոր վանքերում բացել բազմաթիվ դպրոցներ: Վերելք ապրեցին գրականությունը և արվեստը: Քրիստոնեության ընդունումը մեծ ազդեցություն ունեցավ նաև գեղանկարչության զարգացման վրա: Եկեղեցիները սկսեցին զարդարվել որմնանկարներով ու խճանկարներով:

Պետական իշխանությունն ուժեղացնելու և հասարակության տարբեր դասերի միջև հարաբերությունները կանոնակարգելու նպատակով Յարոսլավը ստեղծեց ռուսական առաջին գրավոր օրենքը: Իսկ նրա որդիները կազմեցին առաջին օրենքների ժողովածուն, որը հայտնի է **«Ռուսսկայա պրավդա»** անունով: Դրա ստեղծումը Կիևյան Ռուսիայի մշակույթի ձևավորման կարևոր փուլերից էր: Յարոսլավը ստացել է **Իմաստուն** պատվանունը:

Վերհիշի՛ր քեզ հայտնի այլ երկրների օրենսգրքեր:

Պատմական ո՞ր կերպարների հետ կարող ես համեմատել Յարոսլավ Իմաստունին:

Ռուսաստանի կազմավորումը

XII դարում **Ռուսիան թուլացավ** և տրոհվեց բազմաթիվ անկախ իշխանությունների: Մասնատված ռուսական պետությունը չկարողացավ դիմագրավել մոնղոլ-թաթարների հարձակումներին: Ահա թե ինչու **1237–1241 թթ. մոնղոլները կարողացան նվաճել և իրենց տիրապետության տակ գցել Ռուսիայի մեծ մասը**: Ավելի ուշ Լիտվական մեծ իշխանությունը գրավեց երկրի արև-

մտյան և հարավային շրջանները: **Ռուսական պետականությունը երկու դար անկումային վիճակում էր:**

XIV դարում սկսեց ուժեղանալ **Մոսկվայի իշխանությունը:** Մոնղոլները Մոսկվայի իշխանին ճանաչեցին ռուսական **Մեծ իշխան** և նրան տվեցին հարկահավաքության իրավունք:

Մոսկվայի իշխանությունն էլ գլխավորեց երկրի միավորման և անկախության վերականգնման համար պայքարը: Դրա համար XIV–XV դարերի ընթացքում ստեղծվել էին անհրաժեշտ նախադրյալներ՝ **տնտեսական, սոցիալական, հոգևոր–գաղափարական, քաղաքական**:

Մոսկվայի հեղինակությունը բարձրացավ հատկապես **1380 թ. Կուլիկովոյի ճակատամարտում** մոնղոլների նկատմամբ տարած հաղթանակի շնորհիվ: Դրանից հետո արագացավ ռուսական հողերի միավորման գործընթացը: Անկախության համար պայքարի արդյունքում ստեղծվեց **Մոսկովյան Ռուսիա** պետությունը: XV դարում՝ Իվան III–ի օրոք, այն սկսեց կրել **Ռուսաստան** անվանումը:

Դմիտրի Դոնսկոյը Կուլիկովոյի ճակատամարտում

Իվան IV Ահեղ

Ռուսաստանը ոչ միայն միավորեց բուն ռուսական հողերի մեծ մասը, այլև սկսեց տարածապես աճել: Երկրի հզորացման գործը շարունակեց Իվան III–ի թոռը՝ **Իվան IV Ահեղը:** Թագադրվելիս նա ընդունեց **ցար** տիտղոսը:

Իվան IV–ը պետության ուժեղացման նպատակով իրականացրեց մի շարք վերափոխումներ: **1549 թ.** հրավիրեց դասային ներկայացուցչական ժողով՝ **Երկրային ժողով**: Պետական այս մարմինը կազմվեց ավատատերերի, հոգևորականների և քաղաքների ներկայացուցիչներից: Այսպես Ռուսաստանում ձևավորվեց **դասային միապետություն**:

Ցարը ստեղծեց **մշտական բանակ** ավատատերերից: Պատերազմի դեպքում հավաքագրվում էր նաև աշխարհազոր:

Նրա օրոք ստեղծվեց նոր **Դատաստանագիրք:**

Իվան Ահեղը դաժան և բռնակալ միապետ էր, ձգտում էր անսահմանափակ իշխանության: Իր քաղաքական հակառակորդների և ընդդիմադիր ուժերի հանդեպ կիրառում էր ահաբեկության քաղաքականություն: Բռնաճնշումները թուլացրին ազնվականությանը և ամրապնդեցին ցարի իշխանությունը: Սակայն դրա հետևանքով անկում ապրեց երկրի տնտեսությունը, թուլացավ պետությունը:

Իվան Ահեղ
Վիկտոր Վասնեցով, 1897թ.

Ո՞րն էր Իվան Ահեղի՝ ահաբեկության քաղաքականություն վարելու նպատակը: Ի՞նչ հետևանք ունեցավ այն:

Իսկ ինքը հասա՞վ իր նպատակին:

Ռոմանովների արքայատոհմի հաստատումը

Իվան Ահեղից հետո նրա որդին չկարողացավ ինքնուրույն կառավարել երկիրը, և գահի խնամակալ դարձավ **Բորիս Գոդունովը:** Շուտով նա ընտրվեց ցար, սակայն գահակալեց միայն մի քանի տարի:

Գոդունովից հետո երկիրն ապրեց խառնակ շրջան: Ընթանում էր իշխանության համար պայքար, տեղի էին

Բորիս Գոդունով

Միխայիլ Ռոմանով

ունենում գյուղացիների ապստամբություններ: Հայտնվեցին ինքնակոչ ցարեր, որոնք սպառնալիք դարձան երկրի ապագայի համար: Նրանց աջակցող Լեհաստանը և Շվեդիան, օգտվելով իրադրությունից, զավթեցին Ռուսաստանի մի մասը:

Անկախության կորստի սպառնալիքը ոտքի հանեց երկրի հայրենասիրական ուժերին: Նրանք վտարեցին ինքնակոչներին, ազատագրեցին մայրաքաղաք Մոսկվան:

1613 թ. գումարված երկրային ժողովը ցար ընտրեց **Միխայիլ Ռոմանովին:** Այսպես հաստատվեց **Ռոմանովների արքայատոհմը,** որը այդուհետ իշխեց մինչև 1917 թվականը:

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է ցեղային միությունը:

2. Որտեղի՞ց է առաջացել «Ռուսիա» անվանումը:

3. XIV դարում ովքե՞ր սկսեցին կրել Մեծ իշխանի տիտղոսը:

4. Ի՞նչ էր նշանակում «ցար» տիտղոսը: Ովքե՞ր են կրել այդ տիտղոսը:

5. Մեկնաբանի՛ր «երկրային ժողով» եզրույթը:

6. Մեկնաբանի՛ր «արքայատոհմ» եզրույթը: Բե՛ր արքայատոհմի երկու օրինակ:

7. Քո կարծիքով ինչո՞ւ մոնղոլները կարողացան հեշտությամբ նվաճել Ռուսիան:

8. Ի՞նչը նպաստեց Մոսկվայի դերի ու հեղինակության բարձրացմանը:

9. Համեմատե՛ք ձեր լրացրած աղյուսակ 1–ը և փոխադարձաբար լրացրե՛ք այն:

10. Ըստ ձեր ժամանակագրական գրառման՝ փորձե՛ք.

– գտնել կապեր գրառված դեպքերի միջև,

– ցույց տալ դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերը:

11. Ըստ ձեր ժամանակագրական գրառման՝ պատասխանե՛ք հարցերին.

– Ո՞ր թվականներին է կառավարել Մեծ իշխան Յարոսլավը:

– Ե՞րբ է կառավարել Իվան Ահեղը:

– Ե՞րբ է հաստատվել Ռոմանովների արքայատոհմը:

ԱՇԽԱՏԱՆՔ ՔԱՐՏԵԶՈՎ

Ելնելով էջ 103–ի քարտեզից՝

– Ներկայացրո՛ւ Իվան Ահեղի նվաճումները:

– Ինչո՞ւ էր Ռուսաստանը տարածապես անընդհատ աճում: Ի՞նչ հետևանքներ դա ունեցավ:

Մոսկվայի մեծ իշխանության տարածքը 1462 թ. դրությամբ

Ռուսական զորքերի արշավանքները միացյալ պետության ստեղծման նպատակով

Ռուսաստանի տարածքը XVI դ. կեսին

Ռուսական զորքերի արշավանքները XVI դ. երկրորդ կեսին

XVI դ. երկրորդ կեսին Ռուսաստանի նվաճած տարածքները

Ռուսաստանի սահմանները XVI դ. վերջին

Ռուսաստանի կազմավորումն ու ընդարձակումը XIV–XVI դդ.

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Պատրաստե՛ք փոքրիկ խոսք և շարունակելով միմյանց՝ բերված պլանի հիման վրա ամփոփ ձևով ներկայացրե՛ք «Ռուսաստանը միջնադարում» թեման:

- *Նախնադարից անցում ավատատիրական կարգերին:*
- *Հին կամ Կիևյան Ռուսիայի ստեղծումը:*
- *Հին Ռուսիայի թուլացումը և դրա հետևանքները:*
- *Երկրի միավորման և անկախության վերականգնման համար պայքարը: Դրա նախադրյալները և հետևանքները:*
- *Ռուսաստանի կազմավորումն ու հզորացումը:*

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

1. *Օգտվելով դասանյութից, այլ գրականությունից և համացանցի նյութերից՝ ներկայացրե՛ք և գնահատե՛ք Իվան Ահեղի պատմական կերպարը:*
2. *Ուսումնասիրե՛ք և ներկայացրե՛ք միջնադարյան Ռուսաստանի մշակութային մի քանի դրվագ:*

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. *Խմբով քննարկե՛ք և պարզաբանե՛ք, թե ինչ նշանակություն ունեցավ քրիստոնեության ընդունումը Կիևյան Ռուսիայի համար: Օգտագործե՛ք Հայաստանի, Բյուզանդիայի և այլ երկրների օրինակը:*
2. *Ի՞նչ դեր են ունեցել անհատները Ռուսաստանի կազմավորման ու հզորացման գործում: Պատասխանդ հիմնավորելու համար անդրադա՛րձ կատարիր երկու–երեք անհատների և նրանց կատարած մի քանի կարևոր քայլերին:*
3. *Որքանո՞վ ես համամիտ Մեծ իշխան Յարոսլավին «Իմաստուն» մականուն տալուն: Հիմնավորի՛ր պատասխանդ՝ բերելով երկու–երեք փաստարկ:*

§12 | ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Խաչակիր — Խաչակրաց արշավանքների մասնակից:

Խաչակրաց արշավանքներ — Եվրոպական պետությունների և կաթոլիկ եկեղեցու կողմից կազմակերպված արշավանքներ (XI–XIII դարեր), որոնց նպատակը Սուրբ երկիրը մուսուլմաններից ազատագրելն էր:

Եդեսիայի կոմսություն, Անտիոքի դքսություն, Երուսաղեմի թագավորություն — խաչակիրների ստեղծած պետություններ Ասորիքում և Պաղեստինում:

Հոգևոր–ասպետական միաբանություն — հոգևորականների կողմից ստեղծված կառույց, որի նպատակը խաչակրաց պետությունների պաշտպանությունն էր և դեպի Սուրբ երկիր ուխտագնացների անվտանգության ապահովումը:

Ա/Ֆ ԲԱՌԱՊԱՇԱՐ

Կլերմոն — քաղաք Ֆրանսիայում, որտեղ 1095 թ. որոշվեց ձեռնարկել խաչակրաց արշավանք:

Ուրբանոս II պապ — խաչակրաց առաջին արշավանքի նախաձեռնողը:

Ռիչարդ I Առյուծասիրտ — Անգլիայի թագավոր 1189–1199 թթ., խաչակրաց երրորդ արշավանքի ղեկավարներից:

Սալահ ադ Դին — Եգիպտոսի սուլթան 1174–1193 թթ.:

Բալդուին — Խաչակրաց առաջին արշավանքի առաջնորդներից, Եդեսիայի կոմսության հիմնադիրը:

Ֆրիդրիխ I Բարբարոսա — Սրբազան հռոմեական կայսրության կայսր 1155–1190 թթ., խաչակրաց երրորդ արշավանքի ղեկավարներից:

Ֆիլիպ II Օգոստոս — Ֆրանսիայի թագավոր 1180–1223 թթ., խաչակրաց երրորդ արշավանքի ղեկավարներից:

Ակրա — քաղաք Պաղեստինում, խաչակիրների վերջին հենակետը:

Խաչակրաց շարժման առաջացումը, պատճառները

XI դարի վերջից Արևմտյան Եվրոպայից դեպի Արևելք սկսվեցին խաչակրաց արշավանքներ: Արշավանքների նախաձեռնողը Հռոմի կաթոլիկ եկեղեցին էր:

Արշավանքների հիմնական պատճառներն էին.

- Երաշտի և այլ բնական աղետների պատճառով Արևմտյան Եվրոպայում սկսված սովը և գոյության միջոցների սակավությունը:
- Եվրոպայի բնակչության քանակական մեծ աճը:
- Թյուրք–սելջուկների արշավանքների պատճառով Բյուզանդական կայսրության կողմից օգնություն հայցելը հավատակից Եվրոպայից: Սելջուկների կողմից Երուսաղեմի գրավումով դժվարացել էր ուխտագնացությունը դեպի Սուրբ երկիր՝ Քրիստոսի գերեզման:
- Եվրոպայում ավատատիրության զարգացման արդյունքում պրոֆեսիոնալ ռազմիկների՝ ասպետների ստվար դասի ձևավորումը, որի գործը միայն պատերազմելն էր:
- Հիսուս Քրիստոսի գերեզմանի ազատագրումը անհավատներից:
- Արևելքում իր ազդեցությունը տարածելու Կաթոլիկ եկեղեցու ձգտումը:

Քո կարծիքով խաչակրած արշավանքների տրված պատճառներից ո՞րն էր ամենագլխավորը:



Ուրբանոս II

1095 թ. նոյեմբերին Ֆրանսիայի **Կլերմոն** քաղաքում հրավիրված ժողովում **Ուրբանոս II պապը** ելույթ ունեցավ Եվրոպայի տարբեր երկրներից եկած ազնվականների և հոգևորականների բազմության առջև: Նա կոչ արեց Երուսաղեմը և Տիրոջ գերեզմանը ազատագրել մուսուլմաններից: Խանդավառված բազմությունը գոչեց՝ «Դա է Աստծո կամքը», և պատրաստվեց արշավանքի: Նրանք, ովքեր հետևեցին պապի կոչին և ճանապարհ ընկան, իրենց հագուստի վրա խաչ պատկերեցին, որի համար էլ ստացան **խաչակիր** անվանումը:

Արևելքում ստեղծված քաղաքական իրադրությունը նպաստավոր էր խաչակրաց արշավանքի համար:

Ուրբանոս II պապը Կլերմոնի ժողովում

Աշխատանք սկզբնաղբյուրով

Հատված Ուրբանոս II–ի ճառից. *«Ֆրանկների՛ ազգ, դուք եկել եք Ալպերից անդին, դուք Աստծո ընտրյալն եք ու սիրված նրա կողմից: Այն հողերը, որոնք դուք բնակեցնում եք, ճզմված են լեռների ու ծովերի մեջտեղում և հազիվ են դիմանում ձեր բազմամարդությանը: Այդ հողերը այնքան հարուստ չեն, որ բոլորիդ կերակրեն, և այդ պատճառով դուք իրար եք խժռում ու պատերազմում միմյանց դեմ: Թող որ դադարեն ձեր միջև բոլոր վեճերն ու պատերազմները, և թող բոլոր ձեր կռիվներն ու ատելությունը քուն մտնեն: Վե՛ր կացեք, ճանապա՛րհ ընկեք Տիրոջ գերեզմանի համար, խլե՛ք այդ հողերը անհավատներից և վտարե՛ք նրանց այնտեղից: Այդ երկիրը այնքան հարուստ է, որ կաթն ու մեղրը գետերով են հոսում: Երուսաղեմը աշխարհի կենտրոնն է՝ ամենահարուստ և բերրի հողը երկրի վրա, Երուսաղեմը երկրորդ դրախտն է»:*

Արաբական խալիֆայությունը կորցրել էր նախկին հզորությունը, սելջուկյան տերությունը տրոհվել էր առանձին սուլթանությունների:

Ուրբանոս II–ը ե՞րբ և որտե՞ղ Երուսաղեմը գրավելու կոչ արեց:

Փորձի՛ր վերլուծել Ուրբանոս II–ի ճառը և դրանում գտնել խաչակրաց արշավանքների պատճառները:

Առաջին արշավանքը

Խաչակրաց առաջին արշավանքը սկսվեց 1096 թ. և ընթացավ երկու փուլով: Նախ՝ արշավանքի դուրս եկավ գյուղացիներից և քաղաքային աղքատ բնակչությունից հավաքված բազմահազար զորքը: Նրանք վատ էին զինված, անկազմակերպ էին և չունեին պարենի անհրաժեշտ պաշար: Գյուղացիական բանակը հասավ Կ. Պոլիս և կայսեր տված նավերով տեղափոխվեց Փոքր Ասիա: Սակայն շուտով խաչակիրների զորքը պարտություն կրեց սելջուկներից՝ տալով ավելի քան

25 հազար զոհ: Սրանով էլ ավարտվեց գյուղացիական խաչակրաց արշավանքը:

Քո կարծիքով իրո՞ք եվրոպացի գյուղացիները ձգտում էին ազատագրելու Տիրոջ գերեզմանը, թե՞ դրա համար այլ շարժառիթ կար:

Ինչո՞ւ գյուղացիական արշավանքը չէր կարող հասնել հաջողության:

Խաչակիր–ասպետների զորքը արշավանքի դուրս եկավ ավելի ուշ՝ նույն տարվա աշնանը: Զորքի թիվը հասնում էր 30 հազարի: 1097 թ. խաչակիրները հաղթեցին սելջուկյան բանակին և շարունակեցին երթը դեպի Սուրբ երկիր: **Կիլիկիայով** անցնելիս նրանց մեծ օգնություն ցույց տվեցին տեղի հայերը:

Խաչակիրների առաջնորդներից **Բալդուինը** 1098 թ. խաբեությամբ մտավ **Եդեսիա**: Նա դավադրաբար սպանեց քաղաքի հայազգի կառավարչին՝ Թորոս Կյուրապաղատին: Այստեղ նա ստեղծեց **խաչակրաց առաջին պետությունը՝ Եդեսիայի կոմսությունը:**

Նույն թվականին խաչակիրները գրավեցին **Անտիոք** քաղաքը և ստեղծեցին **Անտիոքի դքսությունը:** Այնուհետև նրանք **1099 թ. օգոստոսի 15**–ին գրավեցին **Երուսաղեմ** քաղաքը: Նրանք գրված տարածքներից ստեղծեցին **Երուսաղեմի թագավորությունը:** Դրա մեջ էին մտնում Անտիոքի դքսությունը, Եդեսիայի և Տրիպոլիի կոմսությունները:

Երուսաղեմի գրավումը խաչակիրների կողմից, 1099 թ.

Խաչակրաց արշավանքները

Որտե՞ղ և ի՞նչ պայմաններում ստեղծվեց Եդեսիայի կոմսությունը:

Խաչակրաց երկրորդ պետությունը ե՞րբ և որտե՞ղ ստեղծվեց:

Ե՞րբ ստեղծվեց Երուսաղեմի թագավորությունը: Ո՞ր քաղաքական միավորներն էին մտնում դրա կազմի մեջ:

Խաչակրաց թագավորության պաշտպանության նպատակով հիմնվեցին **հոգևոր–ասպետական միաբանություններ**: Դրանցից առաջինը **Հիվանդախնամների** միաբանությունն էր: Այնուհետև ստեղծվեցին **Տաճարականների** և **Տևտոնական** միաբանությունները: Դրանց անդամները **միաժամանակ վանականներ** էին և **ասպետներ**: Նրանք երդվում էին չամուսնանալ, կաթոլիկություն տարածել և մարտնչել մուսուլմանների դեմ:

Ի՞նչ է հոգևոր–ասպետական միաբանությունը: Ի՞նչ էին պարտավորվում անել միաբանները: Թվարկի՛ր Արևելքում առաջացած հոգևոր–ասպետական միաբանությունները:

Երեք արքաների արշավանքը

Սալահ ադ Դին

Խաչակիրների դրությունը Արևելքում ծանրացավ, երբ **Եգիպտոսի սուլթան** դարձավ **Սալահ ադ Դինը:** Նրա պապը ծնվել էր Հայաստանում: Սալահ ադ Դինը **1187 թ.** գրավեց **Երուսաղեմը:** Մուսուլմանները ևս այն համարում էին իրենց սուրբ քաղաքը:

Երուսաղեմի անկման լուրը ցնցեց քրիստոնյա Եվրոպան: Եվրոպացիները նախապատրաստվեցին նոր արշավանքի: Այն գլխավորեցին գերմանական կայսր **Ֆրիդրիխ I Բարբարոսան**, Անգլիայի թագավոր **Ռիչարդ I Առյուծասիրտը** և Ֆրանսիայի թագավոր **Ֆիլիպ II Օգոստոսը:**

Նախապատրաստությունից հետո **1189 թ.** սկսվեց երրորդ արշավանքը: Հենց սկզբից այն անհաջող ընթացք ունեցավ: Կիլիկիայի գետերից մեկում լողալիս Ֆրիդրիխ I–ը խեղդվեց: Գերմանացի խաչակիրները վերադարձան:

Ժամանելով Սուրբ երկիր՝ **Ֆիլիպ II–ը** հետ գրավեց **Ակրա քաղաքը,** որը դարձավ Երուսաղեմի թագավորության մայրաքաղաքը: Ռիչարդը գրավեց Կիպրոսը: Սակայն երկու թագավորների միջև գժտության պատճառով Ֆիլիպը վերադարձավ Ֆրանսիա: Մնալով միայնակ՝ Ռիչարդը Սալահ ադ Դինի հետ **1192 թ.** կնքեց հաշտության պայմանագիր: Եվրոպայի ուխտավորները հնարավորություն ստացան անարգել այցելելու սուրբ վայրեր:

Ի՞նչ արդյունքների հասավ Սալահ ադ Դին խաչակիրների դեմ պայքարում:

Ո՞ր իրադարձությունը պատճառ դարձավ խաչակրաց երրորդ արշավանքի համար: Քո կարծիքով ի՞նչ արդյունք ունեցավ այն:

Արշավանքների հետևանքները

Երրորդ արշավանքից հետո խաչակրաց շարժումը անկում ապրեց: Դրա հեղինակազրկմանը նպաստեց չորրորդ արշավանքը, որի մասին դուք արդեն գիտեք:

Ակրայի պաշարումը

Հաջորդ չորս արշավանքները էական հաջողություն չբերեցին խաչակիրներին: **1291 թ.** մուսուլմանները գրավեցին նրանց վերջին հենակետ **Ակրան**: Այսպես **ավարտվեցին խաչակրաց արշավանքները** դեպի Սուրբ երկիր:

Խաչակրաց արշավանքները ունեցան նաև դրական հետևանքներ առաջին հերթին եվրոպացիների համար: Նրանք մոտիկից շփվեցին արևելյան մշակույթի հետ: Արևելքի ժողովուրդներից եվրոպացիները սովորեցին կազմել ճշգրիտ քարտեզներ, օգտագործել մագնիսական կողմնացույց, կառուցել որակյալ նավեր և ամրոցներ: Խաչակիրներն իրենց հետ Եվրոպա բերեցին մշակութային շատ արժեքներ:

Արշավանքների հետևանքով Արևմուտք–Արևելք փոխհարաբերությունները սերտացան և հետագայում դարձան մշտական:

Ե՞րբ ավարտվեցին խաչակրաց արշավանքները դեպի Սուրբ երկիր:

ԱՇԽԱՏԱՆՔ ՔԱՐՏԵԶՈՎ

Թվարկի՛ր խաչակրաց պետությունները և ցո՛ւյց տուր դրանք քարտեզի վրա: Քարտեզի վրա գտի՛ր առաջին և երրորդ արշավանքների երթուղիները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Բացատրի՛ր «խաչակիր» հասկացությունը:*
2. *Որո՞նք էին խաչակրաց շարժման պատճառները: Մեկնաբանի՛ր դրանք: Ո՞վ էր նախաձեռնել խաչակրաց արշավանքները:*
3. *Ե՞րբ է սկսվել խաչակրաց առաջին արշավանքը:*
4. *Քո կարծիքով ո՞րն էր երրորդ արշավանքի ձախողման հիմնական պատճառը:*
5. *Որո՞նք էին շարժման դրական հետևանքները: Օգտվելով նաև այլ աղբյուրներից՝ ինքնուրույն փորձի՛ր գտնել արշավանքների բացասական հետևանքները:*

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

1. *Քո կարծիքով ինչո՞ւ էին Կիլիկիայի հայերը օգնում խաչակիրներին:*
2. *Փորձի՛ր հիմնավորել՝ կարող էր Կիլիկիայի հայկական պետությունը շահել Սուրբ երկրում խաչակրաց պետությունների առկայությունից: Եթե այո, ապա ինչպե՞ս, իսկ եթե ոչ, ապա ի՞նչ բացասական հետևանքներ ունեցան խաչակրաց արշավանքները Կիլիկիայի հայերի համար:*

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Փորձի՛ր գնահատել խաչակրաց արշավանքների դերը Արևելք–Արևմուտք փոխհարաբերությունների զարգացման մեջ:

§13 | ԱՆԳԼԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Դասային ներկայացուցիչների ժողով — ազնվականների, հոգևորականների և քաղաքացիների դասերի ներկայացուցիչներից ձևավորված իշխանության մարմին:

Դասային միապետություն — պետության նոր տիպ, որտեղ միապետին կից գործում է դասային ներկայացուցիչների ժողովը:

Շերիֆ — Անգլիայի վարչական միավորների՝ կոմսությունների կառավարիչը:

Բարոն — անգլիական խոշոր ավատատիրոջ անվանումը:

Ասպետ — միջնադարյան Արևմտյան Եվրոպայում մանր ավատատեր, որը չուներ ժառանգական տիտղոս և սեփական վասալներ:

Պառլամենտ (խորհրդարան) — այդպես է կոչվել Անգլիայի դասային ներկայացուցիչների ժողովը, որը առաջին անգամ հրավիրվել է 1265 թ.:

Լորդերի պալատ — Անգլիայի պառլամենտի վերին պալատը:

Համայնքների պալատ — Անգլիայի պառլամենտի ստորին պալատը:

Ռեֆորմացիա (վերափոխում) — հասարակական–քաղաքական և կրոնական շարժում Եվրոպայում, որի նպատակը եկեղեցու վերակառուցումն էր:

Անգլիկան եկեղեցի — հիմնադրել է Հենրիխ VIII–ը 1534 թ. օրենքով. այդ ժամանակից մինչ օրս անգլիական եկեղեցու առաջնորդը թագավորն է:

Աշխարհագրական մեծ հայտնագործություններ — XV–XVIII դարերում եվրոպացի ճանապարհորդների կողմից նոր աշխարհամասերի և երկրների հայտնաբերման գործընթացը:

Մանուֆակտուրա — բառացի նշանակում է «ձեռքով պատրաստված»: Աշխատանքի բաժանման և տեխնիկայի օգտագործման վրա հիմնված մեծ ձեռնարկություն:

ԱՆՁ ԲԱՌԱՊԱՇԱՐ

Վիլհելմ Նվաճող — գահակալել է 1066–1087 թթ., Անգլիան նվաճելու համար ստացել է Նվաճող մականունը:

Հենրիխ II Պլանտագենետ — գահակալել է 1154–1189 թթ.:

Լոնդոն — Անգլիայի մայրաքաղաքը. հիմնադրվել է հռոմեացիների կողմից 47 թ.:

Հենրիխ VIII — գահակալել է 1509–1547 թթ., նա է հիմնել անգլիկան եկեղեցին:

Անգլիայի թագավոր Վիլհելմ I Նվաճող (1066–1087)

Անգլիան վաղ միջնադարում

Բրիտանիա կղզում հաստատված անգլերի և սաքսերի ցեղերը վաղ միջնադարում ստեղծել էին մի քանի թագավորություններ: VI–VII դարերում հեթանոս անգլոսաքսերը քրիստոնեություն ընդունեցին: Թագավորությունները **829 թ.** միավորվեցին մեկ պետության մեջ, որը զբաղեցնում էր կղզու մեծ մասը: Միավորված պետությունը այդ ժամանակից կոչվեց **Անգլիա:**

Անգլիայի հետագա զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցավ նորմանական նվաճումը: **Նորմանդիայի** (Ֆրանսիայի տարածքում էր) դուքս **Վիլհելմը** մեծ զորքով **1066 թ. մտավ Անգլիա** և նվաճեց այն: Վիլհելմն իրեն հռչակեց Անգլիայի թագավոր:

Նվաճողները սեփականացրին անգլոսաքսոնական խոշոր հողատերերի հողերը: Թագավորական իշխանության ամրապնդման նպատակով Վիլհելմը երկիրը բաժանեց կոմսությունների: Կոմսության վարչական և դատական գործերը տնօրինում էր արքայի կողմից նշանակված **շերիֆը,** որը նաև հավաքում էր հարկերը:

Ե՞րբ է ստեղծվել Անգլիա պետությունը:

Ո՞վ էր Վիլհելմ Նորմանդացին: Ինչո՞ւ է նա ստացել Նվաճող մականունը:

Ի՞նչ է նշանակում շերիֆ:

Քո կարծիքով ինչո՞ւ ֆրանսիական նվաճողները սեփականացրին տեղացի խոշոր հողատերերի հողերը:

Թագավորության ընդլայնումը Ֆրանսիայի հաշվին

Նորմանական արքայատան անկումից հետո 1154 թ. Անգլիայի թագավոր ընտրվեց **Անժու** կոմսության (Ֆրանսիայում է) կոմս, ֆրանսիացի ազնվական **Հենրիխ II Պլանտագենետը**: Անգլիայի կազմի մեջ ընդգրկվեցին նաև Հենրիխին պատկանող տարածքները: Նա ամուսնացած էր Էլեոնորա Աքվիտանացու հետ, ուստի Աքվիտանիայի դքսությունը որպես օժիտ ևս անցավ Անգլիային: Այսպես Անգլիան դարձավ Պլանտագենետների տերություն:

Պետության կենտրոնացման և թագավորական իշխանության ուժեղացման համար Հենրիխ II–ն անցկացրեց **դատական** և **ռազմական** վերափոխումներ:

Ֆրանսիայի հաշվին Անգլիայի տարածքի ընդլայնումը լուրջ հակամարտություն առաջացրեց Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Հետագայում տարածքային վեճերն այնքան սրվեցին, որ հանգեցրին պատմության մեջ հայտնի **Հարյուրամյա պատերազմին** (տե՛ս հաջորդ դասանյութը):

Ո՞վ էր Հենրիխ II Պլանտագենետը:

Մեկնաբանի՛ր «Անգլիան դարձավ Պլանտագենետների տերություն» ձևակերպումը:

Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Հենրիխ II–ը թագավորական իշխանությունն ամրապնդելու նպատակով:

Ո՞րն էր Անգլիայի և Ֆրանսիայի միջև լուրջ հակամարտության պատճառը:



Հարյուրամյա պատերազմից հետո Անգլիայում պայքար սկսվեց հանուն իշխանության: Այն հայտնի է Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմ անունով: Իշխանության համար պայքարում էին Յորքի դուքսերը՝ Թյուդորները, որոնց զինանշանի վրա պատկերված էր սպիտակ վարդ: Նրանք կռվում էին իշխող Լանքաստերների (սրանց զինանշանի վրա պատկերված էր կարմիր վարդ) դեմ: Երեսուն տարի տևած պատերազմից հետո իշխանությունը գրավեց Թյուդորների տոհմը:

Դասային միապետության առաջացումը

Անգլիայի, ինչպես նաև Եվրոպայի այլ երկրների թագավորները կառավարման ընթացքում հաճախ էին ֆինանսական կամ ռազմական միջոցների պակաս ունենում: Խնդրի լուծման նպատակով նրանք դիմում էին հասարակության երեք դասերի՝ **ազնվականների, հոգևորականների** և **քաղաքացիների** օգնությանը:

Դասերը թագավորի պահանջները քննարկում էին իրենց ներկայացուցիչների ժողովում: Քանի որ նման խնդիրներ գրեթե միշտ էին առաջանում, թագավորին կից ստեղծվում է **դասերի ներկայացուցիչների ընդհանուր ժողով (պառլամենտ):** Առաջինը նման ժողով ձևավորվեց Անգլիայում: Դասային ներկայացուցիչների ժողովը՝ **պառլամենտը,** ուներ **երկու պալատ՝** Լորդերի և Համայնքների: **Լորդերի** պալատում նիստեր էին անցկացնում բարձրաստիճան հոգևորականները և բարոնները, իսկ **Համայնքների** պալատում՝ ասպետները և քաղաքացիները:

Ժամանակի ընթացքում պետության կարևոր օրենքներն ու որոշումները նույնպես սկսեցին քննարկվել և հաստատվել այդ ժողովներում: Մինչ այդ թագավորը միանձնյա էր որոշումներ կայացնում:

Այսպես ձևավորվեց **նոր տիպի պետություն**, որը ստացել է **դասային միապետություն** անունը:

Թվարկե՛ք միջնադարի հասարակության դասերը:

Ինչպե՞ս է առաջացել դասային միապետությունը: Փորձե՛ք գծապատկերի տեսքով ներկայացնել այն:

Անգլիկան եկեղեցին

Անգլիայի թագավոր Հենրիխ VIII

Եվրոպայի տարբեր երկրներում XVI դարում առաջացան բողոքական եկեղեցիներ: Դա այսպես կոչված **Ռեֆորմացիայի** ժամանակաշրջանն էր:

Անգլիայի **Հենրիխ VIII** թագավորը **1534 թ.** հրապարակեց **գերագահության մասին** օրենք: Ըստ դրա՝ այսուհետ անգլիական եկեղեցու առաջնորդը ոչ թե Հռոմի պապն էր, այլ Անգլիայի թագավորը: Հոգևորականներին սկսեց վարձատրել պետությունը, իսկ ժամասացությունը դարձավ անգլերեն: Եկեղեցապատկան հողերը բռնագրավվեցին: Որպես հետևանք՝ թուլացավ պապի ազդեցությունը անգլիական եկեղեցու վրա:

Այսպես Անգլիայում ձևավորվեց բողոքական եկեղեցի, որը ստացել է **անգլիկան եկեղեցի** անվանումը:

Բացատրի՛ր «Ռեֆորմացիա» հասկացությունը:

Ո՞վ և ե՞րբ հրապարակեց գերագահության մասին օրենքը Անգլիայում:

Ներկայացրո՛ւ անգլիկան եկեղեցու առանձնահատկությունները:

Երկիրը միջնադարի ավարտին

XVI դարի վերջերից Անգլիան տնտեսապես ամենազարգացած երկիրն էր Եվրոպայում: **Աշխարհագրական մեծ հայտնագործությունների** ընթացքում նա դարձավ միջազգային ծովային առևտրի համաշխարհային կենտրոններից մեկը:

Վերելք ապրեցին տնտեսության բոլոր ճյուղերը, զարգացան արտադրության տեխնիկական միջոցները: Հատկապես ընդլայնվեց բրդի և բրդե գործվածքեղենի արտադրությունը: Դրանք արտահանվում էին Եվրոպա և այլ աշխարհամասեր: Մեծ վերելք ապրեց

քարածխի արդյունահանումը, որով Անգլիան գրավում էր առաջին տեղն աշխարհում:

Արտադրության կազմակերպման մեջ տեղի ունեցավ կարևոր փոփոխություն: Առաջացավ **մանուֆակտուրան**: Այդտեղ աշխատում էին վարձու մարդիկ՝ բանվորներ. յուրաքանչյուր աշխատող կատարում էր որոշակի մասնագիտացված աշխատանք, սակայն տիրապետող էր ձեռքի աշխատանքը: Անհատ արհեստավորների աշխատանքի համեմատ՝ մանուֆակտուրայում մի քանի անգամ բարձր էր աշխատանքի արտադրողականությունը:



Աշխատանքը մանուֆակտուրայում

Երկրում կային հարյուրից ավելի քաղաքներ: Արտադրության և առևտրի զարգացման շնորհիվ դրանք աճում էին, բարելավվում էր բնակչության վիճակը: Խոշոր քաղաքներ էին Լոնդոնը, Նյուքասլը, Լիվերպուլը և այլն: **Քաղաքը** դառնում էր **հասարակության տնտեսական և մշակութային կյանքի կենտրոն:**

Այսպես Անգլիայում սկսեցին ձևավորվել ապագա՝ արդյունաբերական հասարակության հիմքերը:

Բացատրի՛ր «Աշխարհագրական մեծ հայտնագործություններ» հասկացությունը:

Անգլիայի տնտեսության ո՞ր ճյուղերն էին առավել զարգացած:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

Դասանյութի տվյալների և լրացուցիչ նյութերի հիման վրա ապացուցի՛ր, որ Անգլիան միջնադարի ավարտին իրոք տնտեսապես զարգացած երկիր էր:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑ

Անգլիայում ինչո՞ւ էր աճել քաղաքների և դրանց բնակչության քանակը: Ներկայացրե՛ք դրա մի քանի պատճառներ և հետևանքներ:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Արտադրության կազմակերպման մեջ ի՞նչ կարևոր փոփոխություն տեղի ունեցավ: Փորձի՛ր պարզաբանել դրա առավելությունները և նշանակությունը:

§14 | ՖՐԱՆՍԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Թագավորական տիրույթ — անմիջականորեն թագավորին պատկանող տարածքը:

Գլխավոր շտատներ — դասային ներկայացուցչական ժողովը Ֆրանսիայում:

Հարյուրամյա պատերազմ — պատմության մեջ հայտնի պատերազմ, որը տեղի է ունեցել Ֆրանսիայի և Անգլիայի միջև 1337–1453 թթ.:

ԱՆՁ ԲԱՌԱՊԱՇԱՐ

Լյուդովիկոս IX — Ֆրանսիայի թագավոր, գահակալել է 1226–1270 թթ.:

Ֆիլիպ IV Գեղեցիկ — Ֆրանսիայի թագավոր. նրա օրոք՝ 1302 թ., ստեղծվել են Գլխավոր շտատները:

Ժաննա դ'Արկ — Ֆրանսիայի ազատագրական պայքարի նշանավոր հերոսուհի:

Լյուդովիկոս XI — Ֆրանսիայի թագավոր, գահակալել է 1461–1483 թթ.:

Բուրգունդիա — դքսություն Ֆրանսիայում:

Ֆրանսիան Վերդենի բաժանքից հետո

Ֆրանսիա պետությունն առաջացել է 843 թ. Վերդենի դաշնագրով տեղի ունեցած Կարոլինգյան տերության բաժանման հիման վրա:

Սկզբնական շրջանում Ֆրանսիայի թագավորներին պատկանող տիրույթը մեծ չէր: Այն ներառում էր միայն **Փարիզ** և **Օռլեան** քաղաքներն իրենց շրջակայքով:

XII դարի վերջերից Ֆրանսիայի թագավորները ձեռնամուխ եղան իրենց իշխանության ամրապնդմանը և երկրի միավորմանը: Այդ պայքարում Ֆրանսիայի թագավորները երկարատև հակամարտության մեջ մտան նաև Անգլիայի հետ:

Ֆիլիպ II Օգոստոսը կարողացավ գրավել Նորմանդիան: Նրա կառավարման օրոք թագավորական տիրույթն ընդարձակվեց մոտ չորս անգամ: Շուտով

Ֆրանսիայի թագավորները միավորեցին երկրի հարավային շրջանները: Սակայն Աքվիտանիան դեռևս մնում էր Անգլիայի կազմում:

Վերհիշե՛ք, թե Կարլոս Մեծի տերության որ տարածքների վրա էր ձևավորվել Ֆրանսիան:

Ի՞նչ տարածք էր սկզբնական շրջանում ընդգրկում թագավորական տիրույթը:

Ե՞րբ թագավորները ձեռնամուխ եղան իրենց իշխանության ամրապնդմանը և ինչո՞ւ:

Օրինակելի կառավարող արքան

Ֆրանսիայի թագավորական տիրույթի մեծացման հետ միաժամանակ թագավորները ամրապնդում էին նաև կառավարման համակարգը:

Լյուդովիկոս IX–ի օրոք թագավորական տիրույթում արգելվեցին ավատատերերի միջև տեղի ունեցող պատերազմները: **Մտցվեց «Արքայի 40 օր»** կոչվող **օրենքը:** Բախման մեջ հայտնված կողմերը քառասուն օրվա ընթացքում պետք է դիմեին թագավորին: Պատերազմել կարող էին միայն այն դեպքում, երբ թագավորի միջնորդությունից հետո անգամ չէին հաշտվում: Արգելվեց վեճերի լուծումը մենամարտերի միջոցով:

Ավանդության համաձայն՝ Լյուդովիկոս IX–ը ամեն օր դուրս էր գալիս պալատից, նստում կաղնու տակ և **արդարորեն դատում նրանց, ովքեր դիմել էին իրեն:**

Ժամանակակիցների համար Լյուդովիկոսի գահակալությունը օրինակելի կառավարման ժամանակաշրջան էր: Պատահական չէ, որ մահից քսան տարի անց նա եկեղեցու կողմից **դասվել է սրբերի շարքը:**

Ե՞րբ է կառավարել Լյուդովիկոս IX–ը:

Գլխավոր շտատները

Ֆրանսիայում դասային միապետությունը ձևավորվեց Հռոմի պապի հետ պայքարի արդյունքում: Ֆրանսիական եկեղեցու և պապական արքունիքի փոխհարաբերությունների խնդիրները քննարկելու համար **Ֆիլիպ IV Գեղեցիկ** արքան **1302 թ.** հրավիրեց

Լյուդովիկոս IX Սուրբ

Ֆրանսիայի թագավոր Կապետինգների արքայատոհմից: Կատարեց ռազմական, դրամական և դատական բարեփոխումներ:
Լյուդովիկոսը կազմակերպեց խաչակրաց 7–րդ և 8–րդ արշավանքները: 7–րդ արշավանքի ժամանակ նա գերվեց Եգիպտոսի սուլթանի կողմից և մեծ փրկագնի դիմաց ազատ արձակվեց: Նա աչքի էր ընկնում կրոնասիրությամբ, որի պատճառով ստացավ «Սուրբ» պատվանունը:
Լյուդովիկոսը մահացավ ժանտախտից Թունիսում՝ խաչակրաց 8–րդ արշավանքի ժամանակ:

Ֆիլիպ IV Գեղեցիկ

դասերի ներկայացուցիչների ժողով: Այն կոչվեց **Գլխավոր շտատներ**: Կազմված էր **երեք պալատներից**՝ հոգևորականության, ազնվականության և քաղաքների ներկայացուցիչների:

Ու՞մ օրոք և ե՞րբ է ստեղծվել դասային ներկայացուցչական ժողովը:

Ի՞նչ էր կոչվում Ֆրանսիայում ձևավորված դասային ներկայացուցչական ժողովը:

Հարյուրամյա պատերազմը

Անգլո–ֆրանսիական տարածքային հակամարտությունն առաջացել էր դեռևս XI դարում, երբ **Վիլհելմը գրավեց Անգլիան**: Անգլիան Ֆրանսիայում ավելի շատ տարածքներ ուներ, քան ֆրանսիական թագավորները:

Տարածքների համար հերթական վեճը **1337 թ.** վերածվեց պատերազմի: Այսպես սկսվեց **Հարյուրամյա պատերազմը:** Սկզբում առավելություն ունեին անգլիացիները: **1356 թ. Պուատիե քաղաքի** մոտ ֆրանսիացիները ծանր պարտություն կրեցին: Ֆրանսիայի թագավորը գերի ընկավ, իսկ երկրի ամբողջ հարավ–արևմուտքն անցավ Անգլիային:

Պատերազմը փոփոխական հաջողություններով շարունակվեց նաև հաջորդ դարում: Անգլիական բանակը **1415 թ.** նոր հարձակում սկսեց և հեշտությամբ **գրավեց Փարիզը:** Կնքված պայմանագրով **Ֆրանսիան կորցրեց իր անկախությունը:**

Ֆրանսիայի անկախության համար սկսվեց **ազատագրական պայքար**: Այն գլխավորեց **Ժաննա դ'Արկը:** Նա գյուղացու աղջիկ էր: Ժաննան հանդիպեց ֆրանսիական գահազրկված Կարլոս VII թագավորի հետ և համոզեց զորք տրամադրել՝ պաշարված Օռլեանը ազատագրելու համար: Ֆրանսիական բանակը **Ժաննայի գլխավորությամբ 1429 թ. ազատագրեց Օռլեանը:** Ֆրանսիայի անկախությունը վերականգնվեց:

Սակայն 1430 թ. Կոմպիենի մոտ Ժաննան գերի ընկավ: Անգլիացիները նրան հանձնեցին ինկվիզիցիայի դատարանին, որը Ժաննային մեղադրեց հերետիկոսության և կախարդության մեջ: **19–ամյա Ժաննային ողջակիզեցին** խարույկի վրա:



Հարյուրամյա պատերազմը

Ժաննա դ'Արկը Օռլեանի ազատագրման ժամանակ

Պատերազմը շարունակվեց նոր ուժով: Ֆրանսիացիները հասան հաջողության և վերանվաճեցին կորցրած տարածքները: **1453 թ. կնքված հաշտության պայմանագրով պատերազմն ավարտվեց**:

Ի՞նչ տարածքային վեճեր էին առաջացել Անգլիայի և Ֆրանսիայի միջև:
Ե՞րբ է սկսվել և ավարտվել Հարյուրամյա պատերազմը:
Ի՞նչ հետևանքներ ունեցավ Ֆրանսիայի պարտությունը XV դ. սկզբին:
Ո՞վ էր Ժաննա դ'Արկը: Ե՞րբ նա ազատագրեց Օռլեանը:

Լյուդովիկոս XI

Ֆրանսիայի միավորումը

Հարյուրամյա պատերազմում հաղթանակը բարենպաստ պայմաններ ստեղծեց Ֆրանսիայի քաղաքական միավորումն ավարտելու համար: Դա հաջողությամբ լուծեց **Լյուդովիկոս XI–ը:** Նրա գլխավոր հակառակորդն էր Բուրգունդիայի դուքս Կարլոս Խիզախը: Վերջինս փորձում էր ստեղծել Ֆրանսիայից անկախ Բուրգունդիա պետությունը: Սակայն բուրգունդցիները պարտություն կրեցին, և դքսությունը միացվեց Ֆրանսիային:

Միավորման ավարտից հետո Ֆրանսիան դարձավ Եվրոպայի խոշորագույն ազգային պետությունը:

Ֆրանսիական ազգային պետության կազմավորումը

Ֆրանսիայի թագավորի տիրույթը XII դ.
Խոշոր ավատատերերի տիրույթները
Անգլիական տիրույթները Ֆրանսիայում 1188 թ. դրությամբ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ դեր է խաղացել Ֆրանսիայի պատմության մեջ Անգլիայի հետ հակամարտությունը:

2. Ո՞ւմ օրոք ավարտվեց Ֆրանսիայի միավորումը: Ո՞վ էր նրա գլխավոր հակառակորդը:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Ձեր կարծիքով ինչո՞ւ ժաննա դ'Արկին այրեցին խարույկի վրա:

2. Գծապատկերի տեսքով ներկայացրո՛ւ Գլխավոր շտատների կառուցվածքը: Վերհիշի՛ր, թե էլ որ երկրներում կային նման պետական մարմիններ:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Պարզաբանի՛ր «Արքայի 40 օր» օրենքի բովանդակությունը: Փորձի՛ր գնահատել այդ օրենքի դերը ֆրանսիական հասարակության համար:

§15 | ԳԵՐՄԱՆԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Դուքս — Ցեղային առաջնորդ, հետագայում նաև մեծատոհմիկ ազնվական:

Ինդուլգենցիա — Կաթոլիկ եկեղեցու կողմից տրվող մեղքերի թողության վկայական, որը գնելով՝ մարդն իբրև թե ազատվում էր իր գործած մեղքերից:

Արևելյան Ֆրանկիա — Վերդենի բաժանքով Կարլոս Մեծի տերության արևելքում ստեղծված պետություն:

Ա/Ֆ ԲԱՌԱՊԱՇԱՐ

Սաքսոնիա — մարզ Գերմանիայում:

Լոթարինգիա — մարզ ներկայիս Գերմանիայի և Ֆրանսիայի սահմանամերձ շրջաններում:

Օտտոն I — Սրբազան հռոմեական կայսրության հիմնադիրը. գահակալել է 936–973 թթ.:

Կանոսսա — քաղաք Իտալիայի հյուսիսում:

Հենրիխ IV — Սրբազան Հռոմեական կայսրության կայսր 1084–1105 թթ.:

Հաբսբուրգներ — արքայատոհմ, որի ներկայացուցիչները գահակալել են տարբեր պետություններում, այդ թվում՝ Սրբազան հռոմեական կայսրությունում, Իսպանիայում, Ավստրիայում:

Քյոլն — հիմնադրվել է Ք. ա. I դարում. Գերմանիայի հայտնի քաղաք:

Ստրասբուրգ — քաղաք Սրբազան հռոմեական կայսրությունում. այժմ Ֆրանսիայի կազմում է:

Գերմանական թագավորության ստեղծումը

Կարլոս Մեծի կայսրությունը, ինչպես գիտեք, երկար կյանք չունեցավ: Վերդեն քաղաքում նրա թոռները 843 թ. եկել էին համաձայնության կայսրության բաժանման վերաբերյալ: Արդյունքում ստեղծվեցին երեք թագավորություններ՝ Արևմտյան Ֆրանկիա, Արևելյան Ֆրանկիա, «Միջին հողեր» (հետագայում՝ Լոթարինգիա):

Արևելյան Ֆրանկիայի հիմքի վրա ձևավորվեց Գերմանական թագավորությունը: Այն կազմված էր հինգ խոշոր շրջաններից, որոնց առաջնորդները՝ **դուքսերը**, փաստացի ինքնուրույն կառավարիչներ էին:

X դարի սկզբին թագավորությունը կանգնած էր փլուզման եզրին: Չնայած ազգային միասնություն դեռևս չկար, սակայն թարմ էին Հռոմեական կայսրության և Կարլոս Մեծի ստեղծած միասնական պետության հուշերը: Եկեղեցին հանդես էր գալիս կենտրոնացված իշխանության գաղափարով, քանի որ վերադարձը ցեղային տարանջատվածության կնպաստեր բազմաստվածության վերականգնմանը:

Հենրիխ I

Քանի՞ շրջաններից էր բաղկացած Արևելյան Ֆրանկիան: Ովքե՞ր էին կառավարում այնտեղ:

Ինչո՞ւ էր եկեղեցին շահագրգռված կենտրոնացված պետության ստեղծմամբ:

Սաքսոնիայի դուքս Հենրիխը 919 թ. ընտրվեց թագավոր: Նա թույլ չտվեց, որ Մայնցի եպիսկոպոսն իրեն օծի և թագադրի՝ դրանով արտահայտելով իր դժգոհությունը հոգևոր իշխանության հզորացման նկատմամբ: Նա գրավեց Բավարիան, Լոթարինգիան, հաղթեց հունգարներին, սկսեց ամրոցներ կառուցել:

Արևմտահռոմեական կայսրության թագը

Ինչո՞ւ Հենրիխը հրաժարվեց եպիսկոպոսի կողմից թագադրվելուց:

Ի՞նչ հաջողություններ ունեցավ Հենրիխը արտաքին քաղաքականության ասպարեզում:

Սրբազան հռոմեական կայսրությունը

Հենրիխի որդի **Օտտոն I–ը** հենվում էր մանր ազնվականության և եկեղեցու վրա: Ինքն էր նշանակում եպիսկոպոսներին: Նա վճռական պարտության մատնեց հունգարներին:

Օտտոնը փորձում էր Կառլոս Մեծի պես ստեղծել մեծ կայսրություն: Դրա համար անհրաժեշտ էր գրավել Իտալիան և իրեն ենթարկել Հռոմի պապին: Այդ նպատակով նա մտավ Իտալիա և թագադրվեց որպես

Օտտոն I

Իտալիայի թագավոր: Հռոմի պապը Օտտոնին **962 թ.** հանձնեց հռոմեական կայսրերի թագը: Դրանով սկիզբ դրվեց **Սրբազան հռոմեական կայսրությանը:** Հռոմի պապերը կախման մեջ ընկան գերմանական թագավորներից: Օտտոնը հաճախ միջամտում էր եկեղեցու գործերին և պապերի ընտրությանը:

Ո՞րն էր Օտտոն I–ի գլխավոր նպատակը, և ինչպե՞ս էր նա ցանկանում հասնել դրան:

Ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում ստեղծվեց Սրբազան հռոմեական կայսրությունը:

Օտտոնը ձգտում էր ստեղծելու կառավարման կուռ համակարգ: Դրա հիմքը դառնում է եկեղեցին: Վարչական ապարատը համալրվում է հոգևորականներով: Եկեղեցուն լայն արտոնություններ ու կալվածքներ շնորհելով՝ նա եկեղեցին վերցրեց իր իշխանության տակ: Եկեղեցի–պետություն այս դաշինքը ստացավ **կայսերական եկեղեցի** անվանումը:

Քո կարծիքով ինչո՞ւ Օտտոնը կառավարման համակարգ ստեղծելիս հենվեց եկեղեցու վրա:

Ի՞նչ է նշանակում «կայսերական եկեղեցի»:

Կանոսսա

Հռոմի պապը շուտով փորձում է իր ձեռքը վերցնել առաջնությունը և հակակշիռ ստեղծել աշխարհիկ իշխանության դեմ: XI–XII դդ. Սրբազան հռոմեական կայսրության կայսրերի և պապերի միջև սկսվում է հակամարտություն, որը սրվում է **Հենրիխ IV–ի** օրոք: Առանց պապի համաձայնության Հենրիխը պաշտոնանկ էր արել երեք եպիսկոպոսների և նորերի նշանակել: Պապը քննադատեց կայսրին: Հենրիխը պահանջեց պապից ազատել իր աթոռը: Ի պատասխան դրա՝ պապը բանադրեց Հենրիխին՝ նրա հպատակներին ազատելով հավատարմության երդումից:

Ինչո՞ւ սրվեցին Հռոմի պապի և Հենրիխ IV–ի հարաբերությունները: Որո՞նք էին դրա պատճառները:

Գերմանական դուքսերը որոշեցին, որ եթե բանադրանքը մեկ տարվա ընթացքում չհանվի, ապա այլևս չէին ճանաչելու Հենրիխի իշխանությունը: Կայսրը շտապեց հարթել հարաբերությունները եկեղեցու հետ: Նա, որպես քավություն, գնաց պապի մոտ, որն այդ ժամանակ Իտալիայի **Կանոսսա** քաղաքում էր: Կայսրը մի քանի օր միայն շապիկով և բոկոտն կանգնեց քաղաքի պարսպի տակ՝ հայցելով պապի ներողամտությունը: Հռոմի պապը հանեց բանադրանքը:



Հենրիխ IV–ը բոկոտն գնացել է պապի մոտ՝ ներողություն հայցելու, բանադրանքից ազատվելու համար: Ծաղրանկարում՝ Կանոսսայի պարսպի վրայից Մաթիլդա Տոսկանացին և Հռոմի պապ Գրիգորիոսը ծաղրում են Հենրիխ IV–ին:

Ինչպե՞ս որոշեց Հենրիխ IV–ը հարթել իր և պապի հարաբերությունները:

Քո կարծիքով ի՞նչ հետևանքների կհանգեցներ պապի բանադրանքը, եթե մնար ուժի մեջ:

Կանոսսայի դեպքը ցուցադրում է միջնադարյան Եվրոպայում հռոմեական եկեղեցու ձեռք բերած հսկայական ազդեցությունը աշխարհիկ իշխանության վրա:

Գերմանիան XIII–XVII դարերում

Մինչև XIII դարը Գերմանիան Եվրոպայի ամենաուժեղ պետությունն էր: Այստեղով էին անցնում Եվրոպայի բոլոր կարևոր առևտրական ուղիները: Դրա շնորհիվ **Հռենոս գետի** ափերին առաջացան խոշոր քաղաքներ **Քյոլնը, Ստրասբուրգը** և այլն: Զարգացում ապրեց արդյունաբերությունը: Շահագործվեցին արծաթի, պղնձի և երկաթի հանքերը:

Ինչո՞ւ էր Գերմանիան մինչև XIII դարը համարվում Եվրոպայի ամենաուժեղ պետությունը: Որո՞նք էին դրա նախադրյալները:



Բրեմեն քաղաքը
XVI դարի մանրանկար

Մաքսիմիլիանոս կայսրը
Բերնհարդ Շտրիգել, մոտ 1500 թ.

Գերմանիայում ձևավորվել էին մի քանի քաղաքային միություններ: Դրանցից կարևոր դեր ուներ **Հանզայի միությունը,** որի մեջ էին մտնում մինչև 80 քաղաքներ, այդ թվում՝ **Համբուրգը, Լյուբեկը, Բրեմենը**: Միությունը ակտիվ առևտուր էր կատարում Բալթիկ ծովում:

Թվարկի՛ր հայտնի քաղաքները:

Ինչո՞վ էին զբաղվում քաղաքային միությունները: Ո՞րն էր դրանցից նշանավորը:

Այս շրջանում Գերմանիայում տեղի ունեցան քաղաքական փոփոխություններ: Նախկին դքսությունների փոխարեն ձևավորվեցին տարածքային իշխանություններ: Իշխանները կայսր ընտրեցին **Ռուդոլֆ Հաբսբուրգին**: Վերջինս պատերազմ սկսեց Չեխիայի դեմ և զավթեց **Ավստրիայի դքսությունը:**

Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան Գերմանիայում:

Ի՞նչ նվաճում իրականացրեց Ռուդոլֆ Հաբսբուրգը:

Գերմանիայի քաղաքական միասնությունը փորձեց վերականգնել կայսր **Մաքսիմիլիանոսը** (1491–1519 թթ.): Նա ընդունեց «կայսերական բարեփոխումների ծրագիրը»: Վճռվեց ձևավորել կայսերական բանակ, հատել միասնական դրամ և ընդունել համապետական օրենքներ: Սակայն այդ ամենը չիրականացավ, և Գերմանիան նոր ժամանակներ մտավ որպես մասնատված երկիր:

Ո՞րն էր կայսր Մաքսիմիլիանոսի բարեփոխումների նպատակը:

Ի՞նչ ճանապարհով էր փորձում նա հասնել իր նպատակին:

Լյութերն այրում է պապական կոնդակը:

Ռեֆորմացիա

Միջնադարում հավատացյալի համար կարևոր էր գործած մեղքերից փրկվելու խնդիրը: Հոգևորականները քարոզում էին, թե առանց եկեղեցու օգնության հնարավոր չէ փրկություն գտնել: Եկեղեցին պապի անունից հավատացյալներին **ինդուլգենցիաներ** էր

վաճառում: Այն գնողը ազատվում էր բոլոր մեղքերից: Դրա դեմ սկսեց պայքարել **Մարտին Լյութերը,** ով հրապարակայնորեն այրեց պապի կոնդակը մեղքերի քավության մասին: Նա **1517 թ. հոկտեմբերի 31**–ին Գերմանիայի Վիտենբերգ քաղաքի տաճարի դռանը մի թուղթ փակցրեց: Այն պարունակում էր 95 դրույթ: Ըստ Լյութերի՝ մարդը կարող է փրկվել միայն իր հավատով, այլ ոչ թե ինդուլգենցիաներ գնելով:

Բարեփոխումների արդյունքում կաթոլիկ եկեղեցուն զուգահեռ առաջանում էին բողոքական նոր եկեղեցիներ: Ահա թե ինչու XVI դարը ստացավ **Ռեֆորմացիայի (վերափոխում)** դարաշրջան անվանումը:

Ի՞նչ նպատակ էր հետապնդում եկեղեցին ինդուլգենցիաների վաճառքով:

Ե՞րբ և ո՞վ հանդես եկավ դրանց վաճառքի դեմ: Քո կարծիքով ինչո՞ւ:

Վիտենբերգի տաճարի դարպասները, որտեղ փորագրված են Լյութերի 95 դրույթները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Ընթերցելով Մարտին Լյութերի մասին վերոհիշյալ տեքստը՝ փորձի՛ր վերլուծել նրա մոտեցումը մարդու փրկության մասին:*
2. *Փորձիր բացատրել՝ կայսերական բանակի, միասնական դրամի և համապետական օրենքների ստեղծումը ինչպես կարող էր նպաստել պետության ամրապնդմանը:*
3. *Ի՞նչ եկեղեցիներ առաջացան XVI դարում Եվրոպայում. ի՞նչ է ռեֆորմացիան:*

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. *Մտածի՛ր, թե ինչի կհասցներ եկեղեցու ազդեցության անկումը կամ աշխարհիկ իշխանության թուլացումը:*
2. *Դրանից ո՞վ կշահեր, իսկ ո՞վ կտուժեր:*

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. *Փորձի՛ր գնահատել միջնադարում պետություն–եկեղեցի հարաբերությունների նշանակությունը տվյալ հասարակության և ժողովրդի շահերի տեսանկյունից:*
2. *Նույն տեսանկյունից գնահատի՛ր հայոց պետություն–եկեղեցի հարաբերությունները մեր ժամանակներում:*

§16 | «ՄԻՆՉԿՈԼՈՒՄԲՈՍՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ» ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

«Մինչկոլումբոսյան Ամերիկա» — Ամերիկա աշխարհամասի պատմության մինչև 1492 թ. ընկած ժամանակաշրջանը. այդ թվականից սկսած՝ Քրիստափոր Կոլումբոսը և հաջորդ ծովագնացները հայտնագործեցին Ամերիկան:

Հնդկացի — Կոլումբոսը համոզված էր, որ ինքը ծովային նոր ուղիով հասել է Հնդկաստան. ահա թե ինչու նա տեղաբնիկներին անվանեց հնդկացիներ:

Մայաներ, ացտեկներ, ինկաներ — «Մինչկոլումբոսյան Ամերիկայի» տեղաբնիկներից առավել զարգացած էին երեք ժողովուրդներ՝ մայաները, ացտեկները և ինկաները:

Դասական ժամանակաշրջան — մայաների պատմության 250–900 թվականներն ընդգրկող շրջանի անվանումը. այդ ժամանակ նրանք հասան իրենց զարգացման գագաթնակետին:

Քուրմ–թագավոր — մայաների թագավորը միաժամանակ նաև երկրի հոգևոր առաջնորդն էր:

1492 թ. հոկտեմբերի 12–ին Կոլումբոսը ափ իջավ Ամերիկայում: Նորահայտ երկիրը նա հայտարարեց Իսպանիայի արքայի սեփականությունը:

Աստիճանակարգություն — հասարակության տարբեր խավերի բրգաձև դասակարգում:

Շոկոլադ — կակաո ծառի սերմերից պատրաստված սննդամթերք:

Կոնկիստադոր — իսպաներեն նշանակում է նվաճող. այդ անունով են հայտնի Ամերիկան նվաճած և գաղութի վերածած իսպանացիները:

Ա/Ֆ

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Տենոչտիտլան — ացտեկների պետության մայրաքաղաքը (ներկայիս Մեքսիկայի մայրաքաղաք Մեխիկոն):

Մոնթեսումա — ացտեկների վերջին թագավորը, գահակալել է 1502–1520 թթ.:

Քրիստափոր Կոլումբոս — իսպանացի ծովագնաց, ով հայտնագործել է Ամերիկան:

Էռնան Կորտես — իսպանացի կոնկիստադոր, ով նվաճել է ացտեկների երկիրը:

Կուսկո — ինկաների կայսրության մայրաքաղաքը:

Քարտեզի վրա գտի՛ր մայաների, ացտեկների և ինկաների բնակության տարածքները, բնակավայրերը:

Ժամանակակից ո՞ր պետությունների տարածքում են նրանք բնակվել կամ բնակվում են այսօր:

Մայաների քաղաքակրթությունը

Մայաներն ապրում էին Յուկատան թերակղզում (Մեքսիկայի հարավում) և հարակից տարածքներում: Առաջին հազարամյակում այստեղ կային հարյուրավոր քաղաք–պետություններ: Դրանց մեծ մասը զարգացման բարձրակետին հասավ այսպես կոչված **դասական ժամանակաշրջանում**՝ 250–900 թվականներ:

Հայտնի քաղաքներից էին **Չիչեն–Իցան, Տիկալը, Կոպանը**: Կառուցում էին քարակերտ բուրգեր, տաճարներ և այլ շինություններ: Քաղաքները միմյանց էին կապված ժամանակի համար բարձրակարգ համարվող մայրուղիներով:

Քաղաք–պետությունը կառավարում էր **քուրմ–թագավորը**: Այդ պետություններն էլ միասին ներկայացնում էին մայաների քաղաքակրթությունը:

Մայաների բուրգ

Ի՞նչ շինություն է: Ե՞րբ և ինչպե՞ս է այն կառուցվել:

Պատմությունից ձեզ հայտնի ի՞նչ շինությունների հետ կարող եք համեմատել:

Ջբոսաշրջային ի՞նչ նշանակություն ունի այդ պատմական հուշարձանը:

Մայաների հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր: Մշակում էին լոլիկ, դդում, եգիպտացորեն, բամբակ, ծխախոտ և այլն: Պահում էին հնդկահավ և շուն: Նրանց հնագույն զբաղմունքներից էին նաև ձկնորսությունը և որսորդությունը:

Մայաների մոտ կար հստակ ձևավորված **աստիճանակարգություն:** Բուրգի վերևում քուրմ–թագավորն էր: Հաջորդ աստիճանը զբաղեցնում էին զորահրամանատարները, քրմերը և նվաճված տարածքների կառավարիչները: Երրորդ աստիճանը զբաղեցնում էին զինվորները: Ապա գալիս էին առևտրականները, գյուղացիները, արհեստավորները. նրանք հարկեր էին վճարում, բայց համարվում էին ազատ: Ստորին աստիճանը զբաղեցնում էին կախյալ մարդիկ և ստրուկները:

Գծապատկերի միջոցով ներկայացրո՛ւ մայաների աստիճանակարգությունը:

Մայաները ստեղծել էին բարձր զարգացած մշակույթ: Հաջողությունների էին հասել մաթեմատիկայի,

Մինչկոլումբոսյան Ամերիկան

աստղագիտության, տոմարի և արվեստի բնագավառներում: Նրանք ամերիկյան մայրցամաքի **միակ ժողովուրդն** էին, որ օգտագործում էին **հիերոգլիֆային գիրը:**

Ստեղծել էին **երկու օրացույց**. առաջինն ուներ 365 օր, երկրորդը՝ 260: Երկրորդը նախատեսված էր կրոնական արարողությունների և տոների համար: Նրանց պաշտամունքում ընդունված էր աստվածներին մարդկային զոհեր մատուցելը:

X դ. ընթացքում մայաների քաղաքների մեծ մասը կործանվեց հարևան ցեղերի հարձակումների, երկարատև երաշտի ու սովի պատճառով: Իսպանացի **կոնկիստադորների** հայտնվելու ժամանակ մայաների երկիրը մասնատված և թուլացած վիճակում էր: Կոնկիս-

տադորները առանց դժվարության գրավեցին մայանե–
րի քաղաք–պետությունները:

Որտե՞ղ էին ձևավորվել մայաների քաղաք–պետությունները:
Թվարկի՛ր և քարտեզի վրա ցո՛ւց տուր մայաների հայտնի քաղաքները:

Ացտեկների կայսրությունը

Մինչկոլումբոսյան Ամերիկայի պատմությունից հայտնի է նաև ացտեկների քաղաքակրթությունը: Ացտեկներն **ապրում էին ժամանակակից** Մեքսիկայի կենտրոնական և արևմտյան շրջաններում: Մայաների նման նրանք ևս ստեղծել էին քաղաք–պետություններ:

Ացտեկները նստակյաց ժողովուրդ էին: Հիմնական զբաղմունքը նույնպես **երկրագործությունն** էր: Ոռոգման համակարգի և ճահիճների չորացման շնորհիվ նրանք ընդարձակ հողատարածքներ էին մշակում: Աճեցնում էին դդում, բամբակ, ծխախոտ, եգիպտացորեն և այլն: Զարգացած էին արհեստի որոշ ճյուղեր՝ ոսկերչություն, արծաթագործություն և ջուլհակություն:

1428 թ. ացտեկների խոշոր քաղաք–պետություն–ները՝ **Տենոչտիտլանը, Տլակոպանը** և **Տեսկոկոն**, միավորվեցին և ստեղծեցին միասնական պետու–թյուն: Մայրաքաղաքն էր Տենոչտիտլանը: Շուտով պետության տարածքն ընդարձակվեց արտաքին նվաճումների շնորհիվ և դարձավ կայսրություն: Այն

Ացտեկների մայրաքաղաք Տենոչտիտլանը Մեխիկոյի հովտում

իր հզորության գագաթնակետին հասավ **Մոնթեսումա** թագավորի կառավարման ժամանակ:

Ացտեկները նույնպես ստեղծել էին բարձր զարգացած քաղաքակրթություն: Կառուցում էին շքեղ պալատներ, տաճարներ, հասարակական շինություններ: Կայսրության տարածքը պատվեց ճանապարհների ցանցով, ինչը հնարավորություն էր տալիս առևտուր իրականացնել հազարավոր կիլոմետր իրարից հեռու գտնվող քաղաքների միջև:

Գոյություն ուներ ձևավորված **աստիճանակարգություն**, որի վերին մասում թագավորն էր:

Երկիրը պաշտպանելու, նվաճված և ժողովուրդներին հպատակ վիճակում պահելու համար ացտեկները ստեղծել էին կանոնավոր բանակ: Դպրոցներում սովորեցնում էին մարտարվեստ, պատրաստում էին ուժեղ զինվորներ: Նրանք հավատում էին, որ **պատերազմի ժամանակ զոհված զինվորները հայտնվում էին երկնքում և ապրում աստվածների հետ**:

Ացտեկները մայաների օրացույցները հարմարեցրել էին իրենց ծեսերին և ավանդույթներին: Նրանց կյանքում մեծ դեր ուներ կրոնը: Ընդունված էր աստվածներին մարդկային զոհեր մատուցելը, հատկապես արևի աստծուն:

1519 թ. իսպանացիները **Էռնան Կորտեսի** գլխավորությամբ մտան ացտեկների երկիրը և ընդամենը երկու տարում գրավեցին այն:



Մոնթեսումա

Էռնան Կորտեսի մուտքը Մեքսիկա

Այսպես դադարեց գոյություն ունենալուց ացտեկների ինքնատիպ քաղաքակրթությունը:

Ացտեկների պետությունը ե՞րբ է ստեղծվել և ո՞ր տարածքում:
Քարտեզի վրա ցո՛ւյց տուր ացտեկների հայտնի քաղաքները:
Վերհանե՛ք բանակի դերը ացտեկների պետության համար:
Ո՞ւմ գլխավորությամբ են իսպանացիները գրավել Մեքսիկան:

Ինկաների կայսրությունը

Ինկաների թանգարանը Պերուում

Հարավային Ամերիկայում՝ ժամանակակից Կոլումբիայից մինչև Չիլի ձգվող տարածքում, ձևավորվել էր **ինկաների քաղաքակրթությունը:** Ինկաների ցեղը ապրում էր նշված տարածքի առափնյա գոտում: Երկրի հիմնական մասն ընկած էր Անդյան լեռնաշղթայում:

Ինկաները նվաճեցին հսկայական տարածքներ և հպատակեցրին բազմաթիվ ցեղերի: Պետության կառավարչին սկսեցին կոչել **ինկա** կամ **Սապա ինկա՝** արևի որդի: Երկիրը ստացավ **Ինկաների կայսրություն** անվանումը: Մայրաքաղաքն էր **Կուսկոն:**

Հսկայական տերության տարբեր մասերի միջև հաղորդակցություն ապահովելու համար ստեղծեցին ճանապարհների ցանց: Դրանք կառուցվել են բարդ տեղանքում և հիացնում են իրենց ճարտարապետական լուծումներով: Ինկաները ևս կառուցել են մեծ պալատներ, տաճարներ: Նրանք ստեղծել են հզոր ամրոցներ, որոնց շարվածքում տեղադրված են մի քանի տասնյակ տոննա զանգվածով սրբատաշ քարեր:

Մաչու Պիկչու

Որտե՞ղ է Մաչու Պիկչուն: Ե՞րբ և ինչպե՞ս է այն կառուցվել: Ջբոսաշրջային ի՞նչ նշանակություն ունի այն:

Ինկաները նույնպես ունեին բարձր զարգացած երկրագործություն և արհեստներ: Նրանցից է աշխարհում տարածվել **կարտոֆիլի** մշակումը:

Տերության կյանքում և մարդկանց աշխարհայացքում մեծ դեր ուներ կրոնը: Նրանց դիցարանը գլխավորում էր արևի աստվածը: Սապա ինկային համարում էին նրա սերունդ, այդ պատճառով կայսրին նույնպես պաշտում էին իբրև աստծո:

Երկրի **բնակչությունը բաժանված էր կաստաների**: Բարձրագույն կաստան կազմում էին ինկաները: Նրանք զբաղվում էին միայն երկրի կառավարմամբ և ռազմական գործով, հարկեր չէին վճարում:

Կոնկիստադորները **1532 թ.** մտան ինկաների կայսրության տարածք: 40 տարի անց «Մինչկոլումբոսյան Ամերիկայի» վերջին քաղաքակրթությունը դադարեց գոյություն ունենալուց:

Հարավային Ամերիկայի ո՞ր տարածքներն էր ընդգրկում ինկաների պետությունը:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ինքնուրույն հետազոտե՛ք և ներկայացրե՛ք հետաքրքիր տեղեկություններ մայաների, ացտեկների կամ ինկաների մասին: Ժամանակակից ո՞ր ժողովուրդները և պետություններն են նրանց ժառանգները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Համեմատե՛ք մայաների, ացտեկների և ինկաների քաղաքակրթությունները Արևմտյան Եվրոպայի քաղաքակրթությունների հետ: Վերհանե՛ք նրանց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի մի քանի նմանություններ և առանձնահատկություններ:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Փորձի՛ր գնահատել մայաների, ացտեկների և ինկաների ներդրումը համաշխարհային պատմության մեջ:

§17 | ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Խալիֆա — Արաբական խալիֆայության հոգևոր և աշխարհիկ առաջնորդ:
Խարաջ — Հողահարկի անվանումը արաբների տիրապետության շրջանում:
Ջիզյա — Գլխահարկ, որը գանձում էին արաբները ոչ մուսուլման հպատակներից:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Մեքքա — քաղաք Արաբական թերակղզում, բոլոր մուսուլմանների գլխավոր սրբավայրը:
Ալլահ — այդպես են արաբները անվանել իրենց գլխավոր աստծուն հեթանոսական շրջանում. իսլամ ընդունելուց հետո այդպես է կոչվել միակ աստվածը:
Մուհամմադ — իսլամի հիմնադիրը, Ալլահի մարգարեն:
Կուրայշ ցեղ — արաբական ցեղ, որից ծագում էր Մուհամմադը:
Աբու Բաքր — Մուհամմադ մարգարեի անները և աջակիցը:
Մուավիա — Արաբական խալիֆա (661–680), Օմայյան արքայատոհմի հիմնադիրը:
Իբն ալ–Ասիր — Նշանավոր արաբ պատմիչ:

Արաբները

Արաբներն ապրում էին Արաբական թերակղզում, որի մեծ մասն ընկած է անապատային գոտում: Այստեղ չկան գետեր և լճեր: Արաբները ստիպված էին վարել կիսաքոչվոր կացութաձև՝ տանելի կենսապայմաններ գտնելու համար: Այս երկրամասի բնակիչները կոչվում էին **բեդուիններ**:

Արաբներն ապրում էին ցեղերով, որոնք գլխավորում էին ընտրովի առաջնորդները՝ **շեյխերը:** Արաբներն աստիճանաբար ներգրավվեցին միջազգային քարավանային առևտրում: Այդ ճանապարհին սկսեցին հայտնվել քաղաքներ՝ **Մեքքան, Յասրիբը** և այլն:

Որտե՞ղ էին ապրում արաբները և ի՞նչ կենցաղ էին նրանք վարում: Ինչի՞ շնորհիվ արաբների մոտ հայտնվեցին քաղաքները:

Մուհամմադը և իսլամի ծագումը

Իսլամի մարգարե **Մուհամմադը** (570–632 թթ.) սերում էր **կուրայշ ցեղից**: Նա ամուսնացել էր հարուստ այրի **Խադիջայի** հետ: Քարավանային առևտրով զբաղվելու շնորհիվ ճանապարհորդում է, ծանոթանում տարբեր կրոնական ուսմունքների հետ: Մեքքայում Մուհամմադը լեռան քարանձավում մեկուսացման ժամանակ հայտնություն է ստանում **Ջիբրիլ (Գաբրիել) հրեշտակի** միջոցով:

Մուհամմադը և նրա աշակերտները

Մարգարե Մուհամմադը ո՞ր ցեղից էր սերում և ինչո՞վ էր զբաղվում առօրյա կյանքում:

Որտե՞ղ և ումի՞ց նա հայտնություն ստացավ նոր կրոնի մասին:

Նոր կրոնի հիմքում ընկած էր միաստվածության գաղափարը: Հանդես գալով որպես Ալլահի մարգարե՝ Մուհամմադը կոչ էր անում հրաժարվելու հեթանոսությունից և ընդունելու միակ աստծո՝ Ալլահի գոյությունը, խորհելու հանդերձյալ կյանքի մասին, ապրել արդարակյաց կյանքով:

Մուհամմադը սկսում է իսլամի քարոզը Մեքքայում և հանդիպում բնակչության դժգոհությանը: Նրա հետևորդներին անվանում էին **մուսլիմուն**՝ «հնազանդվածներ (Ալլահի կամքին)»: Քարոզների ընթացքում լարվեցին մեքքացիների և Մուհամմադի հարաբերությունները: Եվ նա ստիպված էր **622 թ.** իր համախոհների հետ հեռանալ **Յասրիբ,** որը հետագայում հայտնի դարձավ «մարգարեի քաղաք» անվամբ: Այս իրադարձությունը պատմության մեջ է մտել որպես **հիջրա**՝ գաղթ, իսկ գաղթողները կոչվեցին **մուհաջիրներ**: Հիջրայով է սկսվում իսլամական ժամանակագրությունը՝ 622 թվականից:

Իսլամում առաջացավ երկու ուղղություն: Շիաների կարծիքով միայն Մուհամեդի տոհմի անդամները խալիֆա դառնալու իրավունք ունեն: Բացի այդ՝ խալիֆան պետք է լինի հոգևոր, այլ ոչ թե քաղաքական առաջնորդ:
Մյուս ուղղությունը ներկայացնում են սուննիները: Նրանց կարծիքով միայն իրենք են Մուհամեդի ուսմունքի և ավանդույթների հետևորդները: Սուննիները այժմ կազմում են մուսուլմանների 80 տոկոսը: Շիաները Իրանում կազմում են բնակչության ճնշող մեծամասնությունը:

Ի՞նչ էր Մուհամմադը կոչ անում իր ցեղակիցներին:

Ինչպե՞ս էին անվանում Մուհամմադի հետևորդներին: Ո՞ւր գնաց Մեքքայից Մուհամմադը:

Ինչպե՞ս են կոչում Մուհամմադի և նրա համախոհների գաղթը և գաղթողներին:

Արաբական խալիֆայության կազմավորումը

Յասրիբում Մուհամմադը քարոզչից վերածվեց քաղաքական գործչի և սկսեց կազմակերպել իր համայնքի կյանքը: 630 թ. նա իր աջակիցների հետ հաղթական մուտք գործեց Մեքքա: Հակառակորդները ստիպված էին ներկայանալ Մուհամմադին և իսլամ ընդունել:

Ինչո՞վ ավարտվեց Մուհամմադի և մեքքացիների հակամարտությունը:

Մուհամմադը մահացավ 632 թ.: Մահվանից առաջ նա իր աջակից և աներ **Աբու Բաքրի** վրա դրեց աղոթքի առաջնորդման՝ **իմամի** պարտականությունները: Վերջինս ընտրվեց տեղապահ՝ **խալիֆա**, ով հանդիսանում էր պետության և՛ հոգևոր, և՛ քաղաքական գերագույն ղեկավարը: Աբու Բաքրը միավորեց արաբական ցեղերը և սկսեց նվաճել Սասանյան Իրանի և Բյուզանդիայի իշխանության տակ գտնվող արաբական շրջանները:

Ի՞նչ պարտականություններ ուներ իմամը:
Ո՞վ էր խալիֆան, և ի՞նչ դեր ուներ նա պետության կյանքում:
Ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն էին վարում Աբու Բաքրը:

Արաբները **Յարմուկ գետի** ափին **636 թ.** հաղթեցին բյուզանդացիներին: Հետո պարտության մատնեցին Սասանյան Իրանին: Արաբները տիրեցին Սիրիային, Պաղեստինին, Միջագետքին, Եգիպտոսին և Իրանին:

Ի՞նչ նվաճումներ իրականացրին արաբները VII դարում:

Նվաճումներին զուգահեռ փոփոխություններ տեղի ունեցան ներքին կյանքում: Աստիճանաբար ձևավորվում էին պետական ինստիտուտները: Կանոնակարգվեց հարկային համակարգը ի դեմս հողահարկի՝ **խարաջի**: Ոչ մուսուլման հպատակ ժողովուրդներից գանձվում էր գլխահարկ՝ **ջիզյա**:

Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան խալիֆայության ներքին կյանքում: Ինչպե՞ս կանոնակարգվեց պետության քաղաքական և տնտեսական կյանքը:

Տեղի ունեցած գահակալական պայքարի արդյունքում հաղթեց **Մուավիան**, որը հիմնեց **Օմայյան արքայատոհմը:** Նա հռչակեց խալիֆայի պաշտոնի ժառանգականությունը: Նրա հաջորդները շարունակեցին նվաճումները: Արաբերենը դարձավ տերության պաշտոնական լեզու, հիմք դրվեց դրամահատությանը:

Արդյո՞ք խալիֆայի պաշտոնի ժառանգականության հաստատումը կարող էր նպաստել պետության ամրապնդմանը:

Աբբասյանների խալիֆայությունը

750 թ. տեղի ունեցած ապստամբության հետևանքով իշխանության եկավ **Աբուլ Աբբասը,** ով հիմք դրեց **Աբբասյան խալիֆայությանը:** 762 թ. հիմնվեց նոր մայրաքաղաք, որը հետագայում կոչվեց **Բաղդադ**: Տերությունը նոր վերելք սկսեց ապրել:

Խալիֆայությունում քաղաքական կայունությունը նպաստեց մշակույթի ծաղկմանը: Բաղդադում հիմնվեց բարձրագույն դպրոց՝ **Իմաստության տուն**: Այստեղ կատարում էին թարգմանություններ, ուսումնասիրում աշխարհիկ գիտություններ: Դպրոցին կից գործում էր աստղադիտարան: Մեծ զարգացում ապրեց մաթեմատիկան: Արաբները կատարելագործեցին հնդկական թվային համակարգը և սկսեցին օգտագործել «0» (զրո) նշանը: Աստղաբաշխները կազմեցին Արեգակնային համակարգի քարտեզը: Զարգանում էին նաև պատմագրությունը և աշխարհագրությունը: Նշանավոր պատմաբան **Իբն ալ–Ասիրը** գրեց «Լիակատար պատմություն» երկը:

Աբդ ալ–Մալիք խալիֆայի ոսկեդրամը՝ դինար

(Բրիտանական թանգարան, Լոնդոն)

Ե՞րբ հիմնվեց Աբբասյան խալիֆայությունը:
Ի՞նչն էր նպաստում մշակույթի զարգացմանը:

Խալիֆայությունը IX դարի կեսերից սկսում է թուլանալ և բռնում է անկման ճանապարհը: Թյուրք–սելջուկները **1055 թ.** գրավեցին Բաղդադը: Աբբասյան խալիֆաները լիովին կորցրին աշխարհիկ իշխանությունը: Թուլացած խալիֆայությունը **1258 թ.** գրավվեց մոնղոլների կողմից:

Այսպես պատմության թատերաբեմից անհետացավ Արաբական խալիֆայությունը:



Կորդովայի գլխավոր մզկիթի ներքին տեսքը

Կորդովա, Իսպանիա

Արաբական խալիֆայությունը

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Քո կարծիքով որո՞նք էին արաբների նվաճումների հաջողության պատճառները:*
2. *Ե՞րբ են թյուրք–սելջուկները գրավել Բաղդադը:*
3. *Ի՞նչ հաջողությունների հասավ արաբական մշակույթը Աբբասյան խալիֆայության շրջանում:*
4. *Ե՞րբ Աբբասյան խալիֆայությունը դադարեց գոյություն ունենալուց:*

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Վերհիշի՛ր Հայոց պատմությունից հայ–արաբական հարաբերությունների ընթացքը: Քո կարծիքով ինչո՞ւ էին հայերը բազմիցս ապստամբել արաբների դեմ: Ինչո՞վ ավարտվեց այդ հակամարտությունը:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Օգտվելով դասանյութից և համացանցի նյութերից՝ փորձի՛ր գնահատել արաբական մշակույթի ձեռքբերումները:

§18 | ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Թենգրիականություն — Մոնղոլ–թաթարների հավատալիքների կենտրոնում ընկած աստվածացված երկնքի՝ Թենգրիի պաշտամունքը:

Ղուռուլթայ — մոնղոլական ցեղային ավագանու ժողով:

Խաքան — մոնղոլական կայսրության գերագույն առաջնորդի՝ գահակալի տիտղոսը:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Ալթայի լեռներ — լեռնաշղթա Սիբիրում, որի շրջակայքում ապրում էին մոնղոլական ցեղերը:

Բորջիգին — մոնղոլական ցեղ:

Չինգիս խան — մոնղոլական խան Թեմուջինը. այս պատվանունը նրան տրվեց մոնղոլների խաքան ընտրվելուց հետո, կառավարել է 1206–1227 թթ.:

Մոնղոլները

Մինչև XIII դ. սկիզբը Ալթայի լեռների շրջանում ապրում էին ընդհանրական մոնղոլ–թաթարներ կոչվող ցեղեր: Նրանք վարում էին քոչվորական կյանք: Խաշնարածությունը ստիպում էր մոնղոլներին մշտապես տեղից տեղ քոչել՝ ձիերի երամակների և ոչխարների հոտերի համար արոտավայրեր գտնելու համար:

Մոնղոլները վաղ հասակից ձիավարության և նետաձգության էին վարժեցվում: Թամբին մեծացած աղեղնավոր մոնղոլները ռազմի դաշտում դառնում էին հարվածային հուժկու ուժ: Մոնղոլական ցեղերը գլխավորում էին **խաները:**

Մոնղոլական ցեղերի կենցաղի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում XIII դարում Մոնղոլական կայսրություն այցելած վենետիկցի ճանապարհորդ և վաճառական Մարկո Պոլոն. «Մոնղոլ–թաթարները սնվում են զամբիկի մսով, կաթով, որսամսով, գետից որսած ձկներով: Նրանք ուտում են ձիու և շան միս, խմում զամբիկի կաթ»:

Փորձի՛ր քարտեզի վրա գտնել Մոնղոլիան:

Ինչպե՞ս էին մոնղոլները վարժվում ռազմական գործին:

Մոնղոլների մոտ տարածված էին տարբեր կրոններ և հավատալիքներ՝ **թենգրիականություն, շամանիզմ, քրիստոնեություն, բուդդայականություն** և այլն:

Մոնղոլական պետության ծնունդը և վերելքը

Չինգիս խան

XIII դ. սկզբին **բորջիգին** ցեղի խան **Թեմուջինը** միավորեց մոնղոլական ցեղերը: 1206 թ. **ղուռուլթայում** նա ընտրվեց մոնղոլների **խաքան** (մեծ խան) և ստացավ **Չինգիս խան** պատվանունը:

Շուտով սկսվեցին մոնղոլների արշավանքները: Մոնղոլական բանակը հիմնականում կազմված էր աղեղնաձիգ հեծելազորից, արագաշարժ էր և ուներ բարձր կարգապահություն: Ապրելով Չինաստանի հարևանությամբ՝ մոնղոլները չինացիներից յուրացրել էին ռազմական տեխնիկայի նվաճումները: Նրանք ունեին ժամանակակից պաշարողական մեքենաներ, իսկ Ճապոնիան նվաճելու համար նույնիսկ նավատորմ ստեղծեցին: Բանակում ներգրավված էին չինացի, թյուրք և այլ ժողովուրդներից հավաքված ռազմական մասնագետներ:

Մոնղոլական ո՞ր ցեղի ներկայացուցիչն էր Թեմուջինը:

Թեմուջինը ե՞րբ և որտե՞ղ ընտրվեց մոնղոլների մեծ խան: Ի՞նչ պատվանուն նա ստացավ:

Ո՞րոնք էին մոնղոլական նվաճումների հաջողության պատճառները:

Չինգիս խանը և նրա որդիները սկսեցին նվաճել նորանոր երկրներ արևելքում և արևմուտքում: **1215 թ.** գրավեցին Պեկինը, իսկ հետագա կես դարի ընթացքում՝ գրեթե ողջ Չինաստանը:

1227–1241 թթ. Չինգիսի որդիները շարունակեցին նվաճումները արդեն Եվրոպայում: Նրանք ամայացրին Ռուսիան, ասպատակեցին Լեհաստանի հարավն ու Հունգարիայի զգալի մասը: Առաջավոր Ասիայումում մոնղոլների իշխանության ներքո էին Վրաստանը, Աղվանքը, Հայաստանը, Իրանը և Փոքր Ասիայի զգալի մասը:

Մինչև ո՞ւր հասան մոնղոլական բանակները արևմուտքում: Ի՞նչ երկրներ նվաճեցին նրանք

Մոնղոլների **Հուլաղու խանը** վերջնագիր ուղարկեց Աբբասյան խալիֆային՝ պահանջելով հնազանդվել: Խալիֆան մերժեց այն: **1258 թ.** մոնղոլական զորքը հայկական, վրաց և խաչակրաց բանակների աջակցությամբ գրավեց Բաղդադը: Քաղաքի բնակչության զգալի մասը կոտորվեց: Խալիֆան և արքայատոհմի 300 անդամներ մահապատժի ենթարկվեցին: Աբբասյան խալիֆայությունը կործանվեց:

Մոնղոլ զինվոր

Ո՞վ և ինչպե՞ս նվաճեց Աբբասյան խալիֆայությունը: Ինչպե՞ս վարվեցին մոնղոլները խալիֆայի և նրա մերձավորների հետ:

Մոնղոլական արշավանքների արդյունքում ստեղծվեց **պատմության մեջ տարածքով ամենամեծ կայսրությունը,** որի սահմանները ձգվում էին Չինաստանից մինչև Եվրոպա:

Ինչպիսի՞ տարածք էր ընդգրկում մոնղոլական տերությունը իր հզորության շրջանում:

Մոնղոլական տերության տրոհումը

Մոնղոլական հսկայածավալ տերությունը, սակայն, աստիճանաբար տրոհվեց: Չինգիսի հետնորդները այն բաժանեցին իրար միջև որպես առանձին պետություններ, որոնք միայն ձևականորեն էին կախված մեծ խանից: Դրանք ստացան **ուլուս** անվանումը:

Մոնղոլները արագորեն հարմարվեցին նոր միջավայրին և փոխառեցին պետական կառավարման տեղական ավանդույթները՝ իրանական, չինական և այլն: Նրանք մեծ տեղ էին հատկացնում նաև այլազգիներին կառավարման համակարգում ներառելու և նրանց գիտելիքներն ու փորձը օգտագործելուն: Մոնղոլական պետությունների արքունիքներում և կառավարման համակարգում կային մեծ թվով պարսիկներ, չինացիներ, հայեր, հրեաներ, ասորիներ և ուրիշներ:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Որտե՞ղ էին ապրում մոնղոլական ցեղերը, և ինչպիսի՞ կենցաղ էին վարում նրանք:*
2. *Ովքե՞ր էին ղեկավարում մոնղոլական ցեղերին:*
3. *Մոնղոլների մոտ տարածված էին բազմաթիվ կրոններ: Քո կարծիքով ո՞րն էր դրա պատճառը:*
4. *Քո կարծիքով ինչո՞ւ մոնղոլական տերությունը տրոհվեց: Ինչպե՞ս էին կոչվում առանձին ինքնուրույն պետությունները:*
5. *Ո՞ր ժողովուրդների փորձն օգտագործեցին մոնղոլները իրենց տերությունը կառավարելու նպատակով:*

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Քո կարծիքով ինչո՞ւ մոնղոլները Հայաստանի և Կիլիկյան հայոց թագավորության հանդեպ տարբեր վերաբերմունք ունեին:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Փորձի՛ր գնահատել կառավարման համակարգի ստեղծման գործում մոնղոլների մոտեցումը: Այդ փորձն արդյոք ունի՞ արդիական նշանակություն:

§19 | ՉԻՆԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Ընտրություն ըստ արժանիքի — պետական ծառայողների ընտրության և նշանակման համակարգ, որը հիմնված է մարդկանց արժանիքների, այլ ոչ սոցիալական ծագման վրա:

Ինքնամեկուսացում արտաքին աշխարհից — պետական քաղաքականություն, որի նպատակն է արգելել օտարերկրացիների ներթափանցումը երկիր և կանխել հնարավոր գաղութացումն ու օտար կրոնների ու մշակույթի տարածումը:

Տան արքայատոհմ — 618–907 թթ. Չինաստանում գահակալած արքայատոհմ:

Մին (նշանակում է՝ **լույս**) **կայսրություն** — գոյություն է ունեցել 1368–1644 թթ.:

Ցին կայսրություն — մանջուրների կողմից հիմնադրված կայսրություն Չինաստանում, գոյություն է ունեցել 1644–1912 թթ.:

Պագոդա — բազմահարկ աշտարակների ձևով կառուցված տաճարներ:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Յանցզյան — վաղ միջնադարում Չինաստանը վերամիավորած կայսր:

Չժու Յուանչժեն — նրա գլխավորությամբ տապալվել է մոնղոլական լուծը: Գահակալել է 1368–1398 թվականներին:

Պեկին — Մին կայսրության շրջանից մինչ օրս Չինաստանի մայրաքաղաքը:

Մանջուրներ — չինացիների հյուսիսային հարևան ցեղեր:

Երկրի միավորումը և վերելքը

Միջնադարի սկզբին Չինաստանը մասնատված վիճակում էր, սակայն դա երկար չտևեց: Հյուսիսային Չինաստանում **կայսր** հռչակված **Յանցզյանը 581 թ.** վերամիավորեց երկիրը:

Երկրի միասնությունը պահպանվեց նաև **Տան արքայատոհմի** օրոք և շարունակվեց մինչև XIII դարը: Այս ժամանակաշրջանում կառուցվեցին ճանապարհներ, ոռոգման ջրանցքներ, բազմաթիվ նոր քաղաքներ:

Տան կայսրության ժամանակաշրջանի պալատականների զարնանային զբոսանք

Ծաղկում ապրեցին արհեստները և առևտուրը: Մեծագույն նվաճումներ արձանագրեցին արվեստները և գիտությունը: Աշխարհում հայտնի շատ գյուտեր կատարվել են հենց այս ժամանակներում:

Ո՞վ և ե՞րբ միավորեց երկիրը վաղ միջնադարում:
Որքա՞ն է կառավարել Տան արքայատոհմը:

Ընտրություն ըստ արժանիքի

Միջնադարում բարելավվեց չինական պետության **կառավարման համակարգը:** Մինչ այդ պետական ծառայողները հիմնականում ազնվականների զավակներ էին և իրենց պաշտոնը ցմահ էին վարում: Ներդրված փոփոխությամբ հասարակության **բոլոր դասերին պատկանող մարդիկ** հնարավորություն ստացան ընդգրկվելու **պետական** կառավարման ապարատում:

Ստեղծվեց **ընտրություն ըստ արժանիքի համակարգը:** Ապագա ծառայողները կրթություն էին ստանում և քննությունները բարեհաջող հանձնելուց հետո անցնում էին պետական ծառայության: Լավ աշխատողներն առաջ էին քաշվում և կարող էին զբաղեցնել բարձր պաշտոններ: Փոփոխության արդյունքում պետական ծառայողների կեսը կազմեցին ոչ ազնվականների ներկայացուցիչները: Չինացիների համար ներդրվեց **հավասար հնարավորությունների սկզբունքը,** այսինքն՝ ցանկացած մարդ կարող էր դառնալ հասարակության վերնախավի անդամ:

Ի՞նչ է կոչվում կառավարման այն համակարգը, որը ստեղծվել է Չինաստանում: Պարզաբանի՛ր այդ համակարգի էությունը:

Մին կայսրությունը

Չինաստանի բնականոն կյանքը **XIII դարում խաթարեցին մոնղոլները:** Նրանց հաջողվեց գրավել երկիրը: Օտարերկրյա տիրապետությունը մեծ վնասներ հասցրեց Չինաստանին: Անկում ապրեց տնտեսությունը, քայքայվեց ոռոգման համակարգը: Միլիոնավոր չինացիներ դարձան ստրուկներ (իսկ ստրկությունը վաղուց վերացվել էր երկրում):

Ժողովուրդը ոտքի ելավ ազատագրական պայքարի և **1368 թ.** տապալեց մեկ դար տևած **մոնղոլական տիրապետությունը:** Ապստամբների զորքի հրամանատար, ծագումով գյուղացի և բուդդայական վանական **Չժու Յուանչժենը** հռչակվեց կայսր: Նա դարձավ **Մին կայսրության** հիմնադիրը:

Չինաստանը կրկին ոտքի կանգնեց և բռնեց զարգացման ուղին: Վերացվեց ստրկությունը, կրճատվեցին հարկերը: Ըստ արժանիքի ընտրության համակարգը նորից գործադրվեց:

XVI դարից սկսած՝ **արգելվեց օտարերկրացիների մուտքը** չինական պետության տարածք: Փակվեցին պետության ցամաքային և ծովային սահմանները: Այսպես Չինաստանը **ինքնամեկուսացավ արտաքին աշխարհից:** Դրա գլխավոր նպատակն էր կանխել եվրոպացի գաղութարարների և կաթոլիկ քարոզիչների ներթափանցումը:

Մին կայսրության հիմնադիր Չժու Յուանչժենը

Մոնղոլները ե՞րբ են նվաճել Չինաստանը: Որքա՞ն է տևել նրանց տիրապետությունը:

Ինչպե՞ս և ե՞րբ Չինաստանն ազատագրվեց մոնղոլական տիրապետությունից:

Ո՞վ էր Չժու Յուանչժենը, ի՞նչ կայսրություն նա հիմնադրեց:

Ի՞նչ է նշանակում ինքնամեկուսացում արտաքին աշխարհից:

Ցին կայսրության հիմնադրումը

XVII դ. կեսերին հյուսիսից Չինաստան ներխուժեցին **մանջուրական ցեղերը:** Նրանք գրավեցին մայրաքաղաք **Պեկինը** և **1644 թ.** հիմնադրեցին **Ցին կայսրությունը:**

Մանջուրները կարողացան սահուն ներգրավվել չինացիների կայսերական միջավայրի մեջ, յուրացրեցին երկրի սովորույթներն ու մշակույթը: Այդ պատճառով նրանք գահակալեցին բավական երկար ժամանակ:

Մանջուրները ե՞րբ նվաճեցին Պեկինը:

Ինչպե՞ս է կոչվում Մանջուրների հիմնած դինաստիան:

Ինչո՞ւ մանջուրներին հաջողվեց գրավել և երկարատև գահակալել Չինաստանում:

Չինական քաղաքակրթության նվաճումները

Միջնադարի չինական արվեստը, գիտությունը և տեխնիկան տվել են **համաշխարհային նշանակության արժեքներ:**

Չինաստանում **մշտապես կարևորվել է կրթական գործը:** Դպրոցներում պատրաստում էին մասնագետներ և ծառայողներ:

Կայսրերը **պետական հոգածություն էին ցուցաբերում պատմության ուսումնասիրմանը՝** պատմագրությունը դարձնելով պաշտոնական գործ: Ստեղծվեցին բազմաթիվ ձեռագիր, իսկ տպագրության գյուտից հետո՝ նաև տպագիր աշխատություններ: Հատկանշական է չինական հետևյալ առածը. **«Մի՛ մոռացիր անցյալը. այն ապագայի ուսուցիչն է»:**

Ճարտարապետները կառուցում էին շքեղ պալատներ, հասարակական նշանակության կառույցներ, ինչպես նաև **պագոդաներ:**

Չինացիները հայտնի են հատկապես իրենց **գյուտերով:** Դրանցից են **թուղթը, տպագրությունը, ճենապակին, լուցկին, վառոդը, կողմնացույցը, հեծանիվի շարժական շղթան, հրանոթը, լրագիրը** և այլն:



Երկնքի տաճարը Չինաստան, Պեկին, XV դ.

Տաճարի ներսում՝ մարմարե հենահարթակի վրա, փայտյա հսկա աղոթատեղի է՝ մոտ 30 մ լայնությամբ: Ներկերի օգնությամբ հաջողվել է ստանալ Ցին կայսրությանը բնորոշ ոճի տպավորություն: Երկնագույն հախճասալիկներով կառուցված տանիքը տաճարին անկրկնելի ու երկնային տեսք է տալիս:

երկար ժամանակ պահանջվեց, որ այդ գյուտերից շատերը հասնեն Եվրոպա կամ էլ չինացիներից բավականին ուշ ինքնուրույն հայտնագործվեն նաև Եվրոպայում:

ՊԱՏՄԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. *Դասանյութի տվյալների միջոցով հիմնավորի՛ր, որ Չինաստանը մինչև XIII դարը վերելք է ապրել բոլոր ուղղություններով:*
2. *Քո կարծիքով ինչո՞ւ Չինաստանին հաջողվեց արագ վերականգնել տնտեսությունը և զարգանալ Մին կայսրության օրոք:*
3. *Ինչո՞ւ էին չինացիները կարևորում կրթությունը:*
4. *Ինչո՞ւ էին չինացիները մեծ ուշադրություն դարձնում իրենց երկրի պատմությանը:*
5. *Փորձի՛ր մեկնաբանել «Մի՛ մոռացիր անցյալը. այն ապագայի ուսուցիչն է» արտահայտությունը:*
6. *Ի՞նչ է պագոդան:*

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խմբային քննարկման միջոցով պարզե՛ք արտաքին աշխարհից Չինաստանի ինքնամեկուսացման պատճառները և հետևանքները:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թվարկի՛ր միջնադարյան Չինաստանում կատարված գյուտերը: Համացանցի նյութերից օգտվելով՝ պարզի՛ր, թե երբ են դրանք ստեղծվել:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. *Քեզ դո՞ւր է գալիս Չինաստանում ներդրված ընտրություն ըստ արժանիքի կառավարման համակարգը: Փորձի՛ր հիմնավորել պատասխանդ:*
2. *Գնահատի՛ր և վերհանի՛ր միջնադարյան չինական մշակույթի արդիական նշանակությունը:*

§20 | ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Գուպտաների պետություն — վաղ միջնադարյան հնդկական պետություն:

Հինդուիզմ — հին հնդկական կրոնը, որը միջնադարում տիրապետող դարձավ երկրում:

Դելիի սուլթանություն — 1206 թ. Հնդկաստանում ստեղծված պետություն, որը գոյություն է ունեցել մինչև 1526 թվականը:

Մեծ Մողոլի կայսրություն — 1526 թ. Լենկ Թեմուրի թոռ Բաբուրի ստեղծած տերությունը. այդպես է կոչվել, որովհետև Բաբուրն իրեն համարում էր Չինգիս խանի հետնորդ:

Թաջ Մահալ — Ջահան շահի կողմից Ագրայում կառուցված մզկիթ–դամբարան. ճերմակության և անկրկնելի գեղեցկության համար ստացել է «Հնդկաստանի մարգարիտ» անվանումը:

Ա/Ֆ ԲԱՌԱՊԱՇԱՐ

Չանդրագուպտա — Գուպտաների պետության հիմնադիրը:

Բաբուր — Մեծ Մողոլի կայսրության հիմնադիրը:

Աքբար — նշանավոր շահ, իրականացրել է հասարակության վերափոխումներ:

Դելի — միջնադարում և ներկայումս Հնդկաստանի մայրաքաղաքը:

Ագրա — շահ Աքբարի օրոք դարձավ Հնդկաստանի մայրաքաղաք:

Գուպտաների պետությունը

Հնդկաստանը միջնադար մտավ մասնատված վիճակում: Երկիրը բաժանված էր բազմաթիվ իշխանությունների, որոնց գլուխ կանգնած էին **ռաջաները**: Հնդկաստանի հյուսիսում կառավարող ռաջաներից մեկը՝ **Չանդրագուպտան**, IV դարում Գանգես գետի հովտում ստեղծեց պետություն: Այն նրա տոհմի անունով

կոչվել է Գուպտաների պետություն: Վերջինս հզորացավ և իր սահմաններում ընդգրկեց Հնդկաստանի մեծ մասը:

Գուպտաների օրոք փոխվեց հասարակության սոցիալական կառուցվածքը: **Բրահմանների** և **քշատրիների** կաստաներն այժմ կոչվում էին **քրմերի** և **զինվորականների** դասեր: Նրանց ձեռքում էր պետական իշխանությունը: Իսկ **վայշիներն** ու **շուդրաները** ներկայացնում էին ցածր դասերը:

Հնդկաստանում այդ ժամանակ **տիրապետող կրոն** դարձավ **հինդուիզմը:** Հինդուիզմի դիցարանի գլուխ կանգնած էին երեք աստվածներ՝ **Բրահման**, **Վիշնուն** և **Շիվան**: Տարածում ուներ նաև **բուդդայականությունը:**

Վաղ միջնադարում հնդկական մշակույթը հարստացավ նոր նվաճումներով:

Վերելք ապրեցին **ճարտարապետությունը, գրականությունը, մաթեմատիկան, աստղագիտությունն** ու **բժշկությունը:**

Ճարտարապետության հռչակավոր կոթողներից են **Աջանտայի** և **Էլլուրի ժայռափոր տաճարները:** Դրանց ներսը զարդարում են գեղեցիկ որմնանկարները և քանդակները:

Այս դարաշրջանի գրականության հանճարեղ հեղինակ է բանաստեղծ **Կալիդասան**: Նրա ոգեշնչման աղբյուր են եղել հայրենի բնությունն ու ժողովուրդը:

Գուպտաների պետությունը, չնայած գոյություն ունեցավ ընդամենը երկու դար, այնուհանդերձ մեծ հետք է թողել Հնդկաստանի պատմության մեջ:

Չանդրագուպտա II արքայի պատկերով մետաղադրամ

Աջանտայի ժայռափոր տաճարից մի հատված

Ներկայացրե՛ք Հնդկաստանում տիրող վիճակը միջնադարի շեմին:

Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Հնդկաստանում Գուպտաների օրոք:

Ի՞նչ փոփոխություններ կրեց հնդկական հասարակության դասային կարգը:

Դելիի սուլթանությունը

Լենկ Թեմուրի զորքի ներխուժումը Դելի

Հաջորդ դարերի ընթացքում երկրում միասնական պետություն չկար: Հարևան մուսուլմանական երկրները XI–XII դարերում բազմիցս արշավանքներ ձեռնարկեցին Հնդկաստանի դեմ: Կենտրոնական Ասիայից Հնդկաստան մտած մուսուլման նվաճողները **1206 թ.** հիմնադրեցին մի պետություն, որը մայրաքաղաքի անունով կոչվել է **Դելիի սուլթանություն**: Շուտով սուլթանությունը տիրեց ողջ Հնդկական թերակղզուն: Երկրում սկսեց տարածվել իսլամը:

Զարգացավ երկրի տնտեսությունը: Վերելք ապրեց **ներքին և արտաքին առևտուրը,** դրա հետ կապված՝ նաև քաղաքային կյանքը:

Սակայն երկրի վերելքը շուտով ընդհատվեց: **Լենկ Թեմուրը** հսկայական զորքով **1398 թ.** ներխուժեց Հնդկաստան, գրավեց ու թալանեց Դելին: Նրա հեռանալուց հետո Հնդկաստանում սրվեց պայքարը հինդու և մուսուլման ավատատերերի միջև: Դրա հետևանքով զգալիորեն թուլացավ երկրի պաշտպանունակությունը:

Ե՞րբ է հիմնադրվել Դելիի սուլթանությունը:

Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան Հնդկաստանի ներքին կյանքում:

Քո կարծիքով ինչո՞ւ վերելք ապրեցին քաղաքները:

Հնդկաստանի համար ի՞նչ հետևանքներ ունեցավ Լենկ Թեմուրի ներխուժումը:

Մեծ Մողոլի կայսրությունը

1526 թ. Հնդկաստան արշավեց Լենկ Թեմուրի թոռ **Բաբուրը**: Նրա բանակը արդիական զենք՝ հրետանի և մարտունակ հեծելազոր ուներ: Նա պարտության

մատնեց սուլթանին, գրավեց Դելին և իրեն հռչակեց շահ: Նորաստեղծ տերությունը ստացավ **Մեծ Մողոլի կայսրություն** անվանումը:

Կայսրությունը հզորացավ և տարածապես աճեց հատկապես շահ **Աքբարի օրոք (1556–1605 թթ.):** Նա ճկուն քաղաքականություն էր վարում, որպեսզի հաշտեցնի ու համախմբի հինդուիզմի հետևորդներին և մուսուլման հնդիկներին:

Նա ծառայության էր վերցնում հնդիկ ավատատերերին, հովանավորում վաճառականներին: Նրա հովանավորությունից օգտվում էին նաև Հնդկաստանում հաստատված **հայ վաճառականները:**

Վերելք ապրեցին արհեստները, առևտուրը: Դելիում կառուցվեցին բազմաթիվ պալատներ, շենքեր: Աքբարը կառուցապատեց **երկրորդ մայրաքաղաքը՝ Ագրան**:

Հնդկական մշակույթը **վերելքի մի նոր շրջան ապրեց:** Ճարտարապետական կառույցների մեջ աչքի են ընկնում տաճարները, մզկիթները, պալատները, ամրոցները և այլն: Իրենց ահռելի չափերով հայտնի են Աքբարի կառուցած երկու պալատ–ամրոցները Դելիում և Ագրայում:

Համաշխարհային արվեստի գլուխգործոց է շահ Ջահանի օրոք կառուցված **Թաջ Մահալ** մզկիթ–դամբարանը **Ագրայում**: Շահն այն նվիրել է իր մահացած կնոջ (հայազգի) հիշատակին:

Այսպիսով՝ միջնադարում Հնդկաստանն ունեցավ վերելքի և անկման շրջաններ: Հնդկական քաղաքակրթությունը, չնայած դրան, հարստացավ նոր ձեռքբերումներով և շարունակեց իր ընթացքը պատմական հաջորդ փուլում:

Ե՞րբ և ո՞վ է հիմնադրել Մեծ Մողոլի կայսրությունը: Ինչո՞ւ է տերությունն այդպես կոչվել:

Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան Հնդկաստանում շահ Աքբարի կառավարման տարիներին:

Մեծ Մողոլի կայսրության հիմնադիր Բաբուր խանը

Շահ Աքբար

Մումթազ Մահալը և շահ Ջահանը

Թաջ–Մահալ մզկիթ–դամբարանը շահ Ջահանի հրամանով կառուցվել է Ագրայում: Այն արևելքի ճարտարապետության գլուխգործոց է: Նվիրվել է շահի հայազգի կնոջ (Մումթազ Մահալ) հիշատակին: Շինարարությունը տևել է 20 տարի և ավարտվել 1653 թ.: Դամբարանի վեհաշուք գմբեթն ունի 75 մ բարձրություն:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Հնդկական ճարտարապետության ո՞ր կոթողն է քեզ ավելի շատ դուր գալիս. հիմնավորի՛ր քո ընտրությունը:*
2. *Գծապատկերի միջոցով պարզաբանի՛ր հնդկական հասարակության դասային կառուցվածքը:*

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. *Ինքնուրույն հետազոտություն կատարելով՝ ներկայացրո՛ւ, թե վաղ միջնադարում մշակութային ի՞նչ նվաճումներ են արձանագրվել Հնդկաստանում:*
2. *Օգտվելով դասանյութից և այլ գրականությունից՝ փորձի՛ր բնութագրել շահ Աքբարին: Քեզ հայտնի պատմական ո՞ր կերպարների հետ կարող ես նրան համեմատել:*

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Փորձի՛ր գնահատել Մեծ Մողոլի կայսրության դերը Հնդկաստանի պատմության մեջ:

§21 | ՃԱՊՈՆԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Սինտո — ճապոնացիների հին կրոնը:
Հիրագանա — ճապոնական հիերոգլիֆային գրի անվանումը:
Կամիկաձե — աստվածային քամի. այսպես են ճապոնացիներն անվանել մոնղոլներից իրենց փրկած ծովամրրիկը (թայֆուն):
Սյոգուն — զինվորական առաջնորդ. նրան էր պատկանում իրական իշխանությունը Ճապոնիայում, ավելի հզոր էր, քան կայսրը:
Սամուրայ — հատուկ դասի պատկանող ռազմիկ:
Կաբուկի — ճապոնական թատրոնի տեսակ. առաջացել է XVII դ. առաջին կեսին:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Մինամոտո — Ճապոնիայի պատմության մեջ առաջին սյոգունը:
Տոկուգավա — նշանավոր ռազմական գործիչ, Տոկուգավա սյոգունների տոհմի հիմնադիրը:

Ճապոնական պետությունը վաղ միջնադարում

Ճապոնիան բազմաթիվ կղզիներից կազմված երկիր է Ասիայի արևելքում: Յուրահատուկ աշխարհագրական դիրքը և բնությունը մեծ չափով պայմանավորել են ճապոնացիների հասարակության ձևավորումն ու զարգացումը:

Առաջին պետություններն այստեղ համեմատաբար ուշ են ստեղծվել՝ **IV–VI դարերում:**

Ճապոնիայում ձևավորվեց **պետական կառավարման յուրահատուկ համակարգ**: Պետությունը ղեկավարում էր կայսրը: Արքունիքում ազդեցություն ունեցող ուժեղ և հին ազնվականական տոհմերը շուտով յուրաց-

ին պետական պաշտոնները: Մի տոհմի վերապահված էր կայսր ընտրելու իրավունքը, մյուս տոհմը կառավարում էր քրմերի դասը, մեկ ուրիշը ղեկավարում էր բանակը և այլն: Տոհմերն այդ իրավունքները դարձրին ժառանգական: Ահա թե ինչու միջնադարում տոհմերի միջև չդադարող պայքար էր ընթանում այդ իրավունքները պահպանելու կամ նորը ձեռք բերելու համար:

Ճապոնացիների կյանքում մեծ դեր ուներ հավատքը: Հին ճապոնական կրոնը կոչվում էր **սինտո:** Դրա հիմքում ընկած էր բնության ուժերի և նախնիների պաշտամունքը: Հետագայում Չինաստանից այստեղ տարածվեց բուդդայականությունը:

Զգալի էր հատկապես չինական մշակույթի ազդեցությունը ճապոնականի վրա: Մայրենի լեզվի զարգացումը հանգեցրեց չինականի հիմքի վրա **հիրագանա** կոչվող գրի ստեղծմանը:

Որտե՞ղ է Ճապոնիան: Քարտեզի վրա ցո՛ւյց տուր այն:
Ե՞րբ են այստեղ ստեղծվել առաջին պետությունները:
Ի՞նչ է սինտոն:
Ինչպե՞ս է առաջացել հիրագանա գիրը:

Ճապոնիան սյոգունների իշխանության օրոք

Մինամոտո սյոգունը

XII դ. վերջին ճապոնական ազդեցիկ տոհմերի միջև կատաղի պայքար ծավալվեց՝ երկրում վերահսկողության իրավունք ձեռք բերելու համար: Արդյունքում կայսրը **Մինամոտո** տոհմին տվեց **սյոգունի**՝ զինվորական առաջնորդի տիտղոս և **պետությունում վերահսկողության իրավունք:** Սյոգունը դարձավ ամենահզոր մարդը պետությունում: Կայսրը որոշում կայացնելիս պետք է հաշվի առներ նրա կարծիքը: Սյոգունի պաշտոնը ժառանգաբար անցնում էր տվյալ տոհմի ներկայացուցչին:

XIII դ. վերջին երկիրը կանգնեց մոնղոլական վտանգի առջև: Մոնղոլական 150–հազարանոց զորքն ափ իջավ Ճապոնիայում: Թեժ կռիվներից հետո ուժեղ ծովամրրիկը խորտակեց մոնղոլական նավատորմը: Ճապոնացիները ծովամրրիկն անվանեցին **կամիկաձե**՝

աստվածային քամի. նրանք հավատում էին, որ աստվածներն օգնեցին իրենց:

Մոնղոլական վտանգը հաղթահարելուց հետո՝ մի քանի դար շարունակ, պայքար էր ընթանում ուժեղ տոհմերի միջև սյոգունի պաշտոնի համար: Վերջապես **1603 թ. Տոկուգավան** դարձավ **սյոգուն:** Սյոգունի իշխանությունը դարձնելով ժառանգական՝ Տոկուգավաները այն պահպանեցին մինչև 1867 թվականը:

Սյոգունների իշխանության ժամանակ կրթությունը տարածվեց ճապոնական հասարակության բոլոր դասերի մեջ: Ավելացավ գրագետ մարդկանց ու մասնագետների թիվը: Դա նպաստեց գիտության և մշակույթի զարգացմանը:

Զարգացան արվեստի տարբեր ճյուղերը: Քաղաքներում առանձին թաղամասեր էին հատկացվում զվարճությունների համար: Այնտեղ կային **թատրոններ, թեյարաններ, խաղատներ, հասարակական բաղնիքներ** և այլն:

Մշակութային նոր ձևերից էր **Կաբուկի** կոչված **թատրոնը:** Դրան բնորոշ էր վառ ներկայացումը՝ երաժշտության, պարի, հանդերձների ու դիմախաղի համադրմամբ:

Տոկուգավա սյոգունը

Ի՞նչ է սյոգունը: Ե՞րբ և ո՞վ դարձավ առաջին սյոգուն: Ինչպիսի՞ գործառույթներ ուներ նա:

Ինչպե՞ս Ճապոնիան խուսափեց մոնղոլական նվաճումից: Ինչո՞ւ ճապոնացիները թայֆունն անվանեցին կամիկաձե:

Սամուրայները

Մինամոտոների օրոք Ճապոնիայում ձևավորվեց զինվորական մի դաս, որը նման էր կաստայի: Ավատատերերը իրենց կալվածքները պաշտպանելու նպատակով մանր ազնվականներից հավաքագրում էին մարտական ջոկատներ: Դրանցում ընդգրկված մարդկանց անվանեցին **սամուրայ.** բառացի նշանակում է ծառայող ռազմիկ:

Սամուրայը պաշտպանում էր տիրոջ ունեցվածքը, ապահովում էր նրա անվտանգությունը, եթե հարկ լի-

Կաբուկի թատրոնի հիմնադիր Իձումոնո Օկունի

Սամուրայ

ժամանակի ընթացքում հաստատվեցին վարքագծի նորմեր, որոնցով սամուրայը դաստիարակվում էր և, դրանք պահպանելով, ապրում մինչև մահ: Սամուրայների պատվիրանները ամրագրվել են «Ռազմիկի ուղին» կանոնագրում: Այնտեղ ամփոփված են սկզբունքներ ու կանոններ, որոնց նա անշեղորեն պետք է հետևեր իր ողջ կյանքի ընթացքում:
Հավատարմությունը, արդարամտությունը և քաջությունը *սամուրայի կարևոր արժանիքներից էին: Սամուրայը երբեք չպետք է ստեր կամ կեղծեր:*
Արժանապատիվ ապրել և պատվով մեռնել*՝ սա էր նրա կյանքի իմաստը:*

ներ՝ նաև սեփական կյանքը զոհելով: **Այսինքն՝ նրանք հավատարիմ ծառաներ էին և հուսալի թիկնապահներ:**

Զարգացած միջնադարում սամուրայների քանակը բավական աճեց: Ձևավորվեցին սամուրայների ուժեղ տոհմեր, որոնք նույնպես պայքարում էին սյոգունի տիտղոսի համար: Այդպիսին էր վերը նշված Տոկուգավա տոհմը: Տոկուգավա սյոգունների օրոք սամուրայները կազմում էին ճապոնացի տղամարդկանց ընդհանուր թվի մեկ հինգերորդը:

Ովքե՞ր էին սամուրայները: Ի՞նչ է նշանակում սամուրայ:

Ինչո՞ւ Ճապոնիան ինքնամեկուսացավ արտաքին աշխարհից

Ճապոնացիները, ի դեմս երկրում հաստատված եվրոպացի առևտրականների ու կաթոլիկ միսիոներների (քարոզիչներ), մեծ սպառնալիք տեսան իրենց պետության համար: Այդ պատճառով **1612 թ.** քրիստոնեությունը հայտարարվեց օրենքից դուրս:

Արգելվեց օտարերկրացիների մուտքը Ճապոնիա: Բացառություն արվեց միայն չինացի և հոլանդացի առևտրականների համար: Արգելվեց նաև տեղացիների ելքը այլ երկրներ:

Այսպես Ճապոնիան ինքնամեկուսացավ արտաքին աշխարհից: Ինքնամեկուսացումը տևեց մոտ երեք դար:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Զույգերով կամ խմբային քննարկման միջոցով փորձե՛ք պարզել.

1. *Ինչո՞ւ Ճապոնիան ինքնամեկուսացավ արտաքին աշխարհից: Վերհիշե՛ք, թե ուրիշ որ երկիրն է նման քաղաքականություն վարել:*
2. *Ձեր կարծիքով ի՞նչ հետևանքներ է ունեցել ինքնամեկուսացումը այդ երկրների համար:*

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Փաստերով ապացուցե՛ք, որ ճապոնական քաղաքակրթության ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել Չինաստանը:*
2. *Ներկայացրե՛ք ճապոնական պետության կառավարման համակարգը: Նշե՛ք դրա յուրահատկությունները:*
3. *Քո կարծիքով ո՞րն էր Ճապոնիայում կրթության տարածման գլխավոր պատճառը: Փորձի՛ր վերհանել դրա հետևանքները:*

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ինքնուրույն հետազոտի՛ր սամուրայի վարքականոնը. ի՞նչ կավելացնես նրա կերպարն ավելի ամբողջացնելու համար:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Վերհիշե՛ք սպարտացիների, եվրոպական ասպետների և հայ զինվորների վարքականոնի մասին ձեր գիտելիքները: Ջոյգերով աշխատանքի միջոցով վերհանե՛ք նրանց և սամուրայների բնութագրերի մի քանի նմանություններ և առանձնահատկություններ:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. *Փորձի՛ր գնահատել սյոգունության դերը Ճապոնիայի պատմության մեջ:*
2. *Քո կարծիքով ինչո՞վ է ինքնատիպ ճապոնական մշակույթը:*

§22 | ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Իկոնիայի սուլթանություն — սելջուկյան պետություն Փոքր Ասիայում 1074–1307 թթ., մայրաքաղաքը սկզբում Նիկեան էր, հետո՝ Կոնիան. այստեղից էլ՝ անվանումը:

Օսմանյան կայսրություն — օղուզ թյուրքերի կողմից հիմնված տերություն, գոյություն է ունեցել 1299–1922 թթ.:

Մանկահավաք — օսմանցիները XIV դ. կեսերին ստեղծեցին ենիչերիների զորքը, որի համար զինվորներ էին հավաքագրում հպատակ ժողովուրդների մանկահասակ տղաներից:

Կոսովոյի ճակատամարտ — սերբերի և թյուրքերի միջև 1389 թ. Կոսովոյի դաշտում տեղի ունեցած ճակատամարտ, որտեղ թյուրքերը հաղթեցին, բայց սուլթանը սպանվեց:

Քասր ե–Շիրինի պայմանագիր — Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև 1639 թ. այդ բնակավայրում կնքված հաշտության պայմանագիր:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Օղուզներ — թյուրքական ցեղեր, որոնք ապրում էին Կենտրոնական Ասիայում:

Սելջուկ — Կենտրոնական Ասիայում ապրող օղուզական ցեղի առաջնորդ:

Օսման բեյ — թյուրքական պետության հիմնադիրը:

Բուլղարիա, Սերբիա — սլավոնական պետություններ Բալկանյան թերակղզում:

Լենկ (Կաղ) Թեմուր — ծագումով մոնղոլ–թաթար, միջնադարի արյունարբու նվաճողներից. իրեն համարում էր Չինգիս խանի ժառանգը:

Մեհմեդ II — օսմանյան սուլթան, գահակալել է 1451–1481 թթ.:

Թյուրքերի նախապատմությունը

Թյուրքական ցեղերը X դարի վերջերից Կենտրոնական Ասիայից սկսեցին հայտնվել մեր տարածաշրջանում: Նրանք արաբների քարոզչությամբ ընդունել էին իսլամը: Օղուզների առաջնորդներից Սելջուկի ժառանգները **XI դ. կեսերին** գրավեցին **Իրանը** և հիմնեցին մի տերություն, որը պատմության մեջ է մտել **Սելջուկյան պետություն** անունով:

Մանազկերտի 1071 թ. ճակատամարտից հետո թյուրք–սելջուկները գրավեցին **Փոքր Ասիայի** մեծ մասը: Նրանք այստեղ ստեղծեցին **Իկոնիայի սուլթանությունը**:

Փոքր Ասիայում հաստատված թյուրքական քոչվոր ցեղերը երկար ժամանակ շարունակում էին զբաղվել անասնապահությամբ: Երկրագործությամբ, արհեստագործությամբ և առևտրով զբաղվում էին տեղաբնիկ հայերը, հույները և մյուս ժողովուրդները: Մի քանի դարի ընթացքում քոչվորները ևս անցան նստակեցության: Նրանք շփվեցին նաև տեղացիների քաղաքակրթական բարձր արժեքների հետ:

Սելջուկ արքայի քարե քանդակ
Իրան, XII–XIII դդ.
(պահպանվում է Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում)

Ովքե՞ր էին թյուրք օղուզները:

Որտե՞ղ է կազմավորվել Սելջուկյան պետությունը:

Վերհիշե՛ք՝ ե՞րբ է տեղի ունեցել Մանազկերտի ճակատամարտը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն սելջուկների համար:

Որտե՞ղ է ստեղծվել Իկոնիայի սուլթանությունը:

Օսմանյան պետության հիմնադրումն ու ընդարձակումը

Իկոնիայի սուլթանության անկման շրջանում նրա տարածքում առաջացան թյուրքական բազմաթիվ իշխանություններ: Օղուզական ցեղերից մեկի առաջնորդ **Օսման բեյը** Փոքր Ասիայի հյուսիս–արևմուտքում հիմնադրեց մի փոքր իշխանություն: Նա **1299 թ.** իրեն անկախ հայտարարեց Իկոնիայի սուլթանից և սկսեց ընդլայնել նորաստեղծ պետության սահմանները:

Օգտվելով Բյուզանդիայի թուլացումից՝ օսմանցիներն անցան **Դարդանելի նեղուցը** և սկսեցին Բալկանյան թերակղզու նվաճումը:



Օսմանյան կայսրության կազմավորումը

Բյուզանդիան, Բուլղարիան և **Սերբիան** չկարողացան միավորել իրենց ուժերը և համատեղ հանդես գալ թշնամու դեմ: Սա հնարավորություն տվեց թյուրքերին առանձին–առանձին պարտության մատնելու քրիստոնյա երկրներին:

Առաջին հարվածը նրանք հասցրին Սերբիային: **Կոսովոյի դաշտում 1389 թ.** տեղի ունեցած **ճակատամարտում** սերբերը պարտություն կրեցին: Իսկ **1396 թ. օսմանյան** բանակը ծանր պարտության մատնեց հունգարներից, բուլղարներից և արևմտաեվրոպական ասպետներից հավաքագրված զորքին և գրավեց Սերբիան ու Մակեդոնիան:

Ո՞վ և ե՞րբ է հիմնադրել օսմանյան պետությունը:

Թյուրքերը ո՞ւմ տարածքների հաշվին էին ընդարձակում իրենց պետությունը: Ինչո՞ւ օսմանցիներին հաջողվեց պարտության մատնել Բալկանյան թերակղզու երկրներին:

Կոստանդնուպոլսի գրավումը

Թյուրքերը 1402 թ. ծանր պարտություն կրեցին Կենտրոնական Ասիայից արշաված նոր նվաճողի՝ **Լենկ Թեմուրի** զորքերից: Միառժամանակ օսմանյան պետությունը անկում ապրեց: Բյուզանդիան չկարողացավ օգտվել այդ առիթից և թյուրքերին վտարել իր տարածքներից: Օսմանցիներին հաջողվեց վերականգնել իրենց տրոհված պետությունը:

Որոշ ժամանակ անց թյուրքերը անցան վճռական գործողությունների Բյուզանդիայի մայրաքաղաքը նվաճելու համար: Օսմանյան բանակը սուլթան **Մեհմեդ II**–ի գլխավորությամբ պաշարեց և **1453 թ. մայիսի 29**–ին գրավեց **Կոստանդնուպոլիսը**:

Ե՞րբ և ի՞նչ դեպքերից հետո թուրքական պետությունը անկում ապրեց: Ո՞ր սուլթանը գրավեց Կոստանդնուպոլիսը և ե՞րբ:

Օսմանյան կայսրությունը

Հռոմեական և Բյուզանդական կայսրությունների մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը դարձավ թուրքական տերության՝ **Օսմանյան կայսրության** մայրաքաղաքը:

XVI դ. թուրքերը գրավեցին Միջագետքը, Ասորիքը, Պաղեստինը, Հյուսիսային Աֆրիկան, Բալկանյան թերակղզին և Ղրիմը:

Արևելքում օսմանցիները բախվեցին **Իրանի հետ**: Միջագետքին և Հայաստանին տիրելու համար սկսվեցին թուրք–պարսկական երկարատև պատերազմներ: Ի վերջո **Քասր ե–Շիրինում 1639 թ.** կնքվեց հաշտության **պայմանագիր**: Իրաքը, Արևմտյան Հայաստանը և Արևմտյան Վրաստանը անցան Թուրքիային, իսկ Արևելյան Հայաստանը՝ Իրանին:

Այսպես ձևավորվեց հսկայածավալ Օսմանյան կայսրությունը:

Մեհմեդ II սուլթանը

Ներկայացրո՛ւ թուրք–պարսկական պատերազմների արդյունքները: Քարտեզի վրա ցո՛ւց տուր Օսմանյան կայսրության տարածքը, թվարկի՛ր զավթված երկրները:

Կառավարման համակարգը

Օսմանյան պետության գլուխ կանգնած էր բարձրագույն իշխանությամբ օժտված **սուլթանը,** որը համարվում էր «Աստծո ստվերը երկրի վրա»: Նրա անձն ու իշխանությունը սրբազան և անձեռնմխելի էին: Քաղաքական ճգնաժամերից խուսափելու համար օրենքով թույլատրվեց, որպեսզի գահ բարձրացող թագաժառանգը սպանի իր եղբայրներին:

Պետության երկրորդ դեմքը **Մեծ վեզիրն** էր: Նա էր նշանակում բարձրաստիճան պաշտոնյաներին, վարում արտաքին կապերը, տնօրինում երկրի վարչաքաղաքական և ռազմական ոլորտները:

Կարևոր հարցեր քննարկելու համար հրավիրվում էր **Բարձրագույն խորհուրդ** (**դիվան**), որի բոլոր անդամներին նշանակում էր սուլթանը:

Կարգավորվեցին ավատատիրական հարաբերությունները. ավատը տրվում էր ռազմական ծառայության դիմաց: Մինչև XVII դարի սկզբները թուրք ավատատերերի եկամտի գլխավոր աղբյուրն էր ռազմավարը:

Կայսրության տարածքը բաժանված էր **նահանգների (վիլայեթ)**, որոնց կառավարիչները պատերազմի ժամանակ նաև նահանգի զորքերի գլխավոր հրամանատարներն էին:

Բացատրի՛ր սուլթան, Մեծ վեզիր և Բարձրագույն խորհուրդ հասկացությունները:

Փորձի՛ր գծապատկերի տեսքով ներկայացնել Օսմանյան կայսրության կառավարման համակարգը:

Վարչական ինչպիսի՞ կառուցվածք ուներ թուրքական տերությունը:

Ժողովուրդների վիճակը կայսրությունում

Իսլամական մոլեռանդությամբ լեցուն թուրքերը հատկապես քրիստոնյա հպատակների համար ստեղծում էին կյանքի ծանր պայմաններ: Որոշ չափով տանելի վիճակ կար մայրաքաղաք Կոստանդնուպոլսում (կրճատ՝ Կ. Պոլիս): Այստեղ գործում էին **հունական** և **հայկական** (ստեղծվեց 1461 թ.) պատրիարքություն-

ները, որոնք տնօրինում էին կայսրության հույն և հայ հպատակների կրոնական գործերը:

Նվաճումների ժամանակ և հետագայում թուրքերն ամենուր սփռում էին մահ և ավեր: Եկեղեցիները վերածում էին մզկիթների, ավատատերերից խլում էին նրանց հողատարածքները:

Իսկական չարիք էր այսպես կոչված **մանկահավաքը:**

Այսպիսով՝ թուրքերն իրենց զավթած երկրներում հաստատեցին բռնակալական համակարգ:

Ինչպիսի՞ քաղաքականություն էին վարում թուրքերը նվաճված ժողովուրդների և երկրների նկատմամբ:

Պարզաբանի՛ր մանկահավաք երևույթը, արտահայտի՛ր քո վերաբերմունքը դրա նկատմամբ:

Քրիստոնյաները և մյուս ոչ մուսուլման ժողովուրդները անհավասար վիճակում էին թուրքերի համեմատ: Նրանք ավելի շատ հարկեր էին վճարում, քան մուսուլմանները: Դատարանը թուրքերի դեմ նրանց վկայությունը չէր ընդունում: Նրանք չէին կարող զենք կրել, ձիով երթևեկել: Նրանց տները թուրքերի տներից բարձր չպետք է լինեին. կային բազմաթիվ այլ արգելքներ ու սահմանափակումներ:

ՊԱՏՄԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. *Ներկայացրու՛ օսմանյան պետության ընդարձակման գործընթացը ժամանակագրական և տարածական առումներով:*
2. *Բնութագրի՛ր և համեմատի՛ր Օսմանյան կայսրության և քեզ ծանոթ այլ տերությունների կառավարման համակարգերը:*

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քո կարծիքով ինչո՞ւ քոչվոր թյուրքական ցեղերին հաջողվեց գրավել Իրանը, Միջագետքը, Հայաստանը և Փոքր Ասիան:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. *Քո կարծիքով արադարացի՞ էր թուրքերի վերաբերմունքը ոչ թուրք ժողովուրդների հանդեպ:*
2. *Համաձա՞յն ես գերմանացի պատմաբան Հենրիխ Գելցերի հետևյալ դատողության հետ.*

«Մանազկերտի սարսափելի պարտության օրը բյուզանդական մեծ պետության մահվան օրն էր... և թափառական թուրքը հին հռոմեական փառահեղության ավերակների վրա հաստատեց իր վրանը»:

§23 | ԻՐԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Սասանյան Իրան — պետություն Իրանում 226–651 թթ., այդպես է կոչվել իշխող արքայատոհմի՝ Սասանյանների անունով:

Քադիսիայի ճակատամարտ — 637 թ. արաբական և իրանական բանակների միջև տեղի ունեցած արյունալի ճակատամարտ, որը դրեց Սասանյան Իրանի կործանման սկիզբը:

Իսլամական մշակույթ — ստեղծվել է վաղ միջնադարում իրանական մշակույթի հենքի վրա արաբների և իրանցիների կողմից:

Սեֆյան պետություն — միջնադարի ավարտին Իրանում ստեղծված պետություն. գոյություն է ունեցել 1502–1722 թթ.:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Արտաշիր — Սասանյան Իրանի հիմնադիր արքան:

Պարսք — Իրանի հայտնի երկրամասերից մեկը, պարսիկների բնօրրանը:

Տիզբոն — Սասանյան Իրանի մայրաքաղաքը:

Ֆիրդուսի — պարսիկ աշխարհահռչակ բանաստեղծ:

Իսմայիլ — Սեֆյան պետության հիմնադիր շահը:

Սասանյան Իրանը

Պարթևական թագավորությունը III դ. սկզբներին բավականին թուլացած վիճակում էր: Իրանի հարավում գտնվող **Պարսքը** անկախացել էր պարթև Արշակունիներից: Այստեղ իշխում էր **Սասանյան տոհմը**: Նրա ներկայացուցիչ Արտաշիրը գահընկեց արեց պարթևական վերջին արքային և **226 թ.** մայրաքաղաք հռչակված Տիզբոնում թագադրվեց:

Այսպես հաստատվեց Սասանյանների արքայատոհմի իշխանությունը Իրանում: Գերակշռող ժողովուրդը պարսիկներն էին, այդ պատճառով տերությունը անվանում են նաև **Սասանյան Պարսկաստան:** Նոր արքայատոհմը ցանկանում էր վերականգնել Աքեմենյան աշխարհակալությունը:

Հռոմեական և Սասանյան տերությունների միջև սկսվեց երկարատև պայքար տարածաշրջանում գերիշխանության համար: Փոփոխական հաջողություններով այն շարունակվեց մի քանի դար: Հռոմեա–պարսկական հակամարտությունը Բյուզանդիայի կազմավորումից հետո վերածվեց պարսկա–բյուզանդականի:

Արևելքում և արևմուտքում վարած նվաճողական պատերազմների շնորհիվ Սասանյան գահակալները ստեղծեցին ընդարձակ կայսրություն: VII դ. սկզբին տերության տարածքը մոտ 3 մլն քառ. կմ էր, իսկ բնակչության թիվը հասնում էր 30 միլիոնի:

Ե՞րբ և ո՞ւմ գլխավորությամբ ստեղծվեց Սասանյան տերությունը:
Որո՞նք էին Պարթև Արշակունյաց պետության անկման պատճառները:

Միջնադարյան հասարակությունը Իրանում

Սասանյան Իրանում ձևավորվեց ավատատիրական հասարակություն: Տերության բնակչությունը բաժանված էր չորս դասերի՝ **քրմեր**, **ռազմիկներ**, **գրագիրներ** և **հարկատու դաս** (գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ, այլադավաններ): Անցումը ցածր դասից բարձրին հնարավոր էր միայն արքայի որոշմամբ:

Տնտեսության մեջ գերակշռում էր ազատ գյուղական համայնքների աշխատանքը: Պետության ներքին եկամտի հիմնական աղբյուրը **հողային հարկն** էր: Այլադավան բնակչությունից գանձվում էր նաև **գլխահարկ**:

Մեծ եկամուտ էր ապահովում **արտաքին առևտուրը**: Իրանի տարածքով էր անցնում Արևելքը Արևմուտքին կապող նշանավոր **Մետաքսի ճանապարհը**:

Տերության պաշտոնական կրոնը **զրադաշտականությունն** էր: Գլխավոր պաշտամունքի առարկան կրակն էր: Քրմերը իրականացնում էին նաև դատաիրավական և կրթական գործառույթներ:

Իրանում ձևավորվել էին բազմաթիվ **քրիստոնեական** համայնքներ: Սասանյանները ապաստան էին տալիս Հռոմեական կայսրությունում հալածվող քրիստոնյաներին, որպեսզի դաշնակիցներ ձեռք բերեն ընդդեմ կայսրության: Իսկ երբ քրիստոնեությունը դար-

Զրադաշտականության Լռության աշտարակը



Ֆարավահար՝ զրադաշտականության խորհրդանիշը

ձավ Հռոմի պետական կրոն, Սասանյանները սկսեցին հովանավորել և աջակցել **նեստորական** ու **միաբնակ քրիստոնյաներին**, որոնք չէին ենթարկվում Հռոմի եկեղեցուն:

Ե՞րբ են Իրանում հաստատվել ավատատիրական հարաբերություններ:
Ի՞նչ դասերի էր բաժանված բնակչությունը:
Ո՞րն էր Իրանի պետական կրոնը:

Իրանի նվաճումը արաբների կողմից

Սասանյան տերությունը VII դ. 20–ական թթ. սկսեց թուլանալ: Ռազմական և քրմական ազնվականությունը դրսևորում էին կենտրոնախույս ձգտումներ, չէին ենթարկվում արքային: Պետության միասնությունը խաթարվել էր:

Ահա այսպիսի իրադրությունում հայտնվեց նոր արտաքին թշնամի՝ սրընթաց ուժ հավաքող Արաբական խալիֆայությունը: Սիրիայի **Քադիսիա** կոչվող վայրում **637 թ.** տեղի ունեցավ վճռական ճակատամարտ: Արաբները ջախջախիչ պարտության մատնեցին պարսկական բանակին: Դրանից հետո արաբները գրավեցին և հիմնահատակ ավերեցին Տիզբոնը, որն այլևս չվերականգնվեց: Բնակչության մեծ մասը կոտորվեց, իսկ մնացածին ստրկացրին:

Մի քանի տարվա ընթացքում ամբողջ Իրանը նվաճվեց արաբների կողմից: Այսպես կործանվեց ժամանակի գերտերություններից մեկը: **Երկիրն ընկավ օտարների՝ դարեր տևած տիրապետության տակ**:

Փորձի՛ր պարզաբանել Սասանյան Իրանի թուլացման պատճառները:
Ո՞ր ճակատամարտը վճռական նշանակություն ունեցավ Սասանյանների անկման գործում:
Ե՞րբ Իրանը նվաճվեց արաբների կողմից:

Երկրի իսլամացումը

Արաբները շատ արագ յուրացրին Իրանը: Այստեղ տարածվեց իսլամը: Երկրի բնակչության գերակշռող մասն ընդունեց իսլամ՝ **շիա դավանանքով:** Արաբ նվաճողները իրենցից ավելի զարգացած իրանցիներին պարտադրեցին կրոնը, լեզուն և գիրը: Իսլամն աս-

տիճանաբար դուրս մղեց հին պարսկական կրոնը և արգելեց քրիստոնեության տարածումը Իրանում:

Արաբները պետական կառավարման համակարգում ներգրավեցին մեծ թվով իրանցի պաշտոնյաների:

Իրանի հարուստ մշակույթն իր հզոր ազդեցությունն ունեցավ նոր՝ **իսլամական մշակույթի** ձևավորման գործում: Պարսիկ հեղինակները մշակեցին իսլամական աստվածաբանության և իրավագիտության հիմունքները:

Պարսկալեզու գրականությունը նոր պայմաններում համաշխարհային նշանակության արժեքներ ստեղծեց: Հայտնի հեղինակներ են **Ռուդաքին, Ֆիրդուսին** և **Օմար Խայամը**: Մեծ ճանաչում ունի հատկապես Ֆիրդուսու **«Շահնամե»** դյուցազներգությունը:

Ֆիրդուսի

Բուռն վերելք ապրեց նաև **գիտությունը:** Բժշկության բնագավառում **Իբն Սինայի (Ավիցեննա)** աշխատությունները մինչ օրս չեն կորցրել իրենց նշանակությունը: Զարգացավ նաև պարսկալեզու պատմագրությունը:

Իրանը թեև օտարների իշխանության ներքո էր, սակայն **կարողացավ պահպանել իր ազգային ինքնությունը, մշակույթը և դարավոր ավանդույթները:** Ավելին՝ օտարները ենթարկվեցին իրենց կողմից նվաճվածների քաղաքակրթական ազդեցությանը և զարգացում ապրեցին նրանց շնորհիվ: Իսկ պարսիկ ժողովրդի նոր կրոնը՝ իսլամը, Իրանում ազգայնանալով, ձեռք բերեց նոր դիմագիծ: Միաժամանակ արաբներն ու իսլամը նոր շունչ հաղորդեցին Իրանին:

Իրանի մշակույթի ի՞նչ հայտնի գործիչների գիտես: Քո կարծիքով ո՞վ է նրանցից ամենանշանավորը:

Անկախ պետության վերականգնումը Իրանում

Արաբներից հետո Իրանում գերիշխանություն հաստատեցին թյուրքալեզու ցեղերը, հատկապես թյուրքսելջուկները: Ապա հայտնվեցին մոնղոլները: Իրանի համար ծանր հետևանքներ ունեցավ Լենկ Թեմուրի կարճատև նվաճումը: Այնուհետև Իրանին տիրեցին կարա–կոյունլու և ակ–կոյունլու թուրքմենական ցեղերը: Սակայն երկրի ազնվականական տները չէին

Շահ Իսմայիլ
(ֆրանսիացի ճանապարհորդ և աշխարհագրագետ Անդրե Թևեի գրքից, 1584 թ.)

դադարեցրել պայքարը իրանական անկախ պետականությունը վերականգնելու համար:

Ատրպատականի Արդաբիլ քաղաքում ազդեցիկ ուժ էր դարձել թյուրքական ծագում ունեցող **Սեֆյաններ-ի տոհմը**: Նրանց առաջնորդ **Իսմայիլը 1502 թ.** պարտության մատնեց ակ–կոյունլուներին և գրավեց **Թավրիզ** քաղաքը:

Իսմայիլն իրեն հայտարարեց շահնշահ (արքայից արքա): Շիիզմը հռչակվեց պետական կրոն, իսկ պարսկերենը դարձավ պետական լեզու:

Նոր հարստությունը ձեռնամուխ եղավ իրանական հողերի վերամիավորմանը և նոր տարածքների նվաճմանը: Տարածաշրջանում գերիշխելու համար Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև տեղի ունեցան բազմաթիվ պատերազմներ:

Այսպես ուշ միջնադարում Իրանում կազմավորվեց **Սեֆյանների պետությունը**:

Թվարկե՛ք Իրանում իշխանություն հաստատած օտար նվաճողներին:
Ո՞ւմ շնորհիվ և ե՞րբ վերականգնվեց անկախ իրանական պետությունը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. *Գծապատկերի տեսքով ներկայացրո՛ւ Սասանյան Իրանի դասային կառուցվածքը: Համեմատի՛ր այն Հնդկաստանի դասային կառուցվածքի հետ:*
2. *Փաստերով ցո՛ւյց տուր, որ Սասանյան Իրանը իրոք ժամանակի գերիզոր պետություններից էր:*
3. *Վերհանի՛ր միջնադարի իրանական մշակույթի որոշ առանձնահատկություններ:*

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ինքնուրույն հետազոտի՛ր և ներկայացրո՛ւ Իրանի միջնադարյան գիտության հայտնի որևէ հեղինակի գործունեությունը:

ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Փորձի՛ր պարզաբանել և գնահատել իրանական ժողովրդի կենսունակության հիմքերը:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Արևմտահռոմեական կայսրությունը V դարի վերջին կործանվեց: Այսպես Եվրոպայում անկում ապրեց անտիկ հասարակությունը, և սկսվեց միջնադարյան կամ ավատատիրական հասարակության ձևավորումը: Մինչև ժողովուրդների մեծ գաղթը Եվրոպայում կար մեկ պետություն՝ Հռոմեական կայսրությունը: Մեծ գաղթը և բարբարոսների նվաճումները հիմք դարձան ժամանակակից եվրոպական պետությունների և ժողովուրդների ձևավորման համար:

2. Օգտվելով Արևմտահռոմեական կայսրության անկումից՝ ֆրանկները Քլոդվիգի առաջնորդությամբ Հյուսիսային Գալլիայում հիմնել էին թագավորություն: Ֆրանկական պետությունը իր հզորության գագաթնակետին հասավ Կարլոս Մեծի օրոք: Սակայն նրա մահից հետո տերությունը տրոհվեց երեք մասի, որոնց հիման վրա ձևավորվեցին ներկայիս Ֆրանսիան, Գերմանիան և Իտալիան:

3. Բյուզանդիայի կայսր Հուստինիանոս I–ը փորձեց վերականգնել երբեմնի միասնական Հռոմեական կայսրությունը: Սակայն նրա մահից հետո կայսրությունը կորցրեց իր նախկին հզորությունը և տարածքի մի մասը: VII դարում պատմության թատերաբեմ իջած արաբներին հաջողվեց գրավել Բյուզանդիայի տարածքների զգալի մասը:

4. Բյուզանդիան կրկին զորեղացավ Հայկական (Մակեդոնական) արքայատոհմի օրոք: Այս ժամանակաշրջանում աննախադեպ զարգացման հասավ բյուզանդական մշակույթը: XI դ. երկրորդ կեսին Բյուզանդիայի դրությունը կրկին վատացավ: Իսկ խաչակրաց չորրորդ արշավանքի հետևանքով Բյուզանդիան տրոհվեց և թուլացավ:

Օսմանյան թուրքերը կործանեցին թուլացած կայսրությունը:

5. Վաղ միջնադարում արևելյան սլավոնները նախնադարից անցում կատարեցին ավատատիրական կարգերին: Ստեղծվեց միասնական պետություն՝ Հին Ռուսիան: XIII դ. առաջին կեսին Հին Ռուսիան մասնատված էր և չկարողացավ դիմագրավել մոնղոլ–թաթարների նվաճումները և ընկավ նրանց տիրապետության տակ: XIV դարում ուժեղացավ Մոսկվայի իշխանությունը, որն էլ գլխավորեց երկրի միավորման և անկախության վերականգնման համար պայքարը: XV–XVI դարերում կազմավորվեց և սկսեց հզորանալ ռուսական պետությունը՝ Ռուսաստանը:

6. XI դ. վերջին խաչակրաց առաջին արշավանքով սկսվեց խաչակրաց շարժումը: Այն տևեց մինչև XIII դ. վերջը: Խաչակրաց դարաշրջանում եվրոպացիները մոտիկից ծանոթացան արևելյան մշակույթին և իրենց երկրներ տարան մշակութային շատ արժեքներ: Սերտացան Արևմուտք–Արևելք շփումները:

7. Բրիտանիայում անգլերի և սաքսերի ցեղերը վաղ միջնադարում ստեղծել էին մի քանի թագավորություններ: Դրանք 829 թ. միավորվեցին մեկ պետության մեջ: Միավորված պետությունը այդ ժամանակից կոչվեց Անգլիա: XIV դարի վերջից Եվրոպայում ավատատիրական հասարակությունը սկսել էր անկում ապրել: Սակայն հասարակության կյանքում տեղի ունեցան որոշ փոփոխություններ, որոնք հնարավորություն տվեցին վերականգնելու տնտեսությունը: Առաջացավ նոր տիպի պետություն՝ դասային մի–

ապետությունը: Եվրոպայի տարբեր երկրներում XVI դարը այսպես կոչված Ռեֆորմացիայի (վերափոխում) ժամանակաշրջանն էր:

8. Ֆրանսիա պետությունն առաջացել է Վերդենի դաշնագրով տեղի ունեցած Կարոլինգյան տերության բաժանման հիման վրա: XII դարի վերջերից Ֆրանսիայի թագավորները ձեռնամուխ եղան իրենց իշխանության ամրապնդմանը և երկրի միավորմանը: Լյուդովիկոս IX–ի օրոք Ֆրանսիայում ուժեղացավ թագավորական իշխանությունը: Շուտով ձևավորվեց նաև դասային միապետություն: Անգլո–ֆրանսիական դարավոր տարածքային հակամարտությունը վերածվեց Հարյուրամյա պատերազմի:

Միջնադարի ավարտին Ֆրանսիան Եվրոպայի ամենաուժեղ ազգային պետությունն էր:

9. Վերդենի դաշնագրով բուն գերմանական հողերը բաժին հասան Կարլոս Մեծի թոռ Լյուդովիկոսին: Շուտով առաջացավ Գերմանական պետությունը, որը հավակնում էր դառնալու Արևմտահռոմեական կայսրության ժառանգորդը: Ստեղծվեց Սրբազան հռոմեական կայսրությունը: Մինչև XIII դարը Գերմանիան Եվրոպայի ամենաուժեղ պետությունն էր: Այստեղով էին անցնում Եվրոպայի բոլոր կարևոր առևտրական ուղիները: Գերմանիայում ձևավորվեցին մի քանի քաղաքային միություններ: Դրանցից կարևոր դեր ուներ Հանզայի միությունը:

Միջնադարի ավարտին Գերմանիան մասնատված վիճակում էր:

10. Երկար ժամանակ Եվրոպա–Հնդկաստան առևտրական կապերն իրագործվում էին Միջերկրական ծովով և ցամաքային ճանապարհներով: Թուրքական նվաճումների հետևանքով Հնդկաստան տանող ուղիները վտանգավոր էին դարձել: Այդ պատճառով եվրոպացիները փորձում էին գտնել Հնդկաստան տանող այլ ճանապարհներ: Այսպես սկսվեց Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջանը: Երբ եվրոպացիները հայտնաբերեցին Ամերիկան, այնտեղ ապրում էին բազմաթիվ ցեղեր, որոնց նրանք անվանեցին հնդկացիներ: Գոյություն ունեին մայաների, ացտեկների և ինկաների զարգացած քաղաքակրթությունները, որոնք կարևոր հետք են թողել մարդկային քաղաքակրթության պատմության մեջ:

11. Արաբական թերակղզում բնակվող արաբական ցեղերը VII դ. առաջին կեսին ստեղծեցին միասնական պետություն: Առաջացավ և տարածում գտավ նոր կրոնը՝ իսլամը: Պետության գլուխ կանգնած էր խալիֆան, որն իր ձեռքում էր կենտրոնացրել աշխարհիկ և հոգևոր ամբողջ իշխանությունը: Վերելք ապրեց ու մեծ նվաճումների հասավ արաբական մշակույթը:

12. Ասիական տափաստաններում ապրող մոնղոլական ցեղերը զբաղվում էին քոչվորական անասնապահությամբ և անընդհատ տեղաշարժվում էին: Կարճ ժամանակում նրանք ստեղծեցին պետություն, որն ընդգրկում էր հսկայական տարածքներ: Մոնղոլներն արագորեն հարմարվեցին նոր միջավայրին և փոխ առան պետական կառավարման տեղական ավանդույթները՝ իրանական, չինական և այլն: Սակայն նրանց տերությունը կարճատև կյանք ունեցավ:

13. Վաղ միջնադարում Չինաստանը վերամիավորվեց: Մոնղոլական նվաճումները մի որոշ ժամանակ խաթարեցին երկրի բնականոն կյանքը: Չինաստանի պատմության

մի առանձնահատուկ շրջան սկսվեց XVI դարից: Միջնադարի չինական մշակույթը տվեց համաշխարհային նշանակության արժեքներ:

14. Միջնադարում Հնդկաստանի պատմության մեջ եղան վերելքի և անկման շրջաններ: Հարևան մուսուլմանական երկրների նվաճումների արդյունքում որոշակիորեն կերպափոխվեց հնդկական հասարակությունը: Հնդկական մշակույթը շարունակեց զարգանալ և հարստացավ նոր ձեռքբերումներով:

15. Յուրահատուկ աշխարհագրական պայմանները, ինչպես նաև հարևան Չինաստանի ազդեցությունը մեծ դեր են խաղացել Ճապոնիայի միջնադարյան հասարակության ձևավորման և զարգացման գործում: Ճապոնիան կարողացավ ստեղծել ինքնատիպ ու զարգացած մշակույթ:

16. Փոքր Ասիայի հյուսիս–արևմուտքում 1299 թ. թյուրքական ցեղերը հիմնադրեցին մի փոքր իշխանություն: Ժամանակի ընթացքում այն աճեց և դարձավ կայսրություն: Թուրքերն իրենց զավթած երկրներում հատկապես քրիստոնյա հպատակների համար ստեղծում էին կյանքի ծանր պայմաններ:

17. Սասանյանների արքայատոհմը 226 թ. գրավեց իշխանությունը Իրանում: Նոր արքայատոհմը ցանկանում էր վերականգնել Աքեմենյան աշխարհակալությունը: Սակայն տերությունը VII դ. կեսերին թուլացավ և նվաճվեց արաբների կողմից, իսկ որոշ ժամանակ անց իսլամացավ: Արաբներից հետո Իրանում գերիշխանություն հաստատեցին թյուրքալեզու ցեղերը, ապա հայտնվեցին մոնղոլները: Սակայն երկրի ուժեղ ազնվականական տները կարողացան XVI դ. սկզբին վերականգնել իրանական անկախ պետականությունը:

ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԱՀԽԱՐՀ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

7–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Համակարգչային ձևավորումը՝ Գոհար Գրիգորյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարիամ Կանայանի
Խմբագիր և սրբագրիչ՝ Նվարդ Փարսադանյան

Օգտագործված նկարներ՝ «Զանգակ» հրատարակչության արխիվ

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 11 տպ. մամուլ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak